ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7

ՄԱՍ 1

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

7-րդ դասարանի դասագիրք

Մաս 1

Խմբագրությամբ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ և

պրոֆ. Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2019

ՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72
Հ 282

Հ 282 Հայոց պատմություն (Միջին դարեր):
7-րդ դասարանի դասագիրք: Մաս 1 /Բ. Հարությունյան,
Հ. Մարգարյան, Ա. Շահնազարյան, Վլ. Բարխուդարյան,
Ի. Ղարիբյան, Պ. Հովհաննիսյան/ – Եր., «ՄԱՆՄԱՐ», 2014. - 104 էջ:

Դասագրքի հեղինակներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Բ. Հ. Հարությունյան** – ներածություն, թեմա՝ 1, 2, 5

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Հ. Գ. Մարգարյան** – թեմա՝ 3, 4 (§ 1, 2), 8, 9

Պատմ. գիտ. թեկն., դոցենտ **Ա. Ի. Շահնազարյան** – թեմա՝ 4 (§ 3), 7, 12

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վլ. Բ. Բարխուդարյան** – թեմա՝ 6

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ի. Գ. Ղարիբյան** – թեմա՝ 10, 11 (§ 1, 2)

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր **Պ. Հ. Հովհաննիսյան** – թեմա՝ 11 (§ 3)

Դասագրքի մեթոդական աշխատանքներին մասնակցել են
Ա. Գյուլբուդաղյանը, **Ք. Յախշյանը, Ա. Շահնազարյանը** և
Վ. Պարսամյանը:

ISBN 978-9939-62-111-1

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72

© Հարությունյան Բ., Մարգարյան Հ., Շահնազարյան Ա.,
Բարխուդարյան Վլ., Ղարիբյան Ի., Հովհաննիսյան Պ., 2014
© «ՄԱՆՄԱՐ», 2014
© ԴՏՀՏՇՀ, 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«...Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ, ...թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չիաառնենք»:

Եղիշե

Պատանի՛ բարեկամներ

Անցյալ ուսումնական տարում դուք ծանոթացաք հայոց պատմությանը՝ վաղնջական ժամանակներից մինչև Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակվելը: Դուք իմացաք, որ հայերը հնդեվրոպական ժողովուրդ են և տեղաբնիկ, քանի որ հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհում և նրան հարակից տարածքներում: Համոզվեցիք, որ ներկայացուցիչներն եք թեկուզ և քանակով ոչ շատ ստվար, սակայն մեծագործություններ կատարած մի ժողովրդի, որը կազմավորվել է Երասխ, Եփրատ, Տիգրիս, Հալիս և Ճորոխ գետերի ավազաններում՝ առնվազն Ք. ա. 2-րդ հազարամյակում: Հայ ժողովուրդը կամրջել է Արևելքն ու Արևմուտքը, ազդել հարևան քաղաքակրթությունների վրա և ազդվել դրանցից: Նա ստեղծել է հոգևոր ու նյութական հզոր մշակույթ, որի մեծարժեք գանձերը կարող են պատիվ բերել ամեն մի ժողովրդի: Հելլենիզմի դարաշրջանում Տիգրան Մեծը հիմք է դրել հայկական հզոր տերության:

Մեծ Հայքի թագավորությունը IV դ. Առաջավոր Ասիայի երրորդ հզոր ուժն էր, սակայն այդ դարի վերջերին, քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, թուլացավ, իսկ 387թ. բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Հայ Արշակունիների թագավորությունը 428թ. ընկավ, և Պարսկաստանի գերիշխանության ներքո հայտնված Արևելյան

Հայաստանը վերածվեց, թեկուզ և լայն ինքնավարություն ունեցող, պարսկական մարզի: Սակայն հայ ժողովուրդը միավորված էր նոր հզոր ուսմունքով՝ քրիստոնեությամբ, որը 301թ. աշխարհում առաջինն ընդունեց որպես պետական կրոն: Հայ ժողովուրդն օտար տիրապետությանը հակադրեց մի այնպիսի հզոր զենք, ինչպիսին հայոց գրերն էին: Հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը կաթողիկոս Սահակ Պարթևի և Վռամշապուհ թագավորի գործուն աջակցությամբ 405թ. ստեղծեց հայոց այբուբենը, որը, գործնականում առանց փոփոխվելու, արդեն 1600 տարուց ավելի դարձել է հայոց մշակույթի զարգացման հզոր լծակ և հայ ժողովրդի ազգային դիմագիծն անխաթար պահպանող մեծագույն միջոց:

Հայ ժողովուրդը չհաշտվեց իր անկախությունը կորցնելու մտքի հետ: V-IX դարերը հանուն երկրի անկախության վերականգնման մղած պայքարի ժամանակաշրջան էին: Անկախության վերականգնման տատասկոտ ճանապարհին հայերը նշանակալից հաջողություններ արձանագրեցին, սակայն և ծանր պարտություններ ունեցան: Վարդան Մամիկոնյանը՝ Ավարայրի դաշտում, իսկ Վահան Մամիկոնյանն Ակոռիում, Ներսեհապատում և Ճարմանայի դաշտում գլխավորեցին հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության՝ փորձելով վերականգնել Հայոց թագավորությունը:

Հայ ժողովուրդը շարունակեց ծանր ու արյունահեղ կռիվներ մղել բյուզանդական, պարսկական ու արաբական տիրապետությունների դեմ, և նրա անկոտրում կամքը հաղթանակեց: Հայաստանը IX դ. կեսերից վերականգնեց իր փաստական անկախությունը, իսկ 885թ. կերտեց Բագրատունյաց թագավորությունը, որն Աշոտ I-ի և Սմբատ I-ի օրոք վերածվեց հզոր տերության:

Բագրատունյաց թագավորությունը երկրի տնտեսական ու մշակութային վերելքի պայմաններ ստեղծեց: Բուռն զարգացում ապրեց քաղաքային կյանքը, կառուցվեցին մեծ թվով եկեղեցիներ և վանական համալիրներ, երկիրը ծածկվեց դպրոցների լայն ցանցով, ստեղծվեցին միջնադարյան առաջին համալսարանները:

XI դ. կեսերին Բյուզանդական կայսրության և սելջուկ-թյուրքերի հարվածների ներքո Բագրատունյաց թագավորությունն ընկավ: Սակայն Կիլիկիա տեղափոխված հայությունը մեկ անգամ ևս ցույց տվեց իր կենսունակությունը՝ Միջերկրական ծովից հյուսիս-արևելք ընկած շրջանում ստեղծելով *Կիլիկիայի հայկական պետությունը*, որը, գոյատևելով ավելի քան երեք դար, մեծ նպաստ բերեց հայ ժողովրդի քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի զարգացմանը:

Ազգային ակունքների վրա բարձրացող՝ մեր նախնիների ստեղծագործ մտքի հզոր ձեռքբերումները, հիրավի, հպարտության օրինական զգացում են ծնում: Իսկ այդ արդար զգացումը ստիպում է, որ լինենք մեր նախնիների արժանավոր ժառանգորդը և խստագույն նվիրվածությամբ շարունակենք նրանց գործը: Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, Տրդատի և Մանվելի ստեղծած ճարտարապետական գոհարները, Թորոս Ռոսլինի մանրանկարները, Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը և շատ ուրիշ մշակութային արժեքներ ձեռք են բերել համաշխարհային հնչեղություն և մտել համամարդկային մշակութային արժեքների գանձարան: Անտարակույս է, որ զարգացած միջնադարում ևս հայ ժողովուրդն աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների առաջին շարքերում էր:

Հայ ժողովուրդը թևակոխեց ուշ միջնադար՝ գտնվելով օտար տիրապետությունների ներքո: Հայ գործիչները լավ էին հասկանում, որ ժողովրդի փրկությունը Հայաստանի անկախության վերականգնումն է: Ազգի մեծագույն զավակներն սկսեցին Հայաստանի ազատագրության ծրագրեր մշակել: Այդ առիթով հրավիրվեցին առաջին խորհրդաժողովները, փորձ արվեց Աղթամար կղզում և Վանա լճի առափնյա շրջանում ստեղծելու Հայկական թագավորություն: Ձևավորվում էին հզոր ժողովրդաազատագրական շարժման նախադրյալները: Հայ ժողովուրդը նոր պատմության դարաշրջան մուտք գործեց անկախ պետությունը վերականգնելու հաստատակամությամբ և ապագայի մեծ հույսերով:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հ. Հարությունյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVII դարում եվրոպացի պատմաբանները համաշխարհային պատմությունը բաժանեցին ***անտիկ, միջին դարերի*** և ***նոր պատմության*** շրջանների: XIX դ. սկզբներին մեծապես ուժեղացավ հետաքրքրությունը միջնադարի նկատմամբ: Միջին դարերը համապատասխանում են ավատատիրության կամ ֆեոդալական հասարակարգի տիրապետության դարաշրջանին:

Հայ ժողովուրդը նույնպես ապրել է ավատատիրության ժամանակաշրջան: Այսօր հայագիտության մեջ ընդունված է միջին դարերի ներքոնշյալ պարբերացումը: IV դ. սկզբից մինչև IX դ. կեսերը համարվում է ***վաղ միջնադարի*** ժամանակաշրջան, IX դ. կեսերից մինչև XIV դ. վերջերը՝ ***զարգացած միջնադարի*** շրջան, XV դ. սկզբից մինչև XVII դ. կեսերը՝ ***ուշ միջնադարի*** ժամանակաշրջան:

Հայաստանի ստրկատիրական հասարակությունը I-III դդ. սկսեց ճեղքեր տալ և վերափոխվել: Մշակ-ստրուկի աշխատանքը դարձել էր անարտադրողական, որն արգելակում էր արտադրողական ուժերի զարգացումը: Այն շահութաբեր դարձնելու նպատակով նրանց սկսեցին ամրակցել հողին: Դա ավատատիրական հարաբերությունների ծագման և զարգացման նախադրյալներ ստեղծեց: Ավատատիրությունը հաղթեց IV դ. սկզբներին, սակայն ոչ թե հեղափոխական տեղաշարժերի հետևանքով, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այլ՝ խաղաղ զարգացման պայմաններում: Հակառակ Արևմտյան Եվրոպայի, որտեղ ավատատիրության հաստատումն ուղեկցվում էր քաղաքային կյանքի աննախընթաց անկումով, Հայաստանն ավատատիրության կամ միջնադարի դարաշրջան թևակոխեց՝ ունենալով խոշոր և բազմամարդ քաղաքներ, որոնց բնակչությունը երբեմն հասնում էր տասնյակ հազարների: Դրանք թագավորական ուժեղ իշխանության հենարանն էին, երկրի տարբեր մասերը քաղաքականապես շաղկապող գործոնը և պետության տնտեսական կյանքի հիմքը: Ցավոք, հայկական ավատատիրության բնականոն զարգացումը հաճախ խանգարվում էր հարևան հզոր տերությունների ռազմական միջամտությամբ: Ավատատիրական հարաբերությունները Հայաստանում զգալիորեն խորացան, երբ պարսկական զորքերը IV դ. 60-ական թթ. բռնագաղթեցրին քաղաքային բնակչության նշանակալից մասին: Դրա հետևանքով ուժեղացավ բնատնտեսությունը, թուլացավ թագավորական իշխանությունը:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ավատատիրության ձևավորումը, աստիճանակարգությունը: Համաշխարհային պատմության մեջ III-V դարերը հեղաշրջիչ փոփոխությունների ժամանակաշրջան էին: ***Սրրկատիրական*** հարաբերությունները քայքայվում էին՝ ճանապարհ տալով իրենց ընդերքում ձևավորվող նոր՝ ավատատիրական հարաբերություններին: Հայաստանում ավատատիրությանն անցումը կատարվում էր առավել արագ, քան Արևմուտքի որոշ երկրներում, որտեղ ստրկատիրությունը խոր արմատներ էր ձգել:

Ավատականացման հետևանքով ձևավորվեցին ***ազատների*** և ***անազատների*** դասերը: Եթե մինչ այդ գյուղական համայնքների անդամներն ազատ էին և պարտավոր էին հարկեր տալ պետությանն ու պարհակներ (հարկադիր աշխատանքներ) կատարել, ապա դրանից հետո նրանք աստիճանաբար վերածվեցին ***անազատների***: Այժմ նրանք պարտավոր էին բերքի մի մասը վճարել իրենց հողերին տիրացած ավատատեր-հողատերերին և նրանց համար կատարել պարհակներ: Նրանք աստիճանաբար վերածվում էին ***հողի վարձակալների:*** Միաժամանակ, ***ագարակ-դաստակերտներում*** բանող ***մշակ-ստրուկները,*** որոնց աշխատանքը դարձել էր խիստ անարտադրողական, իրենց արտադրանքի մի մասի նկատմամբ ձեռք էին բերում որոշ իրավունքներ: Դրա շնորհիվ նրանք իրավապես աստիճանաբար հավասարվում էին շինականներին կամ գյուղացիներին: Դրա հետևանքով ագարակ-դաստակերտները վերածվեցին սովորական գյուղական բնակավայրերի՝ հաճախ պահպանելով ***ագարակ*** կամ ***դաստակերտ*** անվանումը: Շինական գյուղացիներից և մշակ-ստրուկներից ձևավորվեց ***անազատների*** դասը:

Երկրի ավագանուց և արքունի նախկին պաշտոնյաներից ձևավորվեց ***ազատների*** դասը: Ազատների դասի մեջ էին մտնում ***աշխարհակալ*** և ***աշխարհատեր*** իշխանները, ***գավառակալ*** և ***գավառատեր*** նախարարները, արքունիքից որպես ***ուրեստ***[1] հողատարածքներ ստացած զինվորականները, աստիճանավորները և այլք: Նրանց հաջողվում է ժառանգական դարձնել զբաղեցրած պաշտոնները: Դրա հետևանքով ազատների դասն աստիճանաբար իր ենթակայության տակ առավ կառավարելու կամ ***պայմանական հողատիրության*** սկզբունքով իրեն հանձնված հողերը: Ձևավորվեց ***ավատատերերի***

1. ***Աշխարհակալ*** են կոչվել նահանգների կառավարիչները, ***աշխարհատեր***՝ նահանգների ժառանգատեր իշխանները, ***գավառակալ***՝ գավառների կառավարիչները, ***գավառատեր***՝ գավառների ժառանգատեր նախարարները: Պաշտոնյային որպես վարձատրություն տրված հողային տիրույթը հայտնի էր ***ուրեստ*** անունով:

խավը: Խոշոր ավատատերը կոչվում էր ***իշխան*** կամ ***նախարար***, իսկ նրա տիրույթը՝ ***իշխանություն*** կամ ***նախարարություն:*** Ժամանակի ընթացքում արքունիքը ճանաչեց ավատատերերի մեծ մասի ժառանգական իրավունքը նրանց ենթակայության տակ գտնվող հողերի նկատմամբ: Նախարարություններն ինքնուրույն իշխանություններ չէին, սակայն թագավորից ու արքունիքից դրանց կախումը թույլ էր: Ավատատիրության խորացման հետևանքով նախարարները հաճախ ընդվզում էին արքունական իշխանության դեմ՝ փորձելով չենթարկվել:

Քրիստոնեական եկեղեցին ևս արագորեն վերածվեց ավատատիրական կառույցի, իսկ հոգևորականները, վերածվելով ավատատերերի, համալրեցին ***ազատների դասը***: Վերջինս ապահարկ էր, այսինքն՝ ազատված էր հարկեր վճարելուց:

Հողատիրության ձևերը: Ավատատիրության ամենաբնորոշ հատկանիշներից մեկն ավատական խոշոր հողատիրությունն էր: Վաղ ավատատիրության շրջանում գոյություն են ունեցել հողատիրության երեք ձևեր՝ ***հայրենիք***, ***պարգևականք*** և ***գանձագին***: «Հայրենիք» կամ «հայրենական» էին կոչվում ժառանգական սեփականության իրավունքով հորից որդուն անցնող հողերը: «Պարգևականք» անվանվում էին այն կալվածքները, որոնք որպես ***ուրեպտ*** հանձնվում էին պետական պաշտոնյաներին կամ զինվորականներին: Ծառայությունը դադարեցնելու դեպքում արքունիքը դրանք հետ էր վերցնում: «Գանձագին» էին համարվում գնված հողերը: Սրանք, ըստ էության, չէին տարբերվում ***հայրենիք***-ից: Կուսակրոնություն մտցնելուց հետո բարձրաստիճան հոգևորականներին պատկանող հողերը դարձան եկեղեցու սեփականություն:

Հայոց թագավորի տիրույթները ***հայրենիք*** էին: Նրա տիրույթները, որ միաժամանակ պետական հողեր էին, ժառանգաբար անցնում էին հորից որդուն:

Արքունական հողերը չէին տրվում սեպուհներին[1]: Նրանց, որպես բնակության վայր, հանձնվում էին ***Հաշտյանք***, ***Աղիովիտ*** և ***Առբերանի*** գավառները: Այրարատում, որտեղ գտնվում էր արքունի տիրույթների նշանակալից մասը, կարող էին ապրել միայն թագավորն ու թագաժառանգը:

Թագավորը և ավատատիրական իշխանությունները: Ավատատիրական իշխանությունները կամ նախարարությունները ժամանակի ընթացքում ձեռք էին բերում մեծ իրավունքներ: Նրանք ենթակա էին թագավորին, սակայն իրենց տիրույթներում ունեին գրեթե անսահմանափակ իշխանություն: Խոշոր ավատատերերն ունեին իրենց ենթակա մանր ազատների խավը, որը զինվորական ծառայության դիմաց նրանցից հող էր ստանում: Թագավորը ևս ուներ ենթակա մանր ազնվականներ, որոնք կոչվում էին ***ուպանիկներ:***

Ավատատիրությունը ծնում էր երկպառակություններ ու կենտրոնախույս ձգտումներ: Դրանք հաճախ հրահրվում էին հարևան Հռոմեական կայսրու-

1. ***Սեպուհ*** էին կոչվում թագավորական և իշխանական ընտանիքների կրտսեր անդամները:

թյան կամ Սասանյան Պարսկաստանի կողմից: Արքունիքն էլ իր հերթին կամ դաժանորեն ճնշում էր նման փորձերը, կամ աշխատում սիրաշահել դժգոհ նախարարներին:

Մեծ Հայքի թագավորությունն ավատատիրության դարաշրջան թևակոխեց՝ ունենալով բազմաթիվ մարդաշատ ու վաճառաշահ քաղաքներ: Դրանք թագավորական իշխանության հենարանն էին: Երբ, ինչպես նշվեց, 360-ական թվականներին Հայաստանի քաղաքային բնակչության նշանակալից մասը բռնագաղթեցվեց Պարսկաստան, առևտրական ու տնտեսական կապերի թուլացման պատճառով շատ քաղաքներ վերածվեցին գյուղերի: Թագավորական իշխանությանը ծանր հարված հասցվեց:

Ավատատիրական աստիճանակարգությունը: Մեծ Հայքի թագավորության աստիճանակարգությունը հիշեցնում էր մի բուրգ, որի գլուխ կանգնած էր ***արքան***: Նա երկիրը կառավարում էր ***արքունիքի*** միջոցով և համարվում ***գլուխ երկրին Հայոց:*** Իր հպատակների կյանքի ու գույքի նկատմամբ թագավորն ուներ անսահմանափակ իրավունքներ: Նա իրավունք ուներ պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու, դեսպանություններ ընդունելու և բանակցելու այլ երկրների հետ: Միայն թագավորն առանձնաշնորհություն ուներ երկու ոտքին կարմիր կոշիկներ կրելու: Բոլոր նախարարները եղել են նրան ստորակա, կատարել են «***ի սպասու ծառայություն»***[1] և թագավորին տրամադրել իրենց զորաջոկատները: Թագավորական հրովարտակներն ու հրամաններն օրենքի ուժ ունեին: Ավատատիրական խավի՝ արքունիքում զբաղեցրած գահերի խնդիրը և մարտադաշտ դուրս բերվող զորաջոկատների թվաքանակը սահմանվում էին «***Գահնամակ»*** և «***Զորանամակ»*** փաստաթղթերով: Պետական կարևորություն ունեցող հարցերում թագավորը խորհրդակցում էր երկրի մեծամեծ իշխանների ու կաթողիկոսի հետ: Երկրի առաջ ծառացած կարևոր խնդիրների լուծման նպատակով նա հրավիրում էր ***աշխարհաժողովներ***: Դրանց մասնակցում էին ոչ միայն նախարարներն ու հոգևորականությունը, այլև քաղաքային դասի և շինականների ներկայացուցիչները:

«Գահնամակ» (պատրաստիկ)

Հեծյալ զինվորներ

1. *«Ի սպասու ծառայություն»* էր կոչվում ավատատերերի զինվորական և վարչական ծառայությունը թագավորին:

Ավատատիրական բուրգի հաջորդ աստիճանը կազմում էին երկրի *երևելի* իշխանները: Նրանց մեջ էին մտնում արքունական չորս զորաբանակների հրամանատար *բդեշխները, աշխարհակալ* ու *ավագ նախարարները*, ինչպես նաև *արքունի գործակալությունների ղեկավարները*: Բդեշխներն իրավունք ունեին մի ոտքին կարմիր, իսկ մյուսին կանաչ կոշիկ հագնելու: Թագավորին էին ենթարկվում նաև *կրտսեր նախարարները*, որոնք նույնպես «ի սպասու ծառայություն» էին կատարում: Նախարարներն ունեին իրենց զինանշաններն ու դրոշները: Իրենց տիրույթներում նրանք վարչական և դատական լայն իրավունքներ ունեին: *Մեպուհները* նախարարական տիրույթների նկատմամբ իրավունքներ չունեին:

Տիրույթ ունեցող բդեշխներն ունեին իրենց ստորակա նախարարությունները, որոնք չէին գտնվում թագավորի անմիջական ենթակայության ներքո:

Աստիճանասանդուղքի հաջորդ աստիճանն *ազատներն* էին կամ *մանր ազնվականները:* Թագավորից անմիջական կախման մեջ գտնվողները կոչվում էին *ոստանիկ*, իսկ նախարարներից կախյալները՝ *ազատ:* Նրանցից էին կազմվում արքունի հեծելազորը և նախարարական այրուձին: Նրանց էին վստահում արքունիքի պաշտպանությունը և ռազմական ու վարչական շատ պաշտոններ: Իրենց ծառայության դիմաց նրանք ստանում էին *պարգևականք* կալվածքներ: Բուրգի ամենաստորին աստիճանը զբաղեցնում էին *անազատները՝ քաղաքացիները, շինականները* և *քաղաքային* ու *գյուղական ռամիկները:* Նրանց ուսերին էր ծանրացած հարկային բեռը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Պետական կարգը: Թագավորական արքունիքը մի շարք գործակալությունների ցանց էր: Գործակալություններն իրականացնում էին վարչական, զինվորական, տնտեսական, դիվանագիտական և այլ գործառույթներ:

Հազարապետությունը սահմանում էր պետական հարկերը, հսկում դրանց հավաքումը, ղեկավարում պետական նշանակություն ունեցող աշխատանքները: Այդպիսիք էին նոր քաղաքների ու ամրոցների կառուցումը, ճանապարհների ու ջրանցքների անցկացումը և այլն: Հազարապետությանն էին ենթարկվում հարկահավաք պաշտոնյաները: Այս պաշտոնն սկզբում զբաղեցնում էին *Գնունիները*, ապա՝ *Ամատունիները:*

Սպարապետության գլուխ կանգնած էր *սպարապետը*: Նրա հրամանատարության տակ էին արքունի և նախարարական ինչպես հեծյալ, այնպես էլ հետևակ ուժերը: Նա անմիջականորեն ենթարկվում էր թագավորին, որը երկրի զորքերի գերագույն հրամանատարն էր: IV–V դդ. այս գործակալությունը *Մամիկոնյան տան* ժառանգական իրավունքն էր: Սպարապետին էին ենթարկվում չորս բդեշխները և երկրի նախարարական զորաջոկատները ղեկավարող չորս զորավարները:

Մարդպետություն գործակալությունը վերահսկում էր արքունի տիրույթները, պահպանում էր արքունի գանձերը և ապահովում երկրի ներքին կար-

գուկանոնը: Գործակալը կրում էր *Հայր մարդպետ* տիտղոսը: Նա արքունի կանանոցի վերակացուն էր, թագաժառանգի դայակը և թագավորի խորհրդատուն:

Մաղխազությունն իրականացնում էր արքունական պահակազորի պարտականությունը: Գործակալը՝ *մաղխազը*, թագավորի 10 հազար մարտիկներից բաղկացած թիկնապահ գնդի հրամանատարն էր: Մաղխազությունը *Խորխորունիների տան* ժառանգական պաշտոնն էր:

Թագակապ ասպետությունն գործակալությունը ղեկավարում էին *Բագրատունիները:* Նրանց պարտականությունն էր՝ խստիվ հետևել արքունիքում պալատական արարողակարգի կատարմանը, նախարարների զբաղեցրած գահերի հերթականությանը և ունեցած պատվանշաններին:

Մեծ դատավարությունը գլխավորում էր կաթողիկոսը: Նա եկեղեցական ժողովների միջոցով կանոններ և օրենքներ էր սահմանում ու հետևում դրանց անշեղ կատարմանը: Կաթողիկոսը նաև լուծում էր նախարարների միջև ծագած վեճերը և միջնորդի դեր էր կատարում թագավոր-նախարար հարաբերություններում:

Արքունի սենեկապետությունը ղեկավարում էր *արքունի դիվանը* կամ *գրասենյակը*: Սենեկապետը թագավորի անձնական քարտուղարն էր, արքունի գրագրություն կազմակերպողը, արխիվի պահապանը:

Կային նաև այլ գործակալություններ:

Ոստանիկ զինվոր

Բանակը: Հայկական բանակն Արշակունիների օրոք բաղկացած էր 120 հազար մարտիկներից: Դրանցից 40 հազարն արքունական էին, ղեկավարվում էին չորս բդեշխների կողմից և պաշտպանում էին երկրի սահմանները բոլոր չորս ուղղություններով: Բանակի մաս էին կազմում մարդպետական 15-հազարանոց և մաղխազական 10-հազարանոց գնդերը, որոնցով արքունական զինուժի ընդհանուր քանակը հասնում էր 65 հազարի: Մնացած 55 հազար մարտիկները ներկայացնում էին նախարարական զորաջոկատները: Դրանք պատերազմի էին դուրս գալիս արքունի բանակի կազմում, սակայն իրենց նախարարների հրամանատարությամբ ու նրանց դրոշի ներքո: Բանակի հիմնական հարվածային ուժն այրուձին էր: Զգալի ուժ էին ազատներից կազմված հետևակային զորամասերը, ինչպես նաև պատերազմի ժամանակ հավաքագրվող ժողովրդական *աշխարհազորը*:

Բանակը զինված էր ժամանակի բոլոր տեսակի զենքերով՝ *նետ ու աղեղ, նիզակ, պարսապրիկ, տեգ, սուր, վահան, սակր* և այլն: Քաղաքների պարիսպները քանդելու համար օգտագործում էին *բաբան* և պարսպակործան այլ մեքենաներ: Մեծ նշանակություն էր տրվում *քարանետ* մեքենաներին: Բանակն ուներ հետախուզական և սակրավորական զորամասեր: Դրանցից վերջինը զբաղվում էր կռվի ժամանակ ճանապարհների անցկացումով, գետանցների ապահովումով և քաղաքների ու ամրոցների պարիսպների խորտակումով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հասարակական-տնտեսական ինչ փոփոխությունների ենթարկվեց հայկական հասարակությունն ավատատիրության զարգացման հետևանքով:
2. Ինչպիսին էր ավատատիրական Հայաստանի դասային կառուցվածքը:
3. Ինչպե՞ս էին կոչվում ավատատեր իշխանները:
4. Հողատիրության ինչ ձևեր գոյություն ունեին վաղմիջնադարյան Հայաստանում:
5. Ինչ փաստաթղթեր են «Գահնամակը» և «Զորանամակը»:
6. Ո՞ր նախարարական տների մենաշնորհն էին հազարապետություն, սպարապետություն, թագակապ (թագադիր) ասպետություն և մաղխազություն գործակալությունները:
7. Ինչ կառուցվածք և թվաքանակ ուներ Արշակունյաց Հայաստանի բանակը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• ավատատիրություն • ազատների դաս • անազատների դաս • հայրենիք • պարգևականք • գանձագին • սեպուհ • ոստանիկ • «Գահնամակ» • «Զորանամակ»

3. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Քաղաքական կացությունն Առաջավոր Ասիայում III դ. վերջին և IV դ. սկզբներին: Դիոկղետիանոս կայսեր օրոք Հռոմեական կայսրությունը բավականին հզորացավ: Երկիրը վարում էր ակտիվ արտաքին քաղաքականություն: 287թ. հռոմեական զինուժի օգնությամբ հայկական գահին վերահաստատվեց ***Տրդատ III Մեծը*** (իշխել է մինչև 330թ.): Պարսից Ներսեհ Սասանյան արքան 297թ. հռոմեա-հայկական զորքերից ծանր պարտություն կրեց և 298թ. ստիպված եղավ կնքել Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը: Մեծ Հայքի թագավորությունը կրկին իր արժանավոր տեղն զբաղեցրեց Առաջավոր Ասիայի քաղաքական թատերաբեմում: Ուժեղացավ թագավորական իշխանությունը:

Սբ Գեղարդ

Հռոմեական կայսրությունում գնալով ուժեղանում էին նոր վարդապետության՝ քրիստոնեության հետևորդների դիրքերը: Քրիստոնեությունը, որն սկիզբ էր առել I դարում Պաղեստինում, II–III դդ. ընթացքում լայնորեն տարածվեց Հռոմեական կայսրությունում և Մերձավոր Արևելքում: Նոր վարդապետության հիմնադիրը Հիսուս Քրիստոսն էր: Սկզբում բոլոր այն երկրներում, ուր տարածվում էր նոր կրոնը, նրա հետևորդներին վերաբերվում էին թշնամաբար, հալածում էին ու

սպանում՝ փորձելով արմատախիլ անել այս շարժումը: Հալածանքները հատկապես մեծ թափ ընդունեցին Դիոկղետիանոս կայսեր օրոք: Սակայն այդ վարդապետությունը գնալով ծավալվում էր՝ ներառելով նորանոր մարդկանց, ժողովուրդների և երկրներ:

Քրիստոնեությունն իր հետևորդներին քարոզում էր համակերպվել կյանքի դժվարություններին, հավատարմորեն ծառայել տերերին: Քրիստոնեական եկեղեցին ուժեղ կառույց էր, ուստի պետությունները մեկը մյուսի հետևից սկսեցին փոխել իրենց վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ և այն հռչակել սկզբում որպես իրավահավասար, ապա՝ պետական պաշտոնական կրոն: Քրիստոնեությունը սկսել է Հայաստան ներթափանցել արդեն I դարում: Քրիստոնյա քարոզիչները, ի դեմս ***Թադեոս*** ու ***Բարդուղիմեոս*** առաքյալների և նրանց աշակերտների, գալիս են Հայաստան և քարոզում նոր վարդապետությունը: Նրանք Հայաստանում հիմնադրեցին քրիստոնեական առաջին համայնքները: Քանի որ Հայոց քրիստոնեական եկեղեցու հիմնադիրները եղել էին առաքյալներ, այն անվանվում է ***առաքելական***:

Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ: Տրդատ III-ը սկզբում թշնամանքով էր վերաբերվում քրիստոնյաներին: Հալածանքների ենթարկվեց անգամ նրա մերձավորներից Գրիգոր Պարթևը, որը հրաժարվել էր երկրպագել ***Անահիտ*** աստվածուհուն: Նա կտտանքների ենթարկվեց և նետվեց Խոր վիրապի արքունի բանտ: Գրիգոր Պարթևի բանտարկության 13-րդ տարում Հռոմից փախստական եկան Հայաստան քրիստոնեության քարոզիչ ***Հռիփսիմյանց կույսերը՝ Հռիփսիմեն, Գայանեն*** և նրանց 40 ընկերուհիները: Հայոց թագավորը հալածեց Հռիփսիմյանց կույսերին, որոնց մեծ մասը զոհ գնաց: Սակայն Հռիփսիմյանց կույսերի նահատակության տարում հիվանդացած Տրդատ թագավորը բուժվեց Խոր վիրապի բանտից ազատված Գրիգոր Պարթևի կողմից, իսկ քրիստոնյաների հալածանքները դադարեցին: Տրդատ արքան արդեն մտածում էր քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու մասին: Նա նպատակ ուներ այդ ճանապարհով ցույց տալ, որ իր իշխանությունն ստացել է Աստծուց:

Տրդատ III Մեծ և Սբ Գրիգոր Լուսավորիչ

Ազատություն ստացած Գրիգորին թույլ տրվեց Վաղարշապատում՝ Հռիփսիմյանց կույսերի նահատակության վայրերում, մատուռներ հիմնել: Դրանց վրա VII դ. կույսերի անուններով եկեղեցիներ կառուցվեցին:

Քրիստոնեությունը՝ պետական կրոն: 301թ. Գրիգոր Պարթևը 16 հայ երևելի իշխանների ուղեկցությամբ մեկնեց Կեսարիա: Նա այնտեղ մեծ հանդիսավորությամբ ձեռնադրվեց Հայոց եպիսկոպոսապետ (կաթողիկոս): Կեսարիայից հայրենիք վերադարձած Գրիգորը, որը քրիստոնեության լույսը Հա-

յաստան բերելու համար Լուսավորիչ կոչվեց, Տարոնում կործանեց Վահագն աստծո մեհյանը և հիմք դրեց Հայոց առաջին եկեղեցուն: Բագավան գալով՝ նա Արածանի գետում մկրտեց Տրդատ III-ին ու նրա ընտանիքը, նախարարներին, բանակը և ժողովրդին: Առաջինն աշխարհում՝ 301թ. քրիստոնեությունը հայտարարվեց Հայոց թագավորության պետական կրոն, իսկ Գրիգոր Լուսավորիչը սրբացվեց Հայոց եկեղեցու կողմից:

Քրիստոնեությունը նշանակալից հաջողություններ ունեցավ նաև Հռոմում: 313թ. Միլանի կայսերական հրովարտակով այն հավասարազոր կրոն ճանաչվեց, իսկ պետական կրոն դարձավ միայն IV դ. վերջին քառորդին:

Մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը Հայաստանում քրիստոնեական համայնքները չափազանց տարածվել և ամրապնդվել էին: Սակայն շատ ուժեղ էին նաև հեթանոսության դիրքերը: Արքունի զորքերը, իրենց նոր ընդունած հավատի նախանձախնդրությունից դրդված, քարուքանդ էին անում հեթանոսական կենտրոնները: Հեթանոսական մեհյանները, որ նշանակալից զինված ուժեր ունեին, կատաղի դիմադրում էին: Այս պայքարում ավերվեցին ***Արամազդի, Անահիտի*** և հեթանոսական մյուս աստվածների մեհյանները: Դրանց տեղում քրիստոնեական եկեղեցիներ հիմնադրվեցին: Թագավորի հրովարտակով քրմական մեհյանների տիրույթները, բնակչությամբ հանդերձ, հանձնվեցին քրիստոնեական եկեղեցուն: Քրմերն ու նրանց երեխաները քրիստոնյա էին մկրտվում:

Քրիստոնեությունը, քարոզվելով ժողովրդին անհասկանալի հունարենով ու ասորերենով, դժվարությամբ էր թափանցում հայ հասարակության մեջ: Կամենալով մեղմել հեթանոսության դիմադրությունը՝ եկեղեցին փոխ առավ մի շարք հեթանոսական ծեսեր ու սովորույթներ: Դրանցից են, օրինակ, ընտանի կենդանիների զոհաբերությունը, որը փոխվեց մատաղով, Վարդավառը և այլն:



Էջմիածնի Մայր տաճարը (303թ.)

Հայոց եկեղեցու կառույցի ձևավորումը: Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը: Ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում Հայոց եկեղեցին առաջատար դիրքեր գրավեց հասարակության մեջ: Նա, մեհյանների տիրույթներից ու հարստություններից բացի, հողային զգալի նվիրատվություններ ստացավ Տրդատ Մեծից ու նրա հաջորդներից: Հայոց եկեղեցին վերածվեց տնտեսական հզոր ուժի: Ժողովուրդը պարտավոր էր եկեղեցուն հանձնել բերքի մեկ տասներորդը ***(տասանորդ)*** և վճարել ***պտղի***[1]**:** Եկեղեցին շատ շուտով դարձավ երկրի խոշորագույն ավատատերերից

1. ***Պտղին*** բնամթերքով եկեղեցուն վճարվող հարկ էր:

մեկը: Ներսես Մեծ կաթողիկոսի օրոք կաթողիկոսական կալվածքները սփռված էին 15 նահանգներում:

Արդեն Գրիգոր Լուսավորչի օրոք հիմնականում ձևավորվեց հայ եկեղեցական կառույցը: Ստեղծվեցին 36 եպիսկոպոսություններ: Դրանց գլուխ կանգնած եպիսկոպոսներն արարողությունների ժամանակ տեղ էին զբաղեցնում կաթողիկոսի աջ և ձախ կողմերում: Եպիսկոպոսություններից երկուսը ստեղծվեցին Վիրքի և Աղվանքի համար:

Անուրանալի է քրիստոնեական եկեղեցու դերակատարությունը հայոց պատմության մեջ: Քրիստոնեության ընդունումը նպաստեց թագավորական իշխանության ամրապնդմանը և հետագայում մեծ դեր կատարեց երկրի կյանքում: Արագացավ Հայաստանի ներքին համախմբումը: Հաջորդ դարերի ընթացքում ևս հայ ժողովուրդը պահպանեց իր ներքին միասնականությունը: Քրիստոնեությունը խորապես ազդեց մեր ազգային մշակույթի զարգացման վրա:

Երբ Հայաստանը զրկվեց անկախ պետականությունից, Հայոց եկեղեցին իր վրա վերցրեց ոչ միայն հայ մշակույթի պահպանման ու զարգացման գործառույթները, այլև ազատագրական շարժումները գլխավորելու մեծ առաքելությունը: Դարեր շարունակ եկեղեցին ժողովրդին դաստիարակել է հայրենասիրության և ազգային գիտակցության ոգով:

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ՝ ՀԵԹԱՆՈՄՆԵՐԻ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՐՅՈՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երկու կողմերից սկսեցին հավաքել իրենց մահացածներին. դրանք այնքան շատ էին, որ գերեզմանի տեղ չմնաց, ուստի լցրին բոլորին մի փոսի մեջ, հուշարձան կանգնեցրին նրանց վրա ու գրեցին հետևյալը.

– Տեղի ունեցավ առաջին պատերազմը. այստեղ է հանգչում հույժ քաջամարտիկ Արձան քրմապետը, նրա հետ՝ նաև հազար երեսունութ հոգի, որոնք կռվեցին հանուն Գիսանե կուռքերի և հանուն Քրիստոսի»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր դարից են Հայաստանում սկիզբ առել վաղքրիստոնեական համայնքները:
2. Ովքե՞ր են եղել Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչները:
3. Ինչո՞ւ է Հայոց եկեղեցին կոչվում առաքելական:
4. Ո՞ր թագավորի օրոք քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն, ո՞վ դարձավ Հայոց առաջին կաթողիկոս:
5. Ի՞նչ դեր էր կատարում եկեղեցին Հայոց թագավորության կյանքում:
6. Համառոտ ներկայացրե՛ք Հայոց եկեղեցու կառույցի ձևավորումը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է քրիստոնեության պետական կրոն հռչակման պատմական նշանակությունը:
2. Ինչ բախումներ և կորուստներ եղան Հայոց թագավորությունում IV դ. սկզբում՝ քրիստոնեության ընդունման ժամանակ: Քննարկեք և փորձեք գնահատել դրանք:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Տրդատ III Մեծ • Ներսեհ Սասանյան • Մծբինի հաշտության պայմանագիր • Խոր վիրապ • Գրիգոր Լուսավորիչ • Հռիփսիմե • Գայանե • տասանորդ • պտղի

1-ին թեմայի ամփոփում

1. Մեր թվականության առաջին դարերում աստիճանաբար ձևավորվող ավատատիրական կարգերը վարչաքաղաքական և իրավական կարգավորում ստացան IV դ. սկզբներին: Աշխարհների և գավառների նախկին կառավարիչներն սկզբում ժառանգական դարձրեցին իրենց պաշտոնները, այնուհետև վերածվեցին ժառանգատեր իշխանների կամ նախարարների: Հասարակությունը բաժանվեց երկու հիմնական դասերի՝ ազատների և անազատների: Թագավորը, նրա գործակալները և ավատատերերը կազմեցին ազատների դասը, իսկ քաղաքացիները, գյուղացիներն ու մշակները՝ անազատների դասը:
2. Արքունի գործակալությունները վերածվեցին առանձին նախարարական տների ժառանգական մենաշնորհի, որի հետևանքով արագացավ ավատատիրական հարաբերությունների զարգացումը:
3. Վաղքրիստոնեական համայնքները Հայաստանում տարածվեցին Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների և նրանց աշակերտների քարոզչության շնորհիվ: Տրդատ III թագավորի օրոք՝ 301թ. քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն: Հայաստանն աշխարհում առաջին երկիրն էր, որը քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն, իսկ Գրիգոր Լուսավորիչը դարձավ Հայոց առաջին կաթողիկոս: Դրանից հետո Հայոց քրիստոնեական եկեղեցին սկսեց կարևոր դեր խաղալ երկրի կյանքում:

ԹԵՄԱ 2 ՊԱՅՔԱՐ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

1. ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Հայքի թագավորությունը Տրդատ III-ի իշխանության վերջին շրջանում: Տրդատ Մեծի իշխանության վերջին շրջանի վերաբերյալ կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ 311թ. Տրդատը ծանր պարտության մատնեց Հռոմի ***Մաքսիմիանոս Դայա*** կայսեր՝ Մեծ Հայք ներխուժած բանակներին, որոնք փորձում էին պատժել քրիստոնեություն ընդունած հայերին:

Սակայն հռոմեական կայսր Կոստանդինոսի օրոք Հռոմեական կայսրության հետ հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ: Հռոմ ժամանած Տրդատ Մեծը և Գրիգոր Լուսավորիչը 321թ. դաշինք կնքեցին կայսրության հետ: Դաշնագրով Հռոմը հանձն էր առնում անհրաժեշտության դեպքում ռազմական ուժով օգնել Հայոց թագավորությանը:

Տրդատ Մեծի օրոք թագավորական իշխանությունը խիստ ամրապնդվեց: Քրիստոնեության ընդունումով արքունի իշխանությունը համարվում էր Աստծուց տրված և ոչ թե կայսրից ստացված: Տրդատի իշխանության տարիներին Հայոց թագավորությանը հաջողվեց իր գերիշխանությունը հաստատել հարևան Վիրքում ու Աղվանքում: Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը ձեռնադրվեց Հայոց Արևելից կողմերի և Վրաց ու Աղվանից կողմերի եպիսկոպոսապետ: Նրա քարոզչության շնորհիվ Հայոց թագավորության ազդեցությունը տարածվեց մինչև Կովկասյան լեռներ:

Տրդատ Մեծին է վերագրվում 303թ. Կաթողիկե եկեղեցու հիմնադրումը Վաղարշապատում: Նա մահացավ 330 թվականին: Նրանից մի քանի տարի առաջ՝ 325թ. Մանեա այրք կոչվող վայրում մահացել էր Գրիգոր Լուսավորիչը:

Խոսրով III Կոտակը և նախարարները: Տրդատ III Մեծի օրոք թագավորը, նախարարները և եկեղեցին համերաշխ էին: Նրա մահից հետո գահ բարձրացավ որդին՝ ***Խոսրով III-ը*** (330-338թթ.), որը կարճահասակության պատճառով կոչվել է ***Կոտակ***: Նրա օրոք Հայոց արքունիքը որոշում է իր վերահսկողության տակ առնել մայրաքաղաքից դեպի երկրի սահմաններ ձգվող մայրուղիները: Դրա նպատակը կենտրոնաձիգ իշխանու-



Դվինի կենտրոնական թաղամասը (վերակազմություն)

թյան ամրապնդումն էր: Արքունիքը կարողացավ մայրուղիների վրա գտնվող նախարարություններին հնազանդեցնել, իսկ դիմադրող տոհմերին՝ բնաջնջել: Ոչնչացվեցին Օրդունիների և Մանավազյանների ընտանիքները: Նրանց տիրույթները մասամբ գրավվեցին արքունիքի օգտին, մասամբ հանձնվեցին եկեղեցուն: Խոսրով III-ը հանդես բերեց ուժեղ կամք: Նա խստությամբ գերազանցեց իր նախորդներին և շարունակեց հոր՝ թագավորական իշխանության ամրապնդման ու հզորացման քաղաքականությունը:

Խոսրով Կոտակը ծավալեց շինարարական լայն գործունեություն: Քանի որ Երասխի ջրերն Արտաշատից հեռացել էին՝ առաջացնելով ճահճուտներ, նա Արտաշատից ոչ հեռու, Դվին կոչվող բլրի վրա, հիմնադրեց ***Դվին*** անունով մի նոր քաղաք: Այնտեղ կառուցվեց արքունի ապարանք:

Թագավորի մեծագործություններից մեկն էլ եղավ Դվինի շուրջը երկու արհեստական անտառների տնկումը: Նրա հրամանով Գառնի ամրոցից մինչև Դվին կաղնու ծառեր տնկվեցին: Երկրորդ անտառը տարածվում էր մինչև Երասխի ափեր և թագավորի անունով կոչվեց ***Խոսրովակերտ***: Անտառը, որ պահպանվում է մինչև օրս, վերածված է պետական արգելոցի և կոչվում է ***Խոսրովի անտառ***: Թագավորի հրամանով այդ անտառներում որսի տարբեր կենդանիներ բաց թողնվեցին: Դրանք դարձան ոչ միայն արքունի որսատեղի, այլև զինավարժության վայր:

335թ. Հայոց թագավորության անդորրը խախտեցին Կասպից ծովի առափնյա շրջաններում բնակվող ***մազքութական*** ցեղերը: Նրանց Սանեսան թագավորի հրամանով սպանվեց մազքութների մեջ քրիստոնեություն տարածող Գրիգորիս եպիսկոպոսը: Ապա, անցնելով Կուրը, նրանք հասան Այրարատ և գրավեցին Վաղարշապատը: Հայոց բանակը, անցնելով հակահարձակման, ոչ միայն ազատագրեց Վաղարշապատը, այլև Օշականի ճակատամարտում ջախջախեց մազքութական բանակը: Ճակատամարտում Սանեսան թագավորը սպանվեց:

Շապուհ II-ի դրամ

IV դ. 30-ական թթ. կրկին սրվեցին պարսկա-հռոմեական հարաբերությունները: Պարսից ***Շապուհ II Երկարակյաց*** թագավորը (309-379թթ.) դեռ մինչև Մծբինի պայմանագրի ժամկետի լրանալը՝ 337թ. պատերազմ սկսեց Հռոմի և Մեծ Հայքի թագավորության դեմ: Բզնունյաց նախարար Դատաբեն մեծ բանակով ուղարկվեց կասեցնելու թշնամու առաջխաղացումը: Սակայն նա անցավ հակառակորդի կողմը: Դավաճանեց նաև Աղձնյաց բդեշխ Բակուրը: Օգտվելով դրանից՝ թշնամին թափանցեց երկրի կենտրոնական շրջաններ: Սակայն հայկական բանակը Վանա լճի մոտ տեղի ունեցած ճակատամարտում փառահեղ հաղթանակ տարավ պարսից զորքի դեմ: Գերի ընկած Դատաբե Բզնունին, համաձայն հինավուրց սովորության, քարկոծվելով սպանվեց: Նրա տոհմը բնաջինջ արվեց: Նույն ճակատագրին արժանացան Աղձնիքի բդեշխ Բակուրը և նրա ընտանիքը: Հիշյալ իշխանների տիրույթները հիմնականում գրավվեցին արքունիքի օգտին, իսկ մնացած մասը հանձնվեց եկեղեցուն:

Տիրան Արշակունու ներքին և արտաքին քաղաքականությունը: Խոսրով Կոտակին հաջորդեց նրա որդի ***Տիրանը*** (338-350թթ.): Նրա օրոք պատերազմ բռնկվեց Հռոմի և Պարսկաստանի միջև: Տիրանն ամեն կերպ աշխատեց խուսանավել երկու պետությունների միջև՝ բարեկամություն պահպանելով կայսրության և բնականոն հարաբերություններ՝ Սասանյան արքունիքի հետ: Նա շարունակեց հոր՝ թագավորական իշխանությունն ուժեղացնելու քաղաքականությունը: Տիրանի հրամանով գրեթե ամբողջությամբ բնաջնջվեցին ***Ռշտունիները, Արծրունիները*** և այլ նախարարական ընտանիքներ: Ըմբոստ նախարարների դեմ Տիրան թագավորի սկսած պայքարում կարևոր դեր ունեցավ Հայր մարդպետը: Նա ձգտում էր անհնազանդ նախարարներին պատժելով ուժեղացնել թագավորական իշխանությունը:

Քրիստոնեական եկեղեցու ուժեղացումը և ավատատիրական հաստատության վերածվելը խիստ անհանգստացրին Տիրանին: Թագավորին և նրա շրջապատին դուր չէին գալիս եկեղեցու հզորանալն ու արքունիքին հակադրվելու փորձերը: Հավասարակշռություն ստեղծելու նպատակով թագավորը չխոչընդոտեց հեթանոսության աշխուժացմանը: Դա առաջ բերեց կաթողիկոս Հուսիկի բուռն դժգոհությունը: Բանն այնտեղ հասավ, որ եկեղեցին Տիրանին համարեց ուրացող, իսկ Հուսիկը նրան արգելեց եկեղեցի մտնել: Թագավորը, որ բնավ էլ հեթանոս չէր դարձել և լոկ նպատակ ուներ դրանով եկեղեցու դիրքերը թուլացնել, զայրանալով՝ կարգադրեց սպանել Հուսիկին: Կաթողիկոսությունը խլվեց Լուսավորչի տոհմից, իսկ նոր ձեռնադրված կաթողիկոսներն անմռունչ ենթարկվում էին արքային:

Տիրանի կյանքի վերջին տարիներին կրկին պատերազմ բռնկվեց Հռոմի և Պարսկաստանի միջև: Հայոց թագավորն ստիպված եղավ դաշնակցել Հռոմի հետ: Վերջինս այդ կռիվներում պարտվեց, իսկ պարսկական զորքերը, դրանից օգտվելով, ներխուժեցին Հայաստան: Տիրանը գերի ընկավ և Շապուհ II-ի հրամանով կուրացվեց: Սակայն, ի վերջո, Շապուհ II-ը, պատերազմում անհաջողություն կրելով, ստիպված եղավ գերությունից ազատել Տիրանին: Գահ բարձրացավ Տիրանի որդի Արշակ II-ը:

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ՝ ԴՎԻՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԽՈՍՐՈՎԻ ՏՆԿԱԾ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Եվ հրաման տվեց թագավորն իր զորավարին՝ երկրից բազմաթիվ մշակներ հանել, անտառներից վայրի կաղնի բերել ու տնկել Այրարատյան դաշտում՝ սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչ Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես անտառ տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս անտառը կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ անտառ էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ»:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ ՄԱԶՔՈՒԹՆԵՐԻ ՍԱՆԵՍԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԶՈՐՔԵՐԻՆ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սրա (Խոսրով III Կոտակի) ժամանակ Հյուսիսային Կովկասի բնակիչները միաբանվելով, ...պարսից Շապուհ թագավորի գաղտնի հրամանով արշավեցին ու հասան մեր երկրի կենտրոնական վայրերը մեծ բազմությամբ՝ մոտ երկու բյուր մարդով: ...Նրանց դեմ դուրս եկան հայոց արևելյան ու արևմտյան զորքերը և երբ վանեցին դեպի Օշականի առապարը և թույլ չտվին, որ նրանք ցրիվ գալով նեղաձգություն կատարեն ըստ իրենց սովորության, այլ քաջաձի հեծյալները նրանց շտապ-շտապ ու արագապես հետամուտ լինելով մղեցին քարքարոտ դժվար տեղերը, այնպես որ թշնամիներն ակամա ստիպվեցին ճակատամարտ տալ: ...Այս ժամանակ քաջ Վահան Ամատունին դառնալով դեպի Կաթողիկե եկեղեցին՝ ասաց. «Օգնիր ինձ, Աստված...»: (Նա) գետին գլորեց ահագին հսկային: Այս դեպքը առիթ դարձավ թշնամիների փախուստին և հայոց զորքին զորացրեց հաղթանակ տանելու»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպես էր արքունիքը պայքարում թագավորական իշխանության ուժեղացման համար Խոսրով III Կոտակի օրոք:
2. Ինչու՞ էին նախարարներն ըմբոստանում արքունիքի դեմ:
3. Որտեղ հայկական բանակը ջախջախեց մազքութական զորքերը:
4. Ինչ անտառատնկումներ ու շինարարական գործունեություն է ծավալել Խոսրով III Կոտակը:
5. Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն է վարել Հայոց Տիրան թագավորը:
6. Ինչպիսի՞ն էին արքունիքի և եկեղեցու հարաբերությունները Տիրանի օրոք:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով՝ ինչու՞ էին Հայոց թագավորները իշխանական տոհմեր բնաջնջում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Մաքսիմիանոս Դայա • Կոստանդինոս • Գրիգորիս • Մանեա այրք • Խոսրով III Կոտակ • Դվին • Խոսրովի անտառ • Սանեսան • Շապուհ II Երկարակյաց • Դատաբե Բզնունի • Բակուր բդեշխ • Տիրան Արշակունի • Հուսիկ կաթողիկոս • Արշակ II

2. ԱՐՇԱԿ II-Ի ԵՎ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ԶԱՆՔԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Արշակ II: Արշակ II-ը (350-368թթ.) գահ բարձրացավ Շապուհ II-ի համաձայնությամբ: Ուստի նա, քանի դեռ չէր ամրապնդել իր իշխանությունը, աշխատում էր չգրգռել Սասանյան արքունիքին: Սակայն շուտով Արշակ II-ը կարողացավ իր դիրքերն ամրապնդել՝ արքունիք վերադարձնելով Մամիկոն-

յաններին և կարգավորելով հարաբերությունները մյուս նախարարական ընտանիքների հետ: Հռոմեական կայսրությունն աշխատում էր Մեծ Հայքում վերականգնել իր խարխլված դիրքերը: Սակայն ուժեղացած Արշակ II-ը ձգտում էր հավասարակշռված ու չեզոքության քաղաքականություն վարել իր երկու հզոր հարևանների նկատմամբ: Դա առաջ էր բերում ինչպես Հռոմեական կայսրության, այնպես էլ Սասանյան Պարսկաստանի դժգոհությունը:



Կաթողիկոս Ներսես Մեծ

Կամենալով եկեղեցին ծառայեցնել իր ներքին քաղաքականությանը՝ Արշակ II-ը 353թ. կաթողիկոսական գահ բարձրացրեց Հուսիկի թոռ ***Ներսես Մեծին***: Վերջինս մինչ այդ զինվորական էր և արքունիքում զբաղեցնում էր սենեկապետի պաշտոնը: Արշակի գահակալության առաջին շրջանում Ներսեսը թագավորի մերձավոր գործակիցն էր ու խորհրդատուն:

Կաթողիկոս ձեռնադրված Ներսեսը 354թ. ***Աշտիշատ*** ավանում հրավիրեց հայկական եկեղեցական առաջին ժողովը, որն ընդունեց մի շարք կանոններ և կենցաղային խնդիրները կարգավորող օրենքներ: Հատկապես խիստ կանոններ ընդունվեցին հեթանոսական սովորույթների դեմ: Արգելվեցին մերձավոր ազգականների ամուսնությունը, թաղումների ժամանակ անպարկեշտ լացն ու կոծը, հասցվող մարմնական վնասվածքները, բազմակնությունը և հեթանոսական այլ պարսավելի սովորույթներ: Ժողովը հիվանդանոցներ, աղքատանոցներ և հյուրանոցներ բացելու որոշում ընդունեց: Եկեղեցու սպասավորներ պատրաստելու համար վճռվեց բացել ասորերեն և հունարեն ուսուցմամբ դպրոցներ:

Հռոմի հետ հարաբերությունները կարգավորելու համար Ներսեսի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկվեց Կոստանդնուպոլիս, սակայն նա այստեղ ձերբակալվեց: Կայսրը Հայոց թագավորի դիրքերը թուլացնելու համար Հայաստան ուղարկեց Արշակի՝ պատանդության մեջ գտնվող եղբորորդիներ Գնելին և Տիրիթին: Նա նպատակ ուներ Արշակի հակահռոմեական քաղաքականության դեպքում նրանցից որևէ մեկին Հայոց գահ բարձրացնել: Հասկանալով դա՝ Արշակն սկզբում սպանել տվեց Գնելին, այնուհետև՝ Տիրիթին: Ապա թագավորն ամուսնացավ Գնելի այրի Փառանձեմի հետ՝ փորձելով սիրաշահել նրա հորը՝ հզոր նախարար Անդովկ Սյունուն:

Պայքար սկսվեց նախարարական տների ներսում: Վասակ սպարապետը դարձավ թագավորի հավատարիմ զինակիցը, իսկ նրա եղբայր Վահան Մամիկոնյանն անցավ պարսկամետների ճամբար: Հետագայում Վահան Մամիկոնյանը ուրացության համար սպանվեց որդու՝ Սամվելի ձեռքով:

Կամենալով ամրապնդել թագավորական իշխանության հիմքերը՝ Արշակը ***Կոգովիտ*** գավառում կառուցեց ***Արշակավան*** քաղաքը: Նա թույլատրեց

այնտեղ հաստատվել բոլոր դժգոհ տարրերին: Նոր քաղաքի հիմնադրումն ուժեղացնում էր թագավորին, քանի որ իրենց տերերին լքած բնակիչները դառնում էին թագավորի հենարանը: Բանն այն է, որ Արշակի կոչին՝ գալ և բնակվել Արշակավանում ու վայելել թագավորի հովանավորությունը, արձագանքում էին մեծ մասամբ աշխատավորները: Նրանք փախչում էին նախարարների շահագործումից և հավաքվում Արշակավանում: Սակայն քաղաքում սկսեցին ապաստանել նաև հանցագործ տարրեր՝ ձգտելով ազատվել դատական պատասխանատվությունից: Նախարարները և նրանց պաշտպանող եկեղեցին դա պատրվակ դարձրին՝ թագավորին մեղադրելու գողերին, ավազակներին ու այլ հանցագործների ապաստան տալու մեջ: Երբ Արշակ II-ը գտնվում էր Վրաստանում, նախարարները հարձակվեցին Արշակավանի վրա և ահավոր կոտորած կազմակերպեցին:

Արշակ II-ը, համախմբելով իր կողմնակիցներին, ճակատամարտ տվեց ապստամբ նախարարներին: Սակայն կողմերից ոչ մեկը չհաղթեց, և կաթողիկոս Ներսես Մեծի միջնորդությամբ հաշտություն կնքվեց: Դրա համաձայն՝ թագավորը պարտավորվում էր հարգել նախարարների իրավունքները: Վերջիններս էլ խոստանում էին նրան հավատարմորեն ծառայել: Սակայն Արշակը հաշտություն կնքեց միայն ժամանակ շահելու համար: Նա, ուժերը համախմբելով, հարձակվեց Արշակավանը կործանած նախարարների տիրույթների վրա: Արշակը շատերին կոտորեց, իսկ Կամսարականների ընտանիքը գրեթե բնաջնջեց:

Արշակ II-ի թագավորության վերջին տարիները նշանավորվեցին հռոմեա-պարսկական պատերազմներով: Թե՛ Հռոմը և թե՛ Սասանյան Պարսկաստանը, հաշվի առնելով այս կամ այն կողմին դաշնակցելու դեպքում Հայաստանի ռազմուժի վճռորոշ լինելը, փորձում էին իրենց կողմը գրավել Արշակ II-ին: Նա, սակայն, վարում էր ճիշտ՝ չեզոք քաղաքականություն՝ ամրապնդելով Հայոց թագավորության հզորությունը: Այսուհանդերձ, Հայոց երկիրը չխուսափեց պարսկական ներխուժումներից:

Ի վերջո, ելնելով ուժերի հարաբերակցությունից, Արշակ II-ը որոշեց դաշնակցել հռոմեացիների հետ: Հուլիանոս կայսրը 363թ. մեծ բանակով արշավեց Պարսկաստան և հասավ մինչև Տիգրոն: Արշակ II-ը հայկական զորքերով և նրանց միացած հռոմեական զորաբանակներով հարձակվեց Մարաստանի վրա: Սակայն Հուլիանոսը կռիվներից մեկում զոհվեց, իսկ նոր կայսր Հովիանոսը Շապուհ II-ի հետ ամենանվաստացուցիչ պայմաններով հաշտություն կնքեց: Հայաստանի համար ամենավտանգավորն այն էր, որ կայսրությունը պարտավորվում էր դեպի Հայաստան պարսկական արշավանքի դեպքում հայերին չօգնել: Հաշտությունն այնքան նվաստացուցիչ էր, որ իրենք՝ հռոմեացիներն անվանել են ***«ամոթալի»***:

Շապուհ II-ը, իրեն ազատ զգալով, հարձակվեց Հայոց թագավորության վրա: Հայ-պարսկական պատերազմը տևեց 4 տարի: Հայերն սկզբում հաջո-

ղությամբ հետ էին մղում պարսից բանակի հարձակումները և իրենց հերթին ներխուժում պարսկական երկրամասեր: Սակայն ուժերն անհավասար էին, և Հայաստանի հնարավորություններն սկսեցին սպառվել: Այդ ժամանակ Շապուհ II-ը դիմեց նենգ քայլի: Նա Արշակ II-ին հրավիրեց Տիզբոն՝ հաշտություն կնքելու: Այդ խորամանկ առաջարկն արժանացավ պատերազմից հոգնած նախարարների հավանությանը: Արշակ արքան ու սպարապետ Վասակ Մամիկոնյանը ստիպված ուղևորվեցին Տիզբոն՝ նախապես Շապուհից ստանալով անվտանգության երաշխիքներ: Սակայն Տիզբոնում Արշակը ձերբակալվեց և նետվեց Անհուշ բերդը, որտեղ շուտով մահացավ, իսկ Վասակ Մամիկոնյանը մորթազերծ արվեց:

Արշակ II-ը մեծ հայրենասեր էր: Նա ապրեց ու պայքարեց իր հայրենիքի պաշտպանության համար: Ժողովուրդն Արշակին նվիրել է մի շարք երգեր՝ փառաբանելով նրա խիզախությունն ու հայրենասիրությունը:

Պապ թագավորը և Մեծ Հայքի թագավորության հզորության վերականգնման նրա փորձերը: Արշակ II-ի ձերբակալումից հետո պարսկական զորքերը 368թ. կրկին ներխուժեցին Հայաստան: ***Փառանձեմ*** թագուհին թագաժառանգ ***Պապի*** հետ ամրացավ ***Արտագերս*** ամրոցում: Բերդի կայազորն անսպասելի հարձակմամբ խայտառակ ջարդ է տալիս ամրոցը պաշարած պարսկական զորքերին: Դրանից հետո օգնության խնդրանքով Պապն ուղարկվում է հռոմեացիների մոտ:

Շապուհը նոր բանակ ուղարկեց Հայաստան: Երբ թվում էր, թե դրան նույնպես սպառնում էր առաջինի ճակատագիրը, Արտագերսում համաճարակ սկսվեց: Երբ Արտագերսը գործնականում զրկվեց իր պաշտպաններից, պարսիկները գրավեցին ամրոցը և գերեցին ու տանջամահ արեցին Փառանձեմին: Այնուհետև պարսիկները Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի գործակցությամբ գրավեցին ու ավերեցին ***Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Վանը, Զարիշատը*** և Հայոց թագավորության այլ խոշոր քաղաքներ: Քաղաքների բնակչությունը, ինչպես արդեն նշվել է, բռնագաղթեցվեց Պարսկաստան:

Փառանձեմ թագուհի

Ահա այսպիսի բարդ պայմաններում Պապը հռչակվեց Հայոց թագավոր (370–374թթ.): Հենց սկզբից նա հայտնվեց դժվարին կացության մեջ: Բարբարոսական ցեղերի հարձակումների պատճառով հռոմեացիները չէին կարողանում օգնական ուժեր տրամադրել, իսկ պարսիկներն ավերում էին երկիրը: Ի վերջո, Վաղես կայսրը 370թ. հնարավորություն ունեցավ զորք ուղարկելու

Հայաստան: Մի շարք ճակատամարտերում հաջողության հասնելով՝ հայ-հոռոմեական բանակները, սպարապետ ***Մուշեղ Մամիկոնյանի*** հրամանատարությամբ, 371թ. Նպատ լեռան մոտ՝ Ձիրավի դաշտում ջախջախեցին պարսկական զորքերը:

Պապը, չնայած երիտասարդ հասակին, հանդես բերեց պետական շնորհալի գործչի անուրանալի հատկություններ: Նա ձեռնամուխ եղավ պարսկական արշավանքների ընթացքում Մեծ Հայքից անջատված երկրամասերի միավորմանը և թագավորության տարածքային ամբողջականության վերականգնմանը: Մուշեղ Մամիկոնյանին հաջողվեց կարճ ժամանակում վերականգնել Հայոց թագավորության մինչպատերազմյան սահմանները:

Պատերազմից երկիրը տնտեսապես խիստ տուժել էր և թուլացել: Երիտասարդ միապետից պահանջվում էին գերմարդկային ջանքեր՝ վերականգնելու թագավորության տնտեսությունը և ռազմական հզորությունը: Արշակ II-ի ու նախարարների հակադրության դառը հետևանքները հաշվի առնելով՝ Պապը խուսափեց երկիրը վերաշինել նախարարներին հարկման ենթարկելով: Նա աշխատեց դա կատարել եկեղեցու տնտեսական կարողությունը թուլացնելու ճանապարհով: Բնակչությունն ազատվեց եկեղեցուն վճարվող հարկերից: Դեռևս Տրդատ Մեծի օրոք եկեղեցուն տրված հողատարածքների մեծ մասն առգրավվեց և բաժանվեց զինվորներին: Խիստ կրճատվեց հոգևորականների թիվը: Հոգևորականների ազգականները, որ մինչ այդ ազատված էին զինվորական ծառայությունից, զորակոչվեցին բանակ: Գործող բանակի զինվորների թիվը դրա շնորհիվ շուտով հասավ 90 հազարի:

Պատերազմի հետևանքով երկրի բնակչությունը խիստ կրճատվել էր, իսկ ծնելիությունը՝ նվազել: Վիճակը շտկելու համար թագավորի հրամանով փակվեց դեռևս Ներսես Մեծի օրոք բացված կուսանոցների ու մենաստանների զգալի մասը: Կույսերին ամուսնանալու իրավունք տրվեց: Պետական եկամուտները մեծացնելու նպատակով Պապը լուծարեց պետության և եկեղեցու միջոցներով պահվող բարեգործական շատ հաստատություններ:

Պապի քաղաքականությունը, որի միակ նպատակը Հայոց թագավորության հզորության վերականգնումն էր, առաջ բերեց նախարարների մի մասի և եկեղեցու սպասավորների ատելությունը: Պապին սկսում են մեղադրել անգամ Ներսես Մեծ կաթողիկոսին թունավորելու մեջ, մինչդեռ վերջինս մահացել էր թոքերի հիվանդությունից: Պապի հեղինակությունը մեծ էր երկրում, հատկապես ժողովրդական զանգվածների շրջանում: Ուստի բնավ պատահական չէ, որ հռոմեական պատմիչ Ամիանոսը նրան բնութագրում է որպես եռանդուն, խիզախ և խելոք իշխողի:

Հայոց թագավորության ուժեղացմանն ուղղված Պապի քայլերը և անկախ քաղաքականությունն առաջ բերեցին հռոմեական արքունիքի խիստ դժգոհությունը: Նպատակ ունենալով Պապին գահընկեց անել՝ կայսրը նրան բանակցությունների պատրվակով հրավիրեց Կիլիկիայի Տարսոն քաղաք: Սակայն

Հայոց թագավորը, պարզելով կայսեր նենգ նպատակը, իր 300 թիկնապահներով փախուստի դիմեց: Նա վերադարձավ Հայաստան՝ ուրախությամբ ընդունվելով ժողովրդի կողմից: Կայսրը ստիպված ներողություն խնդրեց տեղի ունեցած «թյուրիմացության» համար, իսկ Պապն էլ ձևացրեց, թե ոչինչ չի պատահել:

Հայ-հռոմեական հակասությունների հետագա սրման պատճառ դարձան Ներսեսի մահից հետո նոր կաթողիկոսի ձեռնադրությունը և հայ-պարսկական հարաբերությունները կարգավորելու Պապի փորձերը: Սկզբում Պապը փորձեց կաթողիկոս ձեռնադրվելու համար Կեսարիա ուղարկել իր թեկնածուին, որին տեղի միտրոպոլիտը[1] չընդունեց: Համոզվելով, որ Հայոց կաթողիկոսի ընտրությանը հռոմեական արքունիքն ու եկեղեցին միշտ միջամտելու են, Պապը դիմեց արմատական քայլի: Աղբիանոսյան Հուսիկ եպիսկոպոսին նա այլևս Կեսարիա չուղարկեց: Նրան կաթողիկոս ձեռնադրեցին Հայաստանում հայոց եպիսկոպոսները: Նույնիսկ այսօր դժվար է գերագնահատել կատարվածը: Պապի այդ արմատական քայլի շնորհիվ Հայոց եկեղեցին դարձավ անկախ, ինքնուրույն և հաստատուն բռնեց ազգային հոգևոր հաստատության վերածվելու ճանապարհը:

Հռոմեական արքունիքը դժգոհությամբ ընդունեց Հայոց կաթողիկոսի՝ Հայաստանում ձեռնադրվելու փաստը: Բացի դրանից՝ Հռոմի ու Պարսկաստանի միջև խուսանավելու Պապի քայլերը, որոնք ուղեկցվում էին հայ-պարսկական հարաբերությունների բարելավմամբ, անհանգստացրին կայսերը: Նրա գործակալները, որոնք գտնվում էին Հայաստանում և հետևում էին Պապի ամեն քայլին, հանձնարարություն ստացան սպանելու Հայոց թագավորին: Հայաստանում գտնվող հռոմեական զորքերի հրամանատարը 374թ. Պապին հրավիրեց ճաշկերույթի, որի ժամանակ էլ սպանել տվեց նրան: Եթե Պապը գոնե երկու տասնամյակ ևս թագավորեր, թերևս կարողանար այնքան զորեղացնել ու կենսունակ դարձնել երկիրը, որ V դ. 20-ական թվականներին Հայոց թագավորությունը չէր կործանվի: Պապի սպանությամբ Մեծ Հայքի թագավորությունը զրկվեց երիտասարդ տաղանդավոր թագավորից: Ցավոք, Պապի հաջորդներն ի վիճակի չեղան շարունակելու նրա սկսած հայրենանվեր գործը:

Հայոց պետության կենտրոնացման ու թագավորական կենտրոնաձիգ իշխանության ամրապնդման, երկիրը ռազմականապես հզորացնելու Արշակ II-ի, Պապի և նրանց նախորդների փորձերը ձախողվեցին: Պատճառը ոչ միայն ավատականացած նախարարությունների պառակտիչ գործունեությունն էր, այլև Հռոմի ու Պարսկաստանի՝ Հայաստանն իրենց ենթարկելու քաղաքականությունը:

1. Հռոմեական պրովինցիայի հոգևոր առաջնորդ, որին ենթարկվում էին գավառների եպիսկոպոսները:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

«Իսկ երբ արևը ծագեց մեր զորքերի դեմուդեմ, պղնձապայծ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և (այդ ճակատից) դուրս էին թռչում մեր նախարարներից լավ զրահավորվածները ինչպես փայլատակող ճառագայթներ, որոնց տեսքից միայն պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ... Կռվի խառնուրդի ժամանակ Սպանդարատ Կամսարականը հանդիպեց մի մեծ խմբի, որի մեջ էր քաջ Ղեկաց (լեզգիների) թագավորը՝ Շերգիրը, որ (զորքի) ճակատի մեջտեղում պինդ կանգնած էր՝ միջին գնդի գլուխն անցած: Սպանդարատը հարձակվեց, խումբը ճեղքեց և քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման, և խումբը շուռ տալով փախուստի մատնեց: ...Բայց չարագործ Մեհրուժանը ձիու վիրավորված լինելու պատճառով չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ, հայոց Սմբատ սպարապետը աճապարելով հասավ նրա մոտ, նրա հետ եկող զորքերին կոտորեց և այն թշվառականին ձերբակալեց Կոգայովտի եղեգնուտի ափին: ...Նա (Սմբատը) շամփուրը տաքացնելով երկու փաթ բոլորեց պսակի ձևով և շիկացնելով ասաց. «Քեզ պսակում եմ, Մեհրուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»: Եվ կրակի նման շիկացած (շամփուրը) դրեց Մեհրուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց: Այնուհետև երկիրը խաղաղվեց՝ Պապի ձեռքի տակ նվաճվելով»:

ԱՄԻԱՆՈՍԸ՝ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սատկացավ (Վաղես կայսեր) անհաշտ ատելությունը Պապ թագավորի նկատմամբ: Նրա կարգադրությամբ սկսեցին անընդմեջ նորանոր նենգություններ հորինել՝ նպատակ ունենալով զրկել նրան կյանքից: Դավադրությունը գլուխ բերելու գործը հանձնարարվեց Տրայանոսին, որն այդ ժամանակ Հայաստանում հռոմեական զորքերի հրամանատար էր նշանակված:

...Վերջիվերջո, երբ դավադրությունը լիովին կազմակերպվեց, (զորավարը) շատ քաղաքավարի ձևով Պապին հրավիրեց իր մոտ ճաշի: Թագավորը ոչ մի վտանգ չզգալով, եկավ և նստեց իրեն տրամադրված պատվավոր տեղում: Մատուցվեցին ընտիր կերակուրներ: Երբ գինին տաքացրեց գլուխները, ինքը՝ հրավիրող Տրայանոսը, դուրս գնաց: Ապա ներս եկավ ահեղատես մի բարբարոս, որը թափահարելով պատյանից հանած սուրը, մոտեցավ երիտասարդ թագավորին, որ սպանի նրան: Թագավորը... վեր կացավ և հանեց դաշույնը, որպեսզի, որքան կարող է, պաշտպանի իր կյանքը, սակայն նա վայր ընկավ կրծքից խոցված որպես ամոթալի մի զոհ և հոշոտվեց կրկին հասցված հարվածներից: Ահա այսպիսի նենգությամբ իարդահիվեց դյուրահավատությունը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երկրի կյանքը կարգավորելու ինչ քայլեր կատարեց Արշակ II-ը իր կառավարման սկզբնական շրջանում:
2. Ինչ որոշումներ ընդունեց Աշտիշատի ժողովը: Ո՞րն էր դրանց նշանակությունը:

3. Եկեղեցու համար հոգևորականներ պատրաստելու նպատակով որ լեզուների ուսուցմամբ դպրոցներ բացվեցին:
4. Ինչ նպատակներ էր հետապնդում Արշակ II-ը՝ կառուցելով Արշակավան քաղաքը:
5. Ո՞ւմ միջև կնքված պայմանագրով Հռոմը բախտի քմահաճույքին թողեց իր դաշնակից Մեծ Հայքի թագավորությունը: Ինչո՞ւ է Ամիանոսը պայմանագիրն անվանում «ամոթալի»:
6. Ինչ պայմաններում Պապը հաստատվեց Հայոց գահին:
7. Ինչպե՞ս է Մովսես Խորենացին նկարագրում Ձիրավի ճակատամարտը:
8. Ինչ քայլեր ձեռնարկեց Պապ թագավորը՝ երկիրը տնտեսապես վերականգնելու և ռազմականապես ուժեղացնելու համար:
9. Ինչո՞ւ Հռոմը որոշեց հաշվեհարդար տեսնել Պապ թագավորի հետ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն էր, Ձեր կարծիքով, Արշակավանի կառուցման գլխավոր նպատակը, և ինչո՞ւ էին նախարարներն այդպես կտրուկ դիմադրում Արշակ II-ի կողմից այդ քաղաքի կառուցմանը:
2. Ինչ եք կարծում՝ արդյոք Պապ թագավորի սպանությունը միայն հռոմեացիների՞ն էր ձեռնտու:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Ներսես Մեծ • Աշտիշատի ժողով • Արշակավան • Հուլիանոս • Հովիանոս • Արտագերս • Պապ Արշակունի • Մուշեղ Մամիկոնյան • Ձիրավի ճակատամարտ

3. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Հայոց թագավորության թուլացումը: Պապ թագավորի սպանությունը սառը ցնցուղի տպավորություն թողեց Հայաստանում: Նախարարների մի մասն անգամ պատրաստ էր դաշնակցել Պարսկաստանի հետ և թագավորի սպանության համար Հռոմից վրեժ լուծել: Սակայն հռոմեամետ նախարարները, որոնց մեջ էին նաև Պապին դավադրածները, այլ կերպ էին մտածում: Նրանք աշխատում էին մյուսներին համոզել, որ Հայոց թագավորությունը ո՛չ կարող է պարսիկների գերիշխանությունն ընդունել, ո՛չ էլ միաժամանակ երկու տերությունների հետ թշնամանալ: Իր հերթին, հռոմեական կայսրը Հայոց թագավորի սպանության մեջ «մեղադրեց» իր զորավարին և Հայաստան՝ թագավորելու ուղարկեց ***Վարազդատ Արշակունուն*** (374–378թթ.): Նա հաղթանդամ ու ֆիզիկապես ուժեղ երիտասարդ էր, արժանացել էր օլիմպիական խաղերի ախոյանի (չեմպիոնի) պատվին:

Վարազդատի կարճատև թագավորության շրջանում սպարապետի պաշտոնը շարունակում էր զբաղեցնել Մուշեղ Մամիկոնյանը: Նա, Փավստոս Բուզանդի խոսքերով, ***«առաջնորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները»:*** Սակայն նրա վարքագիծը շուտով առաջ բերեց թագավորի դժգոհությունը: Սպարապետը, առանց թագավորին տեղյակ պահելու, խորհրդակցում էր Մեծ Հայքում գտնվող հռոմեական զորավարների և, նրանց միջոցով, կայսեր հետ: Նա կայսրին առաջարկում էր Հայոց աշխարհի ամեն մի գավառում քաղաք-ամրոցներ կառուցել և ընդդեմ պարսիկների դրանք վերածել ամուր զորակայանների: Դրանցում պետք է կայսրության ծախսով հայկական կայազորներ պահվեին: Սակայն երաշխիք չկար, թե այդ զորակայաններում հռոմեական զորամասեր չէին տեղակայվի: Փավստոս Բուզանդի խոսքերով՝ կայսրը դրան ուրախությամբ համաձայնեց, որպեսզի Հայոց աշխարհը հաստատորեն կապվի Հռոմի հետ:

Առաջին հայացքից՝ դա կարծես թե արվելու էր հանուն Հայոց թագավորության ուժեղացման: Սակայն դժվար չէր տեսնել, որ դրա հետևանքով երկիրը կդադարեր անկախ լինելուց: Ինչպես և սպասելի էր, այդ ծրագիրը բացահայտվեց: Մուշեղի հռոմեամետ գործունեությունն առաջ բերեց անկախության ջատագով նախարարների բուռն դիմադրությունը: Թագավորն իր հերթին սպարապետի վարքագծի մեջ որոշակի վտանգ տեսավ իր արքայական իրավունքների նկատմամբ: Նրա կարգադրությամբ Մուշեղն սպանվեց: Սպարապետության պաշտոնը հանձնվեց Բատ Սահառունուն:

Հայ նախարարության պառակտումը՝ անկախության ջատագով, հռոմեամետ ու պարսկամետ խմբերի, ավելի բարդացրեց կացությունը: Դրանից օգտվեց պարսից արքունիքը: Այն Հայաստան ուղարկեց Մամիկոնյան տոհմի մեկ այլ ներկայացուցչի՝ ***Մանվելին***, որը հաստատվեց Մամիկոնյան տոհմի նահապետի պաշտոնում: Մանվելը երկրից դուրս քշեց Վարազդատին: Վերջինս, որի գործունեությունից հռոմեացիները խիստ դժգոհ էին, փախավ կայսրություն, որտեղ, սակայն, ձերբակալվեց և աքսորվեց:

Մանվել Մամիկոնյանը Հայոց աշխարհ էր եկել որպես պարսից արքունիքի վստահելի անձ: Սակայն շուտով, երկրի գործերին պարսկական միջամտությունից զայրացած, նա վռնդեց պարսիկների կողմից իրեն որպես օգնություն ուղարկված զորամասը: Մանվելը գահ բարձրացրեց Պապի մանկահասակ որդիներ ***Արշակ III-ին*** և ***Վաղարշակին***: Ինքը դարձավ նրանց խնամակալը՝ զբաղեցնելով սպարապետի պաշտոնը: Մանվելը վարում էր Հայոց թագավորությունն ուժեղացնելու և նրա անկախությունը պահպանելու քաղաքականություն: Այդ նպատակով նա բարելավեց հարաբերությունները նաև Հռոմի հետ: Մանվելի խնամակալության տարիները եղան երկրի տնտեսական բարգավաճման և խաղաղ զարգացման շրջան:

Մանվելի մահից հետո Արշակ III-ն իր շեշտված հռոմեամետության պատճառով առաջ բերեց թե՛ հայրենասեր և թե՛ պարսկամետ նախարարների

դժգոհությունը: Վերջիններս դիմեցին պարսից Շապուհ III թագավորին՝ Հայաստանում այլ թագավոր նշանակելու խնդրանքով: Շապուհը Հայաստանի թագավոր կարգեց ***Խոսրով IV Արշակունուն***: Արշակ III-ը ստիպված էր հեռանալ Արևմտյան Հայաստան և բավարարվել թագավորության արևմտյան մի փոքր հատվածով: Մեծ Հայքի թագավորությունը փաստորեն բաժանվեց երկու առանձին թագավորությունների:

Մեծ Հայքի թագավորության բաժանումը: Համոզվելով, որ իրենցից ոչ մեկին չի հաջողվի ամբողջությամբ տիրանալ Հայոց թագավորությանը, հռոմեական կայսրը և պարսից արքան որոշեցին այն բաժանել միմյանց միջև: 387թ. կողմերը պայմանագիր կնքեցին, որով Մեծ Հայքի թագավորության՝ Արշակ III-ի իշխանության ներքո գտնվող երկրամասերը, որպես ենթակա թագավորություն, անցան Հռոմին, իսկ Խոսրով IV-ի իշխանության ներքո գտնվող երկիրը, իբրև հպատակ թագավորություն, անցավ Պարսկաստանին: ***Դրանով Մեծ Հայքի տարածքում ձևավորված երկու թագավորությունները վերածվեցին կիսանկախ պետական միավորների:***

Արշակ III-ը շատ չանցած մահացավ: Հռոմեացիներն անմիջապես օգտվեցին դրանից և լուծարեցին իրենց իշխանության ներքո գտնվող հայկական թագավորությունը: Ճիշտ է, այդ երկրամասը պահպանում էր լայն ինքնավարություն, սակայն թագավորության վերացումը սթափեցրեց անգամ հռոմեամետ նախարարներին:

Մեծ Հայքի վերամիավորումը: Արևմտյան երկրամասերի որոշ նախարարներ, որոնք դեռ Արշակ III-ի թագավորության շրջանում դժգոհ էին նրա իշխանությունից, փորձեցին համաձայնության գալ Խոսրով IV-ի հետ: Նրանք նույնիսկ Արշակ III-ի գանձերը փախցրեցին և հանձնեցին Խոսրով IV-ին: Արշակ III-ի հետ՝ թագավորության արևելյան երկրամասերից Մեծ Հայքի արևմտյան մաս էին տեղափոխվել մեծ թվով նախարարներ: Երբ հռոմեացիները վերացրին իրենց ենթակա Հայկական թագավորությունը, հայ նախարարները դիմեցին Խոսրով IV-ին՝ խնդրելով իրենց վերցնել իր ենթակայության ներքո: Խոսրովն այդ նախարարներին վերցրեց իր հովանու տակ ու վերադարձրեց նրանց տիրույթները: Եթե ինչ-ինչ տիրույթներ ուրիշների էին հանձնվել, դրանք փոխհատուցեց արքունի տիրույթների հաշվին: Խոսրովը միաժամանակ լուրջ քայլեր ձեռնարկեց՝ վերամիավորելու տրոհված թագավորության երկու մասերը: Նա դիմեց հռոմեական կայսրին՝ խնդրելով հարկ մուծելու պայմանով իրեն հանձնել Հայոց թագավորության՝ կայսրությանն անցած հողերը: Հռոմեական արքունիքն իր շահերից ելնելով՝ համաձայնեց Խոսրով IV-ի խնդրանքին:

Պարսից թագավորը ուշադիր հետևում էր Խոսրովի գործունեությանը: Հայոց թագավորության վերամիավորումը նրան չէր գոհացնում: Անմիջապես պարսկական մի բանակ ներխուժեց Հայաստան և ձերբակալեց թագավորին:

Մի խումբ հայ նախարարներ, ***Շավարշ Կամսարականի*** ղեկավարությամբ, ընդամենը 700 զինվորով փորձեցին ազատել նրան: Եվ մինչ այդ զորամասը ծանր կռիվ մղելով գրոհում էր պարսկական զորքերի վրա, հերոսների մի այլ խումբ, միանալով Շավարշին, փորձեց ազատել շղթայակապ թագավորին: Խոսրովին ազատել չհաջողվեց, իսկ հայկական զորախումբը գրեթե ամբողջությամբ ոչնչացվեց: Եվ ոչ մի զինվոր մարտադաշտը չլքեց՝ առաջ բերելով պարսիկների զարմանքն ու հիացմունքը: Խոսրովը գահընկեց արվեց և բանտարկվեց Անհուշ բերդում:

Խոսրով IV-ին ազատելու թեկուզ և անհաջող փորձը սթափեցրեց պարսից արքունիքին: Հասկանալով, որ ամեն մի խստություն Հայաստանում լոկ կբորբոքի հակապարսկական տրամադրությունները, Շապուհ III-ն ամեն ինչ թողեց նախկինի պես: Նա հայ նախարարների խնդրանքով գահ բարձրացրեց Խոսրովի եղբայր ***Վռամշապուհին*** (388-414թթ.):



Սբ Մեսրոպ Մաշտոց

Վռամշապուհի գահակալությունը: Հայոց թագավորության անկումը: Վռամշապուհի գահակալության տարիները արտաքին խաղաղության և ներքին հանգստության շրջան էին: Նրա օրոք հայ մշակույթը մեծ վերելք ապրեց: Սակայն քաղաքական ասպարեզում, հակառակ Խոսրովի, Վռամշապուհն իր առջև երբեք մեծ խնդիրներ չդրեց: Վռամշապուհի օրոք ու նրա օժանդակությամբ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը 405թ. ստեղծեց հայոց գրերը: Վռամշապուհի մահից հետո հայ նախարարների խնդրանքով կրկին Հայոց գահ բարձրացավ պարսկական գերությունից ազատված Խոսրով IV-ը: Սակայն նա գահակալեց ընդամենը մի քանի ամիս: Կամենալով հայերին վարժեցնել օտար տիրապետությանը՝ պարսից արքան Հայոց թագավոր կարգեց իր որդի ***Շապուհին*** (415-419թթ.): Սակայն այս գահակալին չհաջողվեց ձեռք բերել հայ նախարարների համակրանքը: Մովսես Խորենացու խոսքերով՝ ***«բոլորը նրան ատեցին և թագավորաբար չէին մեծարում որսի կամ խաղերի ժամանակ»***: Շատ չանցած՝ Տիզբոն վերադառնալիս նա սպանվեց: 422թ. Բյուզանդական կայսրության (այսպես էր կոչվում Արևելահռոմեական կայսրությունը 395թ. հետո) և Պարսկաստանի միջև հաշտություն կնքվեց: Դրանից հետո պարսից թագավորի համաձայնությամբ Արևելյան Հայաստանում գահ բարձրացավ Վռամշապուհի որդի ***Արտաշես*** (***Արտաշիր) Արշակունին***:

Արտաշեսն էլ իր վեցամյա թագավորության ընթացքում չկարողացավ կարգավորել հարաբերությունները նախարարների հետ, որոնք հակադրվում էին նրան: Սահակ Պարթևն ըստ ամենայնի օգնում էր արքային՝ փորձելով ամեն գնով փրկել թագավորական իշխանությունը: Նա արեց ամեն ինչ՝

թագավորին հաշտեցնելու անհնազանդ նախարարների հետ: Սակայն կաթողիկոսը հաջողության չհասավ: Պարսից արքունիքը փորձ արեց իր կողմը գրավելու նաև Սահակ Պարթևին՝ խոստանալով նոր տիրույթներ ու առանձնաշնորհումներ: Սակայն հայրենասեր կաթողիկոսը գործարքի չգնաց: Արտաշեսը 428թ. պարսից արքունիքի կողմից գահընկեց արվեց, իսկ Սահակ Պարթևը զրկվեց կաթողիկոսական իշխանությունից: Արևելահայկական թագավորությունն ընկավ: Երկիրն անդամահատվեց: Նրանից անջատվեցին և հարևան վարչական միավորներին կցվեցին մի շարք երկրամասեր: Երկրի հիմնական տարածքը վերածվեց մեծ ինքնավարություն ունեցող պարսկական մարզի: Այն կառավարելու էր պարսիկ մարզպանը:

Հայ ժողովուրդն ստիպված էր համառ ու երկարատև պայքար մղել պետական անկախության վերականգնման համար: Նա հասկանում էր, որ այդ նպատակին կարող է հասնել միայն ազգային միասնությամբ:

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ապա հունաց և պարսից թագավորները իրար հետ խորհուրդ արին և համաձայնության եկան: Նրանք հարմար համարեցին նախ Հայոց աշխարհը երկու բաժին անել իրենց մեջ: Նրանք ասում էին. «Մեր երկուսի միջև ընկած է այս հզոր և հարուստ թագավորությունը. լավ կլինի, որ այս միջոցով թուլացնենք և խանգարենք այս թագավորությունը: Նախ երկու մասի բաժանենք այս երկու Արշակունի թագավորներով, որոնց նշանակեցինք, հետո կաշխատենք նրանց էլ թուլացնել, աղքատացնել և մեր ծառայության ենթարկել, որպեսզի մեր մեջ չկարողանան գլուխ բարձրացնել»:

Այսպես մտածելով՝ նրանք երկու մասի բաժանեցին երկիրը. պարսից կողմի բաժինը մնաց Խոսրով թագավորին, իսկ հունաց կողմի բաժինը՝ Արշակ թագավորին: Բայց Խոսրովի բաժինն ավելի մեծ էր, քան Արշակինը: Եվ երկուսից էլ շատ գավառներ կտրեցին. և այն ժամանակ ու այնուհետև Հայոց թագավորությունը բաժանվեց, ցրվեց, նվազեց, իր նախկին մեծությունից ընկավ»:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երբ Խոսրովը տիրեց հայոց բոլոր նախարարներին, ինչպես ցանկանում էր, Արկադ կայսրին դիմում է խնդրելով, որ իրեն վստահի Հայաստանի հունական մասն էլ, որը շեն պահելով՝ նրան ճշտությամբ հարկերը կվճարի, ինչպես նրա գործակալները: Եվ Արկադը, կասկածելով, թե հայոց նախարարները միաբանվելով իրենից բաժինը կառնեն և պարսիկներին կտան, կատարում է Խոսրովի խնդրածը»:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՈՂԲԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը...

Եվ մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս. կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները՝ զորացած. հավատը ծաիվում է այս ունայն կյանքի համար: Տները թալանվում են, սրացվածքները՝ հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ թագավորեց Հայաստանում Պապի սպանությունից հետո: Ինչո՞վ էր նա հայտնի:
2. Ինչպե՞ս էր ցանկանում ուժեղացնել Հայոց թագավորության անկախությունը Մուշեղ Մամիկոնյանը, և ինչո՞ւ նրա ծրագիրը բուռն դիմադրություն առաջ բերեց երկրում:
3. Ե՞րբ և ինչպե՞ս տեղի ունեցավ Մեծ Հայքի թագավորության բաժանումը Հռոմի և Պարսկաստանի միջև:
4. Ինչպե՞ս Խոսրով IV թագավորը կարողացավ իր շուրջը համախմբել նախարարներին և վերամիավորել Մեծ Հայքի թագավորությունը:
5. Ինչո՞ւ պարսից արքունիքը պարսից թագաժառանգ Շապուհին նշանակեց Հայոց թագավոր:
6. Թվարկե՛ք Արշակունյաց արքայատոհմի առավել նշանավոր գահակալներին:
7. Ի՞նչ դեր խաղաց Վռամշապուհը հայոց պատմության մեջ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչպե՞ս կգնահատեք Խոսրով IV թագավորին ազատելու հայկական փոքրաթիվ զորախմբի գործողությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Վարազդատ Արշակունի • Արշակ III • Խոսրով IV • Շավարշ Կամսարական • Սահակ Պարթև • Շապուհ • Վռամշապուհ • Արտաշես Արշակունի • մարզպան

2-րդ թեմայի ամփոփում

1. Քրիստոնեության պետական կրոն հռչակվելով Մեծ Հայքի թագավորական իշխանությունը մեծապես ամրապնդվեց: Հայ Արշակունիները, որոնք նախորդ դարերում զգալի արտոնություններ էին տվել նախարարներին, Խոսրով III Կոտակից սկսած՝ հետևողական պայքար էին մղում արքունի տիրույթների ընդարձակման և կարևոր մայրուղիներն իրենց ենթակայության տակ վերցնելու ուղղությամբ: Դա առաջ է բերում նախարարների ըմբոստություններ ու ապստամբություններ, որոնք դաժանորեն ճնշվում են Հայոց թագավորների կողմից, իսկ որոշ նախարարական տներ՝ ոչնչացվում:
2. Արքունիքի և նախարարության միջև հակամարտությունը սրվեց Տիրանի և հատկապես Արշակ II-ի գահակալության տարիներին: Դրան մեծապես նպաստում էին Հռոմը և Սասանյան Պարսկաստանը: Նախարարները պարսից ուժերի օժանդակությամբ ավերեցին Արշակավան քաղաքը և կոտորեցին նրա բնակիչներին: Իր հերթին արքունիքն էլ՝ հանձին Արշակ II-ի, ոչնչացրեց մի շարք նախարարական տներ, սպանեց գահի հավակնորդներ Գնելին և Տիրիթին: Դրան հաջորդած հայ-պարսկական պատերազմում հաջողության չհասնելով՝ պարսից Շապուհ II թագավորը բանակցությունների համար Տիզբոն հրավիրեց Արշակ թագավորին և Վասակ Մամիկոնյան սպարապետին: Նրանցից առաջինը բանտարկվեց Անհուշ բերդում, իսկ երկրորդը սպանվեց:
3. Հայոց թագավորության վերականգնման համար պայքարը շարունակեցին Արշակ II-ի որդի Պապ թագավորը և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը: Ազատագրական պատերազմը ոտքի հանեց ամբողջ ժողովրդին: Հայկական բանակը 371թ. Ձիրավի ճակատամարտում ջախջախեց պարսկական բանակն ու վտարեց երկրից: Պապը վարեց ինքնուրույն քաղաքականություն՝ ձգտելով կարգավորել հարաբերությունները Պարսկաստանի հետ և տարածաշրջանում ստեղծել ուժերի հավասարակշռություն: Նա ձեռք է բերում ժողովրդական լայն զանգվածների համակրանքը և Հռոմի թշնամանքը: Կայսերական արքունիքը կազմակերպում է նրա սպանությունը:
4. Պապը Արշակունյաց վերջին նշանավոր գահակալն էր, որ կարող էր վերականգնել թագավորության երբեմնի հզորությունը: Նրա հաջորդների օրոք Մեծ Հայքի թագավորությունը գնալով թուլացավ և 387թ. բաժանվեց Հռոմեական կայսրության ու Պարսկաստանի միջև: Մեծ Հայքի արևելյան մասում գահ բարձրացած Խոսրով IV-ն Արշակ III-ի մահից հետո կարողացավ կարճ ժամանակով վերամիավորել Մեծ Հայքի թագավորությունը, սակայն ձերբակալվեց պարսիկների կողմից և նետվեց Անհուշ բերդը: Մեծ Հայքի արևելյան մասում թագավորությունը գոյատևեց մինչև 428թ., երբ պարսից արքունիքը գահընկեց արեց Արշակունյաց վերջին գահակալ Արտաշեսին և երկիրը վերածեց պարսկական, թեկուզ և մեծ ինքնավարություն ունեցող, մարզի:

ԹԵՄԱ 3 ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ V ԴԱՐՈՒՄ

1. ՊԱՐՍԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարզպանական Հայաստանը՝ ինքնավար երկիր: Վերաձևելով Արևելյան Հայաստանի սահմանները՝ պարսից արքունիքը նրա տարածքի մեծ մասը վերածեց ինքնավար մարզպանության: Պարսիկները որոշ ժամանակ անփոփոխ թողեցին հայ նախարարների իրավունքներն ու արտոնությունները: Նրանք էին ղեկավարում հայոց այրուձին, նրանց էին պատկանում երկրի գլխավոր պաշտոնները: Պահպանվել էին նախկին արքունի գործակալությունները, որոնք ժառանգական իրավունքով վարում էին հին նախարարական տոհմերը: Սպարապետությունը պատկանում էր Մամիկոնյաններին, հազարապետությունը՝ Ամատունիներին, մաղխազությունը՝ Խորխոռունիներին: Հոգևորականությունը շարունակում էր վարել դատական գործերը: Եթե մարզպանի պաշտոնում սկզբում նշանակվել էր մի պարսիկ, ապա հետագայում այդ պաշտոնը պարսից արքունիքը հանձնեց Վասակ Սյունուն: Ժամանակակիցներին անգամ թվում էր, թե Արշակունիների գահազրկումից հետո թագավորական իշխանությունը մասամբ անցել է հայ նախարարներին: Սասանյանները միաժամանակ բավարարվում էին միայն հարկերի գանձումով և հաշտվում էին երկրի փաստական ինքնավարության հետ: Սակայն ստեղծված վիճակը չէր կարող մշտապես բավարարել պարսից արքունիքին: Այն ձգտում էր Հայկական մարզպանությունը դարձնել իր տերության սովորական նահանգներից մեկը: Հայ նախարարների ու Սասանյանների շահերի հակադրությունը վերջիվերջո հանգեցնելու էր այնպիսի բախման, որը վերաճելու էր զինված ապստամբության:

Արշակունիների անկումից և Հայաստանի քաղաքական մասնատումից հետո եկեղեցին դարձել էր ժողովրդին միավորող միակ կազմակերպությունը: Ուստի պարսից արքունիքը ձգտում էր նրա ղեկավարությունից հեռացնել ազգանվեր հոգևորականներին ու կաթողիկոսի պաշտոնը հանձնել իր կամակատարներին: Սասանյան արքան մեծ դժվարությամբ համաձայնեց երկիր վերադարձնել Տիզբոնում հսկողության ներքո գտնվող Սահակ Պարթև կաթողիկոսին՝ նրան զգալի չափով զրկելով իրավունքներից: Պարսկական իշխանությունները կաթողիկոսի պաշտոնում այդպես էլ չհաստատեցին Հովսեփ Վայոցձորեցուն, որը Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի մահից հետո վարում էր կաթողիկոսական աթոռի գործերը: Այսուհանդերձ, Սա-



Հովսեփ Վայոցձորեցի

սանյանները միաժամանակ խուսափում էին բացահայտ կրոնական հալածանքներից: «Աստվածապաշտությունը բաց ճակատով ու ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում»,– գրել է Եղիշե պատմիչը: Հայ հոգևորականությունը, ինչպես նախկինում, ազատված էր հարկեր վճարելու պարտականությունից:

Պարսկական քաղաքականության խստացումը: Պարսից արքունիքի քաղաքականությունը կտրուկ փոխվեց նոր թագավոր ***Հազկերտ II-ի*** (439-457թթ.) գահակալության առաջին իսկ տարիներին: Պարսկական զորքերը խոշոր հաջողությունների հասան թշնամիների դեմ պայքարում: Նախ՝ իրենց պարտությունն ընդունեցին բյուզանդացիները: 441թ. կնքված պայմանագրով Բյուզանդիան պարտավորվեց այլևս չօգնել հայերին: Հազկերտ II-ն այնուհետև պարտության մատնեց նաև քուշաններին ու հոներին: Դրանից հետո Հազկերտը վճռական միջոցների դիմեց՝ հպատակ երկրները վերջնականապես ծնկի բերելու նպատակով:

Պարսից արքունիքի հեռահար ծրագրերն առանձնահատուկ եռանդով էին իրականացվում Հայաստանում: Հազկերտի հրահանգով 447թ. Հայաստան ժամանած պարսիկ պաշտոնյա Դենշապուհն ամեն ինչ անում էր՝ երկրում ուժեղացնելու պարսկական ազդեցությունը: Նրա առաջին գործը եղավ պետական պաշտոններից հայերին հեռացնելը: Հազարապետության պաշտոնը խլվեց Վահան Ամատունուց, իսկ մեծ դատավարության գործակալությունը՝ Հայոց կաթողիկոսից: Դա առաջ բերեց հայ իշխանների, ազատների և հոգևորականների խիստ դժգոհությունը:

Շուտով, հարկերը կարգավորելու պատրվակով, Դենշապուհը հողերի և բնակչության հաշվառում՝ աշխարհագիր անցկացրեց: Հաշվառման ենթարկվեցին բոլոր բնակավայրերը, մշակելի ու անմշակ հողերը, լեռներն ու անտառները: Ապա պարսկական արքունիքը սաստիկ ծանրացրեց հարկերն ու տուրքերը: Պարսիկներն իրենք էլ էին զարմանում, թե այդքան մեծ քանակությամբ հարկեր վճարելուց հետո ինչպե՞ս էր Հայոց երկիրը շեն մնում: Շինականներից բացի՝ հարկեր պետք է վճարեին նաև հոգևորականները: Հարկերի ծանրությունից հնարավոր էր ազատվել միայն պարսից կրոնը՝ զրադաշտականությունն ընդունելու միջոցով:

Այսպիսով՝ Սասանյանները ծրագրել էին տնտեսապես թուլացնել Արևելյան Հայաստանը և նրա բնակչությանը ստիպել կրոնափոխ լինել:

ԵՂԻՇԵ ՊԱՏՄԻՉԸ՝ ԴԵՆՇԱՊՈՒՀԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Բացի այս ամենից՝ մի այլ չարություն էլ նյութեց: Իր հավատարիմ ծառաներից մեկին, որի անունը Դենշապուհ էր, գործով ուղարկեց Հայոց երկիրը. սա եկավ, տեղ հասավ արքունի հրամանով, բերեց մեծ թագավորի ողջույնը, և խաղաղասեր կեղծավորությամբ ամբողջ Հայոց երկիրը աշխարհագիր արեց՝ իբր թե հարկերը

ներելու ու այրուձիու ծանրությունը թեթևացնելու նպատակով: Թեպետ երեսանց կեղծավորություն էր անում, բայց ներքուստ երևում էին չարագույն դիտավորությունները:

Առաջին, եկեղեցու ազատությունը հարկի տակ դրեց:

Երկրորդ, վանքերում բնակված միայնակյաց քրիստոնյաներին նույն աշխարհագրի տակ գցեց:

Երրորդ, երկրի հարկն ավելի ծանրացրեց:

Չորրորդ, նախարարներին բանսարկությամբ թշնամացրեց միմյանց հետ և ամեն տան մեջ խռովություն գցեց»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսին էր հայ նախարարության և հոգևորականության վիճակը թագավորության վերացումից հետո:
2. Ո՞րն էր Հայկական մարզպանությունում պարսից արքունիքի համեմատաբար մեղմ քաղաքականության պատճառը 428թ. հետո:
3. Ինչո՞վ կարելի է բացատրել պարսից արքունիքի քաղաքականության փոփոխությունն Արևելյան Հայաստանի նկատմամբ Հազկերտ II-ի իշխանության շրջանում:
4. Ինչո՞ւ պարսից արքունիքն «աշխարհագիր» անցկացրեց Հայկական մարզպանությունում:
5. Ինչպե՞ս են պատմիչները ներկայացնում Արևելյան Հայաստանի վիճակը պարսկական տիրապետության սաստկացման շրջանում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Վասակ Սյունի • Հովսեփ Վայոցձորեցի • Եղիշե • քուշաններ • հոներ • Վարդան Մամիկոնյան • Հազկերտ II • Դենշապուհ • աշխարհագիր

2. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Կրոնափոխության առաջարկը: Արտաշատի ժողովը: Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքով Արևելյան Հայաստանը սկսում էր կորցնել ներքին ինքնավարությունը՝ նմանվելով պարսկական սովորական մի նահանգի: Ուստի հայերն ընդդիմանում էին, բնակչության բոլոր խավերի շրջանում ուժեղանում էին հակապարսկական տրամադրությունները: Անհրաժեշտ էր մի կայծ, որ դժգոհությունը հրդեհի վերածվեր:

449թ. պարսկական արքունիքը հատուկ հրովարտակով դիմեց «հայոց բոլոր մեծամեծներին»: Նրանց առաջարկվում էր կրոնափոխվել՝ ընդունել զրադաշտականությունը: Պարսից արքունիքի վերջնական նպատակը Հայաստանն ու հարևան երկրները մեկընդմիշտ իրեն ենթարկելն էր: Պարսիկները վստահ էին, որ հայերի զրադաշտական դառնալու դեպքում նրանց

կհետևեն նաև վրացիներն ու աղվանները: Հայ ավագանին պարտավոր էր կամ պատասխան շարադրել, կամ ներկայանալ Տիզբոն ու բացատրություն տալ արքունի ատյանի առջև: Հայերը լավ էին հասկանում, որ կրոնափոխության առաջարկը հեռուն գնացող նպատակներ է հետապնդում: Պարսկաստանը փորձում էր դրանով զրկել հայերին հոգևոր ու մշակութային ինքնատիպությունից, հեշտացնել նրանց ձուլումը պարսիկների հետ:

Հայ հոգևոր առաջնորդներն ու նախարարները, կաթողիկոսական տեղապահ Հովսեփ Վայոցձորեցու նախագահությամբ, Արտաշատում հրավիրեցին հատուկ ժողով: Ժողովականները պարսից արքունիքին ուղղված պատասխան նամակում պաշտպանում էին քրիստոնեական հավատի ճշմարտացիությունը: Ավելին, ցույց էր տրվում զրադաշտական կրոնի թերի լինելը: Այսպիսով՝ հայերը վճռականորեն մերժեցին կրոնափոխության առաջարկը:

Զայրացած Հազկերտը Տիզբոն կանչեց հայ անվանի նախարարներին: Այստեղ նրանցից պահանջեցին ընդունել պարսկական կրոնը: Հակառակ դեպքում Հազկերտը սպառնում էր մահապատժի ենթարկել և ավերել նրանց տիրույթները, աքսորել հարազատներին: Ստեղծված պայմաններում հայոց մեծամեծները ստիպված եղան առերես ընդունել զրադաշտականությունը: Նրանք դա արեցին մահապատժից փրկվելու և ժողովրդին հետագայում ղեկավարել կարողանալու նպատակով: Ուրախացած Հազկերտը նրանց հատուկ զորագնդի ու զրադաշտական հոգևորականների՝ մոգերի ուղեկցությամբ, շռայլ պարգևներով ուղարկեց Հայաստան: Հայ նախարարներին հանձնարարված էր շուրջ մեկ տարվա ընթացքում կրոնափոխել բնակչությանը: Պարսիկ մոգերը պետք է եկեղեցիները վերածեին կրակատների (ատրուշանների): Դրանցում մշտապես պետք է վառվեր սրբազան համարվող կրակը: Չվստահելով նախարարներին՝ Հազկերտը պատանդ պահեց Գուգարքի բդեշխ Աշուշային և Վասակ Սյունու երկու որդիներին:

Ապստամբության սկիզբը: Անգղի և Զարեհավանի ժողովրդական ելույթները: Նախարարների ուրացության և մոգերի հետ նրանց Հայաստան վերադառնալու լուրերը մեծ հուզումներ էին առաջ բերել երկրում: Նախարարների նկատմամբ զայրույթով էին լցված բոլորը, անգամ նրանց հարազատները: Երկրում սկիզբ էին առել տարերային ելույթներ, հուժկու քարոզչություն էր ծավալել հայ հոգևորականությունը: Ապստամբական շարժումն արագորեն տարածվում էր ամբողջ երկրում:

Ժողովրդական բուռն ելույթ տեղի ունեցավ Անգղ գյուղաքաղաքում: Մոգերն այստեղ փորձեցին կրակատան վերածել տեղի եկեղեցին, բայց արժանի հակահարված ստացան: Ռամիկները, Ղևոնդ Երեցի գլխավորությամբ, դագանակներով զինված հալածեցին մոգերին: Զարեհավան գյուղաքաղաքում բազմությունը կործանեց նորակառույց մեհյանը և սպանեց մոգերին: Ապստամբած ժողովուրդն ամենուրեք կոտորում կամ երկրից դուրս էր քշում

պարսիկ մոգերին ու պաշտոնյաներին: Հայրենիք վերադարձած նախարարները խոստովանեցին իրենց կեղծ ուրացությունը և ստանձնեցին ապստամբության ղեկավարությունը: Համաժողովրդական շարժումը վերածվեց կազմակերպված ապստամբության:

Ապստամբության ոգին համակել էր բոլորին: Ժողովրդին միավորել էր պարսկական իշխանությունների դեմ ատելությունը: Ապստամբներն Ավետարանի վրա սրբազան երդում տվեցին: Նրանք ուխտեցին չդավաճանել ընդհանուր գործին և համատեղ պայքարել թշնամու դեմ:

Սպարապետ Վարդան Մամիկոնյանը գլխավորում էր զինված ուժերը: Շարժման այս փուլում մարզպան Վասակ Սյունին ևս ապստամբության հիմնական ղեկավարներից էր: Նա մասնակցում էր ապստամբության կազմակերպման աշխատանքներին և բոլորի հետ մեկտեղ «անսուտ երդում տվեց Սուրբ Ավետարանի վրա»:

Ապստամբները հարձակվեցին այն բերդերի, ավանների և քաղաքների վրա, որտեղ պարսից կայազորներ էին հաստատված: Շուտով նրանց ձեռքն անցան Արտաշատն ու Վանը, անառիկ ամրոցներ Գառնին և Արտագերսը: Հայերն ամենուրեք զինվում և պատրաստվում էին կյանքի գնով պաշտպանել հայրենիքը:

Վարդան Մամիկոնյան (հատված Սկևռայի մասնատուփից, 1293թ.)

Շարժման ծավալումը: Ապստամբների թիվն օրեցօր ավելանում էր, իսկ թշնամական զորագնդերն արդեն դուրս էին քշվել երկրից: Հայաստանը փաստորեն անկախացել էր: Հազարապետի, մաղխազի և մեծ դատավարության գործակալությունները վերստին գլխավորեցին Վահան Ամատունին, Խորեն Խորխոռունին և Հովսեփ Վայոցձորեցին: Հայ նախարարները նույնիսկ հույսեր էին փայփայում վերականգնելու Հայոց անկախ թագավորությունը: Շատերի հիշողության մեջ վառ էին մնացել ոչ վաղ անցյալում կորցրած պետականության մասին հիշողությունները:

Սակայն նախ անհրաժեշտ էր պարսիկների դեմ պայքարում դաշնակիցներ ձեռք բերել: Այդ նպատակով հայերը դիմեցին Բյուզանդիային: Բայց բյուզանդական կայսրը մերժեց: Կայսրությունը հավաստեց պարսիկների հետ հին դաշինքը և խոստացավ չօգնել հայերին: Կայսրը նաև արգելեց Հայաստանի բյուզանդական մասի հայ իշխաններին՝ օժանդակելու իրենց ազգակիցներին:

Բյուզանդիայի վարքագիծը հուսահատություն առաջ չբերեց Հայաստանում: Հայերն անգամ պատրաստ էին օգնություն ցույց տալու պարսիկների դեմ ապստամբած իրենց հարևաններին:

Շուտով Հայաստան եկան Աղվանից երկրի եպիսկոպոսը և հազարապետը: Նրանք հաղորդեցին, որ պարսկական բանակն ու մոգերը ներխուժել են Աղվանք և բռնությամբ կրակապաշտություն են տարածում: Իմանալով այս մասին՝ հայերը որոշեցին օգնության հասնել հարևան ժողովրդին:

Ապստամբության ղեկավարները հայկական զորքը բաժանեցին երեք մասի: Առաջինի հրամանատար կարգեցին Ներշապուհ Արծրունի իշխանին և ուղարկեցին Ատրպատականի սահմաններ՝ Հեր և Ջարևանդ գավառներ: Այդ զորագունդը պաշտպանելու էր երկիրը պարսիկների հնարավոր հարձակումներից: Երկրորդ զորախմբի ղեկավարությունը ստանձնեց Վարդան Մամիկոնյանը և օգնության շտապեց աղվաններին: Երրորդ զորախումբը, Վասակ Սյունու գլխավորությամբ, մնաց երկրում: Մարզպանի խնդիրն էր՝ աջակցել աղվաններին Սյունիքից:

Վարդան Մամիկոնյանի զորքը թշնամուն հանդիպեց 450թ. Խաղխաղ քաղաքի մոտ (ներկայիս Ղազախ քաղաքի մերձակայքում): Հայերը թեև փոքրաթիվ էին, բայց որոշեցին ճակատամարտ տալ և կանխել պարսիկների հարձակումն Աղվանքից դեպի Հայաստան: Հակառակորդին ջախջախելուց և փախուստի մատնելուց հետո հայոց բանակը պարսիկներին քշեց նաև Աղվանքի բերդերից: Վարդան Մամիկոնյանի զորախումբը շարունակեց առաջխաղացումը մինչև Հոնաց (Ճորա) պահակի ամրություններ և դաշինք կնքեց հոների հետ:

Մինչ սպարապետն Աղվանքում էր, Հայաստանում լարված վիճակ էր առաջացել: Իմանալով, որ Բյուզանդական կայսրությունը օգնություն չի ցուցաբերելու, Վասակ Սյունին իր կողմը գրավեց մի խումբ նախարարների և սկսեց հատուկ քաղաքականություն վարել: Պարսկական ավերիչ արշավանքներից երկիրը զերծ պահելու նպատակով նա որոշեց լեզու գտնել պարսից արքունիքի հետ: Մյուս կողմից՝ նա ձգտում էր կանխել հայերի ռազմական բախումը պարսկական գերակշիռ ուժերի հետ: Ստանալով պարսից արքունիքի համաձայնությունը՝ Վասակը հավաստիացրեց, որ Հազկերտը հրաժարվել է կրոնափոխության ծրագրից և պատրաստ է ներել ապստամբներին: Թերևս նրան այդ քայլին մղեց նաև իր որդիների՝ Տիզբոնում պատանդ լինելու հանգամանքը: Ապստամբության պատճառով նրանք կարող էին մահապատժի ենթարկվել: Բացի դրանից՝ նա սկսել էր երկյուղել, որ ապստամբությունը պարտությամբ կավարտվի: Դրա հետևանքով նա կարող էր կորցնել ոչ միայն մարզպանի պաշտոնը, այլև Սյունյաց նահապետի ժառանգական իրավունքը: Այս ամենի պատճառով Վասակը փաստորեն դրժեց համատեղ պայքարելու երդումը և հեռացավ ապստամբությունից:

Ստանալով այս անհանգստացնող լուրերը՝ Վարդան Մամիկոնյանը հապճեպ վերադարձավ Հայաստան: Վասակ Սյունին ապստամբների ճնշման ներքո հեռացավ Սյունիք: 450–451 թվականների ձմեռն էր, պարենի պաշարները սպառվել էին: Ուստի սպարապետը արձակեց իր զորաբանակը՝ գարնանը հավաքվելու պայմանով:

Ավարայրի ճակատամարտը: Պարսկական բանակը Հայաստան հասավ 451թ. գարնանը: Վարդան Մամիկոնյանի հրամանով հայոց զորքը հավաքվեց Այրարատում և արագորեն շարժվեց թշնամուն ընդառաջ: Սպարապետը ցանկանում էր ճակատամարտ տալ հայոց ու պարսից սահմանում և կանխել երկրի ավերումը: Սակայն թշնամին նույնպես չէր հապաղում: Մուշկան Նիսալավուրտի հրամանատարությամբ պարսկական զորքը մտավ Հեր և Զարևանդ գավառներ ու շարժվեց դեպի երկրի խորքը: Պարսիկների հսկայական բանակն ուժեղացված էր ընտիր հեծելազորով՝ «Մատյան գնդով», մարտական փղերով: Պարսիկներն առաջինը մտան Վասպուրականի Արտազ գավառ և բանակ դրեցին Տղմուտ գետի աջ ափին՝ Ավարայրի դաշտում: Շուտով այստեղ հասավ նաև հայոց բանակը և դիրքեր զբաղեցրեց գետի ձախ ափին: Մոտենում էր վճռական բախման պահը:

Ճակատամարտի նախօրեին սպարապետն իր 66-հազարանոց բանակը բաժանեց երեք մասի և դրանց հրամանատարներ նշանակեց փորձված զորավարներ Ներշապուհ Արծրունուն, Խորեն Խորխոռունուն և Թաթուլ Վանանդեցուն: Պահեստազորի հրամանատար նշանակեց իր եղբայր Համազասպյանին, իսկ ինքը ստանձնեց ամբողջ բանակի հրամանատարությունը: Թվապես հայերին եռապատիկ գերազանցող թշնամին իր գլխավոր ուժերը կենտրոնացրել էր աջ թևում, իսկ պահեստազորում կանգնած էր «Մատյան գունդը»:

Ավարայրի ճակատամարից առաջ Վարդան Մամիկոնյանը, Հովսեփ կաթողիկոսը և Ղևոնդ Երեցը զորքին թշնամու դեմ քաջաբար մարտնչելու կոչ արեցին: «Չերկնչենք և չվախենանք հեթանոսների բազմությունից..., իսկ եթե հասել է ժամանակը՝ մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»,– այս խոսքերով դիմեց Վարդան Մամիկոնյանը իր զինվորներին:

Ավարայրի ճակատամարտը

Առաջինը մարտի նետվեցին հայերը: 451 թվականի մայիսի 26-ին, վաղ առավոտյան, հայոց այրուձին անցավ Տղմուտը և մխրճվեց թշնամու մարտակարգի մեջ: Վարդան Մամիկոնյանը շրջանցեց հակառակորդին և հարվածեց պարսից բանակի պահեստազորին: Պարսիկների շարքում խուճապ սկսվեց: Թվում էր՝ հայերը հաղթանակ են տանում: Բայց այդ ճակատագրական պահին զգացվեց պարսկական զորքերի թվական գերազանցությունը: Մուշկան Նիսալավուրտի հրամանով պարսիկները վերադասավորեցին ուժերը, օգնության եկավ «Մատյան գունդը»: Նրանք շրջապա-

տեցին սպարապետի փոքրաթիվ զորագունդը և սկսեցին աստիճանաբար սեղմել օղակը: Հայ նախարարները և զինվորները կռվում ու զոհվում էին՝ ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին: «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»,– սա էր նրանց նշանաբանը: Բայց նրանց շարքերը հետզհետե նոսրանում էին: Անհավասար կռվում հերոսաբար ընկավ Վարդան Մամիկոնյանը, նրա հետ զոհվեցին բազմաթիվ նշանավոր նախարարներ և շատ զինվորներ:

Մարտը երեկոյան դադարեց, և հայոց բանակը վերադարձավ իր դիրքերը: Հայերը զգալի կորուստներ էին տվել, զոհվել էր սպարապետը: Բայց չէին հաղթել նաև պարսիկները: Նրանց զոհերի թիվը երեք անգամ ավելի շատ էր: Բացի դրանից՝ թշնամին չէր հասել իր գլխավոր նպատակին: Հայկական բանակը չէր ջախջախվել, հայերը պահպանել էին մարտական ոգին և լի էին պայքարը շարունակելու վճռականությամբ: «Ոչ թե մեկ կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով, երկու կողմն էլ պարտություն կրեցին»,– պնդում է Եղիշե պատմիչը:

Ավարայրի ճակատամարտից հետո էլ ապստամբական շարժումը չմարեց: Հայերն ամրացան լեռնային անառիկ վայրերում և անընդհատ հարձակումներով սկսեցին ուժասպառ անել թշնամուն: Լեռնային կռիվներ ծավալվեցին Արցախում, Տայքում և Տմորիքում: Այդ կռիվներին սկսեցին մասնակցել անգամ այն գավառների բնակիչները, որոնք մինչ այդ չէին մասնակցել ապստամբությանը: Պարսիկներին ծանր հարված հասցրեցին նաև հոները: Նրանք, Վարդան Մամիկոնյանի հետ կնքած դաշինքի համաձայն, սկսեցին ավերել պարսկական նահանգները:

Ի վերջո, ծանր դրության մեջ հայտնված պարսից արքունիքը ստիպված հրաժարվեց բռնի կրոնափոխության ծրագրից, թեթևացրեց հարկերը, հաշտվեց Հայաստանի լայն ինքնավարության հետ: Բայց գերված հոգևոր առաջնորդները և նախարարները դատվեցին Տիզբոնում: Առաջինները մահապատժի ենթարկվեցին, իսկ երկրորդներն աքսորվեցին Միջին Ասիա: Ավելի ուշ նախարարներին թույլատրվեց վերադառնալ հայրենիք և տիրել իրենց կալվածքներին: Հայրենի երկիր վերադարձավ նաև հայոց այրուձին: Որպես ապստամբության կազմակերպիչներից մեկի՝ պարսից արքունիքը բանտ նետեց Վասակ Սյունուն, որն այնտեղ էլ մի քանի տարի հետո մահացավ: Պարսից արքունիքը որոշ ժամանակ վարում էր հայերին սիրաշահելու քաղաքականություն:

Վարդանանց պատերազմը հայոց պատմության հերոսական էջերից է: Հայոց եկեղեցին սրբացրել է Ավարայրում զոհված մարտիկներին և նրանց դասել «հայրենիքի նահատակների» շարքում: Մինչև օրս էլ «Վարդանանց տոնը» հանդիսավորապես նշվում է համայն հայության կողմից:

Եղիշե
(նկ. Հր. Ռուխկյանի)

ԵՂԻՇԵՆ՝ ԱՆԳՂԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

«Եվ այնպես պատահեց, որ քսանհինգ օրից հետո մի կիրակի օր մոգպետն ինքը մոգերի հետ միասին եկավ մեծ ուժով, որպեսզի քանդի (Անգղի) եկեղեցու դռները. ուզում էին փորձել, թե գործն ինչ ընթացք կստանա: Իսկ Սուրբ Ղևոնդ Երեցը առաջին խորհրդակիցների և բազմաթիվ ուխտակիցների հետ միաբան այնտեղ պատրաստ գտնվեց: ...Մոգերի և մոգ-պետերի գլուխները ջարդեցին, բոլորին փախցրին իրենց կացա-րանները, իսկ իրենք պաշտամունքը վերսկսելով եկեղեցում՝ կիրակնօրյա կարգն էին կատարում, շարունակելով այն ամբողջ նույն կիրակի օրը»:

ԵՂԻՇԵՆ՝ ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

«...երկու կողմերն էլ սրտմտությամբ և մեծ բարկությամբ զայրացան և գազանացած զորությամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էին ինչպես իրար խառնված ամպերի միջից, և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթ-ների շողեր: Նաև բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից: Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, և թե ինչպես վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ դեպքերով սկսվեց 450-451թթ. Վարդանանց պատերազմը:
2. Կրոնափոխության առաջարկ անելով ինչ նպատակներ էր հետապնդում պարսից արքունիքը:
3. Ինչպե՞ս եք գնահատում Վասակ Սյունու դերն ապստամբության նախա-պատրաստության մեջ:
4. Ձեր կարծիքով՝ պե՞տք էր արդյոք օգնել աղվաններին, թե՞ ճիշտ կլիներ մնալ Հայաստանում և զինված ուժերը պահպանել առաջիկա կռիվների համար:
5. Ինչպե՞ս էին դասավորված հայկական ու պարսկական զինված ուժերն Ավարայրի ճակատամարտից առաջ: Նկարագրե՞ք ճակատամարտի ըն-թացքը:
6. Ո՞րն էր Ավարայրի ճակատամարտի պատմական նշանակությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Պարսից արքունիքի՝ կրոնափոխության հրովարտակ • Արտաշատի ժողով • Անգղ և Զարեհավան գյուղաքաղաքներ • Ղևոնդ Երեց • հազարապետ Վահան Ամատունի • մաղխազ Խորեն Խորխոռունի • Ներշապուհ Արծրունի • Թաթուլ Վանանդեցի • Համազասպյան • Հեր և Զարևանդ գավառներ • Խաղխաղ քաղաք • Մուշկան Նիսալավուրտ • Արտազ գավառ • Տղմուտ գետ • Ավարայրի դաշտ • «Մատյան գունդ» • Վարդանանց տոն

3. ՎԱՀԱՆԱՆՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ապստամբության նախադրյալները: Պարսից արքունիքի համեմատաբար մեղմ քաղաքականությունը ժամանակավոր երևույթ էր: Տիզբոնը չէր հրաժարվել իր վաղեմի ծրագրերից, բայց գործում էր ավելի նուրբ եղանակներով: Բռնի հավատափոխության փոխարեն պարսիկները պայմաններ էին ստեղծում, որ հայերն իրենց կամքով ուրանան հայրենի կրոնը: Կրակապաշտություն ընդունած նախարարներն ընդարձակ կալվածքներ էին ստանում, պատվի և պարգևների արժանանում: Նախարարական տների կրտսեր անդամների՝ սեպուհների որոշ մասը հրաժարվում էր քրիստոնեությունից և բարձր դիրքի հասնում: Ուրացողության տարածումը իսկական աղետ էր Հայոց եկեղեցու համար: Վտանգ կար, որ հավատուրացությունը կարող էր վարակի նման տարածվել նաև հասարակ ժողովրդի շրջանում:

Դարձյալ ծանրացան հարկերը: Ժողովրդի մեջ պարսկական տիրապետության դեմ ուղղված բողոք էր բարձրանում: Հայերը կրկին ապստամբելու հարմար պահի էին սպասում:

Ապստամբության սկիզբը: 481թ. պարսիկների դեմ ապստամբեց հարևան Վրաստանը: Վախթանգ թագավորը սպանեց ուրացող Վազգեն բդեշխին և հրաժարվեց ճանաչել պարսից իշխանությունը: Վրաց ապստամբների դեմ ուղարկվեց Հայաստանում տեղակայված պարսկական զորամասը, որը համալրվեց հայկական զորագնդով: Սակայն հայ նախարարները Շիրակում գաղտնի ժողով գումարեցին և որոշեցին ձերբակալել Հայաստանի պարսիկ մարզպանին ու հազարապետին և ապստամբել: Հայոց նոր ապստամբությունը գլխավորեց Վարդան Մամիկոնյանի եղբորորդին՝ Վահան Մամիկոնյանը: Պարսիկ պաշտոնյաները, սակայն, հասցրեցին փախչել Ատրպատական:



Հայկական բանակի խաչադրոշ (V–VI դդ.)

Իշխանությունն անցավ ապստամբներին, որոնք կազմեցին կառավարություն: Երկրի սպարապետ նշանակվեց Վահան Մամիկոնյանը, մարզպան՝ Սահակ Բագրատու-

նին, մեծ դատավոր՝ Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսը: Ապստամբության կենտրոն դարձավ Դվին քաղաքը:

Ակոռիի ճակատամարտը: Հայերի համար ակնհայտ էր, որ պարսիկները ձգտելու են արագորեն ճնշել նոր ծագած ապստամբությունը: Եվ իրոք, Հայաստանից փախած մարզպանը հավաքեց Ատրպատականում եղած զորքերը և շարժվեց դեպի Այրարատ:

Վահան Մամիկոնյան

Հակառակորդին հանդիպելով Արաքսի ափին՝ հայերը գիտակցաբար խուսափեցին բաց դաշտում ճակատամարտ տալուց: Ապստամբները կարճատև կռիվներով պարսիկներին քաշեցին Մասիսի ստորոտի լեռնոտ վայրեր: Այստեղ էլ, Ակոռի գյուղի մոտ, տեղի ունեցավ ճակատամարտը: Ազատ գործելու հնարավորությունից զրկված պարսկական հեծելազորը չկարողացավ օգտվել իր թվական գերազանցությունից, և հայկական ուժերը փայլուն հաղթանակ տարան: Ճակատամարտում սպանվեց նաև պարսկական զորքի հրամանատար մարզպանը: Ապստամբները հաղթանակած վերադարձան Դվին և այնտեղ անցկացրին ձմեռը: Առաջին հաջողությունը մեծ ոգևորություն առաջ բերեց երկրում: Վահան Մամիկոնյանի կոչով շարժմանը միացան նաև Հայաստանի արևմտյան գավառների նախարարները: Անհրաժեշտ էր համախմբել ուժերը, որովհետև պարսիկները պատրաստվում էին հաջորդ՝ 482թ. գարնանը ջախջախիչ հարված հասցնել ապստամբներին:

Ներսեհապատի և Ճարմանայի ճակատամարտերը: Պարսկական բանակը Հայաստան ներխուժեց հարավ-արևելքից: Հայկական ուժերը, որոնց թիվը հասնում էր 30 հազարի, Վահան Մամիկոնյանի հրամանատարությամբ ընդառաջ ելան թշնամուն: Հակառակորդները միմյանց հանդիպեցին 482թ. մայիսին Արտազ գավառի Ներսեհապատ գյուղի մոտ:

Ճակատամարտից առաջ քաջալերիչ խոսքով հայ զորականներին դիմեց Հովհաննես Ա կաթողիկոսը: Զորքի հրամանատարներին վերջին ցուցումները տվեց սպարապետը: Մարտը սկսվեց վաղ առավոտյան՝ թշնամու կատաղի գրոհով: Հայոց կենտրոնական զորագունդն իր վրա վերցրեց առաջին գրոհը: Շուտով օգնության հասան մյուս զորագնդերը: Հայոց զորքի մի մասն անցավ պարսիկների թիկունքը և խառնաշփոթ առաջացրեց նրանց շարքերում: Երբ հարձակման անցան նաև հայոց բանակի հիմնական ուժերը, պարսիկներն անկանոն փախուստի դիմեցին: Նրանց զորքի զգալի մասը զոհվեց մարտադաշտում:

Հաղթանակած հայոց զորքը հանգիստ առնելու համար մեկնեց Ծաղկոտն գավառի Վարշակի ջերմուկների մերձակայքում գտնվող իր ամառային զորակայան: Սակայն շուտով անհանգստացնող լուր ստացվեց Վախթանգ

թագավորից: Պարսկական մի խոշոր բանակ մտել էր Վրաստան և շարժվում էր դեպի երկրի խորքը: Նախարարների հավաքը որոշեց ընդառաջել հարևանների օգնության խնդրանքին: Հայոց բանակը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ շարժվեց դեպի հյուսիս և, միանալով վրացական փոքրաթիվ զորաջոկատին, բանակեց Կուր գետի ափին՝ Ճարմանայի դաշտում: Մի քանի օր հետո տեղ հասավ և դիմացի ափին տեղավորվեց պարսից բանակը: Հայ-վրացական զորքերը սպասում էին հոների օգնությանը, բայց նրանք այդպես էլ չեկան: Մնում էր կռիվն սկսել միայն հավաքված փոքրաքանակ զորքերով:

Աննպաստ պայմաններում տեղի ունեցած ճակատամարտում հայ-վրացական բանակը ծանր պարտություն կրեց: Ձոհվեցին մարզպան Սահակ Բագրատունին, սպարապետի եղբայր Վասակ Մամիկոնյանը և բազում զորականներ:

Վահան Մամիկոնյանը վերադարձավ Հայաստան և հաստատվեց Դվինում: Պարսիկները շրջապատեցին քաղաքը՝ հույս ունենալով վերջնականապես ոչնչացնել ապստամբներին: Հայոց սպարապետը, փոքրաթիվ ուժերով, հանդուգն հարձակումով ճեղքեց պաշարումը և անցավ Տայք: Նա իր անորսալի ջոկատներով անսպասելի հարձակումներ էր գործում և խուճապի մատնում հակառակորդին: Պարսից զորքերն այդպես էլ չկարողացան ճակատամարտի մեջ ներքաշել և պարտության մատնել հայոց սպարապետին: Հայ շինականներն ամեն կերպ օգնում էին ապստամբներին՝ ձախողելով պարսիկների ռազմական ծրագրերը:

Պարսիկները զգում էին իրենց քաղաքականության ձախողումը և առիթ էին փնտրում՝ հայերի հետ վերականգնելու նախկին հարաբերությունները:

Նվարսակի պայմանագիրը: Պարսկական քաղաքականության մեջ շրջադարձ տեղի ունեցավ 484թ. ամռանը, երբ պարսիկները ջախջախիչ պարտություն կրեցին միջինասիական քոչվոր ցեղերից՝ հեփթաղներից: Կռվում սպանված Պերոզ թագավորի փոխարեն գահ բարձրացավ նրա եղբայր Վաղարշը: Պարսիկները համոզվեցին, որ անհնար է բռնությամբ ճնշել հայոց ապստամբությունը, և բռնեցին զիջումների ուղին:

484թ. աշնանը Հայաստան ուղարկվեց Վաղարշ արքայի դեսպան Նիխոր զորավարը: Հայերի պատվիրակությունը գլխավորում էր Վահան Մամիկոնյանը: Հաշտության բանակցությունները տեղի ունեցան Հեր գավառի Նվարսակ գյուղում: Պարսից պատգամավորությունը համաձայնեց բավարարել հայերի ներկայացրած հիմնական պահանջները: Պարսիկները դադարեցնելու էին զրադաշտականությունը տարածելու փորձերը: Քրիստոնեությունը Հայաստանում պետք է մնար միակ պաշտոնական կրոնը: Պարսից արքունիքն այլևս չպետք է միջամտեր հայ նախարարների ներքին գործերին և պաշտոնների էր նշանակելու ոչ թե ուրացողներին, այլ՝ արժանավոր մարդկանց: Նշանավոր նախարարական տոհմերը պետք է վերականգնեին իրենց ժառանգական իրավունքները: Հայ նախարարներն այդուհետև կարող էին վի-

ճելի հարցերի դեպքում չբավարարվել մարզպանի վճռով և դիմել անմիջականորեն պարսից արքային: Փոխարենը հայերը պետք է իրենց այրուձիով օգնեին Վաղարշ թագավորին: Նվարսակի պայմանագիրն ամրագրում էր ապստամբած հայերի տարած խոշոր հաղթանակը:

Հաջորդ տարում Վահան Մամիկոնյանը մեկնեց Տիզբոն և հաստատվեց հայոց սպարապետի պաշտոնում: Նա ճանաչվեց նաև որպես Հայաստանի տանուտեր՝ բոլոր հայ նախարարների ղեկավար, երկրի փաստական կառավարիչ: Հայրենիք վերադառնալիս նրան ցնծությամբ ընդունեցին ժողովուրդը, նախարարները, կաթողիկոսը: Վաղարշապատի եկեղեցիներում ճոխ արարողություններ կատարվեցին:

Շուտով պարսից արքան նոր զիջում կատարեց: Նա մարզպանությունից հեռացրեց պարսիկ պաշտոնյային և Հայաստանի մարզպան նշանակեց Վահան Մամիկոնյանին: Մարզպանական նստավայր դարձած Դվինն արագորեն զարգացավ և ընդարձակվեց: Երկրի ինքնավարությունը նույնպես ընդլայնվեց: Հայաստանի ռազմական, վարչական և տնտեսական կյանքի ղեկավարությունն անցավ հայ նախարարներին: Համառ և երկարատև պայքարի գնով Արևելյան Հայաստանը Պարսից տերության կազմում ձեռք բերեց որոշակի իրավունքներ: Հայերի անձնուրաց պայքարը, նրանց տոկունությունն ու համախմբվածությունը տվեցին իրենց արդյունքները: Ձախողվեցին Հայաստանը ինքնավարությունից զրկելու, նրան կլանելու պարսկական արքունիքի ձգտումները:

V դարի ազատագրական շարժումներն օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի պայքարի ամենահերոսական ու հիշարժան էջերից են: Հայ ժողովուրդը համառ պայքարով պահպանեց երկրի ներքին ինքնուրույնությունը և տնտեսական ու մշակութային առաջընթացի հեռանկարը:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ՝ ԱԿՈՌԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

«Չորս հարյուր մարդկանց դասավորելով այսպես և փառք տալով Աստծուն՝ (հայ զորավարները) միաբան աղաղակելով ասացին. «Օգնի՛ր մեզ, մեր Փրկիչ Աստված, հանուն և ի փառս քո անվան»: Եվ ճակատողները (հայերը) ելան լեռան (Մասիսի) լանջակողմի բարձրավանդակը: Հայոց զորքի այս սակավությունը տեսնելով՝ պարսից զորքում մտածեցին, որ նրանք, խելացնորված, կամավոր եկել են մեռնելու:

Իսկ հայերը դիմեցին դեպի պարսից զորքերը և Բարձրյալի օգնականությամբ առաջանալով բախվեցին հակառակորդի ամենաընտիր տղամարդկանց հետ, պատերազմի դաշտում կոտորեցին, գետնի վրա դիաթավալ արին, իսկ պարսից զորքի մնացած բազմությունը ձորերում ու առապար տեղերում ցրելով ոչնչացրին: Այնտեղ, Մամիկոնեից քաջ սեպուհ Վասակի և Բաբգեն Սյունիի կողմում ջախջախված ընկան մարզպան Ատրվշնասպը և այլ մեծամեծներ, ուրացած հայ նախարարներից ոմանք և պարսիկներից շատ ուրիշներ»:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ՝ ՆՎԱՐՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Իսկ ես (այսինքն՝ Վահան Մամիկոնյանը) և ինձ հետ եղած ուխտապահ նախարարները, ինչ որ քեզանից (Նիխորից) խնդրեցինք պատգամավորների միջոցով և գրելով, որ և երեկ ու այսօր խոսեցի դեմ հանդիման, և դու, Արյաց տիրոջ հրամանով և ամբողջ արքունիքի ավագանու հրամանով, գրով ու կնիքով խոստացար տալ մեզ՝ (ա.) քրիստոնեական հավատի հաստատություն, (բ.) Հայոց աշխարհից մոգերի և ատրուշանների վերացում, (գ.) մեր եկեղեցու պայծառացումն ու պաշտամունքը՝ ինչպես մենք կկամենանք: Առանց սրանց անհնար կլինի, որ մենք ապրենք և ձեզ ծառայենք: Սրանք, որ կարևոր են մեզ համար և անհրաժեշտաբար պետքական, թագավորի կնիքով հաստատիր մեզ համար, նաև մնացածները, որ գրված են նամակի մեջ, դու բոլորը գիտես, և պետք չէ, որ քո առաջ շատախոսենք: (դ.) Իսկ գահը, պատիվն ու շքեղությունն էլ, նայելով յուրաքանչյուրի վաստակին, տվեք առանց կասկածելու և մի՛ զրկեցեք»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ քաղաքականություն էր վարում պարսից արքունիքը Հայաստանում Վարդանանց պատերազմից հետո:
2. Ինչու՞ հայերը կրկին ապստամբեցին պարսից տիրապետության դեմ:
3. Նկարագրե՛ք Ակոռիի և Ներսեհապատի ճակատամարտերը և նշե՛ք դրանց տարեթվերը:
4. Ինչո՞վ էր պայմանավորված պարսից արքունիքի կողմից Նվարսակի հաշտության պայմանագիրը կնքելը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Վարդան և Վահան Մամիկոնյաններ. փորձե՛ք համեմատել հայոց երկու նշանավոր զորավարներին, նրանց ժամանակը, գործունեությունը և ձեռք բերած արդյունքները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• հավատուրացություն • Վախթանգ՝ վրաց թագավոր • Վազգեն բդեշխ • մարզպան Սահակ Բագրատունի • սպարապետ Վահան Մամիկոնյան • Հովհաննես Ա կաթողիկոս • Ակոռիի և Ներսեհապատի ճակատամարտեր • Ճարմանայի դաշտ • պարսից Պերոզ արքա • պարսից Վաղարշ արքա • Նիխոր զորավար • Նվարսակի հաշտություն • Վահան Մամիկոնյան՝ Հայաստանի տանուտեր և մարզպան

3-րդ թեմայի ամփոփում

1. 428թ. պասից արքունիքը Մեծ Հայքի արևելյան մասում վերացրեց Հայոց թագավորական իշխանությունը: Սակայն Հայաստանն առժամանակ չէր ենթարկվում քաղաքական, տնտեսական ու կրոնական ծայրահեղ ճնշման և ուներ լայն ինքնավարություն:
2. Կամենալով հայ ժողովրդին և Արևելյան Հայաստանը լրիվ կտրել Բյուզանդական կայսրությունից՝ պարսից արքունիքը հայերից պահանջեց կրոնափոխ լինել և ընդունել զրադաշտական կրոնը: Դրա դեմ միահամուռ դուրս եկավ ժողովուրդը: Տիզբոն կանչված հայ նախարարներն առերես ընդունեցին զրադաշտականությունը, որպեսզի կարողանան վերադառնալ հայրենիք և ղեկավարել ապստամբությունը: Ապստամբության գլուխ կանգնեց հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Պարսկական զորքերի դեմ ապստամբների վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 451թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում: Ուժերը խիստ անհավասար էին, և ապստամբները պարտվեցին: Սակայն պարսից արքունիքը, հայերի համառ դիմադրությունից և հնարավոր նոր ապստամբությունից անհանգստացած, ստիպված եղավ առժամանակ հրաժարվել իր որդեգրած քաղաքականությունից:
3. 481-484թթ. տեղի ունեցավ Վահանանց ապստամբությունը: Հայերը դուրս եկան պարսկական տիրապետության դեմ և կարողացան հասնել մեծ հաջողության: Պարսից արքունիքը, որ ծանր կացության մեջ էր հայտնվել հեփթաղների դեմ պատերազմում, ստիպված եղավ 484թ. Նվարսակում հայերի հետ հաշտություն կնքել՝ ճանաչելով Հայկական մարզպանության լայն ինքնավարությունը: Շատ չանցած՝ Վահան Մամիկոնյանը ստացավ նաև երկրի տանուտերի ու մարզպանի պաշտոնները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ VI-IX ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ

Իրադրությունը երկրում 387թ. բաժանումից հետո: Մեծ Հայքի թագավորությունը միմյանց միջև բաժանելուց հետո Բյուզանդիան և Սասանյան Պարսկաստանն ամեն կերպ ձգտում էին սահմանափակել հայ իշխանների իրավունքները: Ընդ որում, քրիստոնյա Բյուզանդիան ձուլողական քաղաքականություն վարելիս հետ չէր մնում Սասանյան Պարսկաստանից: Այդ քաղաքականությունն ավելի հետևողական դարձավ 451թ. հետո, երբ Կոստանդնուպոլսի մոտ գտնվող ***Քաղկեդոն*** քաղաքում տեղի ունեցավ քրիստոնեական եկեղեցու 4-րդ տիեզերական ժողովը: Դավանաբանական սուր

վեճեր ծավալվեցին Հիսուս Քրիստոսի բնության հարցի շուրջը: Հույն հոգևորականությունն ի վերջո հարեց այն ուղղությանը, ըստ որի Հիսուս Քրիստոսն ունեցել է երկու բնություն, այսինքն՝ նա միաժամանակ եղել է թե՛ Աստված և թե՛ մարդ: Քաղկեդոնի ժողովի հետևորդներին հետագայում կոչեցին երկաբնակներ կամ քաղկեդոնականներ: Հայաստանում այդ ժամանակ ծավալված հակապարսկական ապստամբության պատճառով հայ հոգևորականները չմասնակցեցին Քաղկեդոնի ժողովին: Հետագայում, երբ բյուզանդացիները փորձեցին հայերին պարտադրել Քաղկեդոնի ժողովի որոշումները, Հայոց եկեղեցին վճռականորեն մերժեց այդ պահանջները:

506թ. Դվինում հրավիրվեց եկեղեցական ժողով, որին մասնակցում էին նաև վրացի ու աղվան եպիսկոպոսներ: Հավաքված հոգևորականները հրաժարվեցին ընդունել Քաղկեդոնի ժողովի որոշումները: Այդ պատճառով էլ հայերին սկսեցին անվանել ***հակաքաղկեդոնականներ*** կամ ***միաբնակներ:***

Հայերից բացի՝ հակաքաղկեդոնական ուղղությանը հարեցին ասորիների մի մասը, Եգիպտոսում ապրող ղպտիները և այլ ժողովուրդներ: Այսպիսով՝ բյուզանդական և արևելյան եկեղեցիները վերջնականապես բաժանվեցին միմյանցից: Հաջորդ դարերի ընթացքում ևս բյուզանդական եկեղեցին ամեն կերպ ձգտում էր իրեն ենթարկել հայ հոգևորականությանը, հայերին պարտադրել սեփական դավանանքը, սակայն շոշափելի արդյունքի չհասավ: Միաբնակության տարածումը ճնշված ժողովուրդների՝ կայսրության դեմ ուղղված բողոքի դրսևորում էր:

Քաղկեդոնի ժողովը (451թ.)

Արևմտյան Հայաստանը Բյուզանդական կայսրության կազմում: Արևմտյան կամ Բյուզանդական Հայաստանը բաղկացած էր երեք հիմնական երկրամասերից: Առաջինը Փոքր Հայքն էր, որն արդեն շուրջ կես հազարամյակ Հռոմեական կայսրության կազմում էր: Այստեղ հայ բնակչությունը գտնվում էր հունա-հռոմեական լեզվական ու մշակութային ազդեցության ներքո: Փոքր Հայքը IV դարի վերջերին բաժանվեց Առաջին և Երկրորդ Հայք պրովինցիա-

ների, որոնք վարչականորեն ոչնչով չէին տարբերվում բյուզանդական մյուս երկրամասերից: Առաջին Հայքի կենտրոնն էր ***Սեբաստիա*** քաղաքը, իսկ Երկրորդ Հայքինը՝ ***Մելիտինեն:***

Արևմտյան Հայաստանի մյուս մասը բյուզանդացիների կողմից ստացել էր Ներքին Հայք անվանումը: Այն ընդգրկում էր Մեծ Հայքի հյուսիսարևմտյան գավառները: Այստեղ, չնայած կայսրության բռնաճնշումներին, հայերը համեմատաբար լավ էին պահպանել իրենց ազգային դիմապատկերը: Ներքին Հայքի կառավարչաձևը բյուզանդացիները սկսել էին փոխել 387թ. շատ չանցած և հասցրել էին նշանակալից չափով սահմանափակել հայ նախարարների ռազմական ու վարչական իրավունքները: Երկրամասը կառավարում էր բյուզանդական պաշտոնյան, բայց հայ նախարարները պահպանել էին իրենց ժառանգական իրավունքների զգալի մասը և տնտեսական հզորությունը:

Բյուզանդացիներին մեծ անհանգստություն էին պատճառում Հայաստանի հարավարևմտյան գավառների տիրակալները՝ ***սատրապները:*** Սատրապական Հայաստանի հինգ հայ իշխաններն իրենց տիրույթներում կատարյալ արքայիկներ էին: Սկզբում նրանց իշխանությունը ժառանգական էր, հորից անցնում էր որդուն, բայց V դ. վերջում, երբ սատրապների մեծ մասը միացավ կայսեր դեմ բռնկված ապստամբությանը, իրավիճակը փոխվեց: Այնուհետև նրանց նշանակում էր բյուզանդական կայսրը, և նրանք կարող էին իշխել մինչև իրենց մահը: Չնայած սատրապները զրկվեցին իրենց իշխանությունը ժառանգություն թողնելու հնարավորությունից, բայց դեռևս ազդեցիկ ու հզոր էին: Սատրապական Հայաստանում բյուզանդական կայազորներ չկային, և թշնամու հարձակման ժամանակ սատրապները սեփական զորաջոկատներով պետք է պաշտպանեին կայսրության սահմանները: Այսպիսով՝ նրանք պահպանել էին իրենց ռազմական իշխանությունը:

Հուստինիանոս I կայսր

Հուստինիանոս I կայսեր վերափոխումները: Դրությունն Արևմտյան Հայաստանում առանձնապես ծանրացավ, երբ գահ բարձրացավ Հուստինիանոս I կայսրը (527-565թթ.): Նա վճռական փորձ կատարեց վերացնելու հայկական երկրամասերի ազգային առանձնահատկությունները: Այդ նպատակով միատեսակ կառավարում մտցվեց բոլոր հայաբնակ երկրամասերում: Կայսրը նաև ցանկանում էր լիովին վերացնել Սատրապական Հայաստանի և Ներքին Հայքի հայ նախարարների արտոնյալ վիճակը: Իր կառավարման առաջին տարիներին նա հայ իշխաններին զրկեց զորք ունենալու իրավունքից: Դրանով չբավարարվելով՝ կայսրը նոր վարչական բաժանումներ կատարեց՝

ամենուր մտցնելով բյուզանդական օրենքներ: Բյուզանդական Հայաստանի տարածքը բաժանվեց չորս մասի, որոնք ստացան Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք անվանումները: Չնայած հայկական անվանումներին՝ դրանք սովորական բյուզանդական պրովինցիաներ էին և կառավարվում էին բյուզանդական պաշտոնյաների կողմից:

Այսպիսով՝ հայ նախարարները վերջնականապես զրկվեցին վարչական ու ռազմական իշխանությունից, բայց շարունակում էին տիրել իրենց տոհմային կալվածքներին: Կայսրը շուտով երկու կարևոր օրենք հրապարակեց, որոնց նպատակը հայ նախարարների տնտեսական հզորության թուլացումն էր: Հինավուրց սովորույթի համաձայն՝ նախարարական տոհմերի հողային տարածքները հորից անցնում էին ավագ որդուն: Դրանք չէին մասնատվում մյուս որդիների, առավել ևս՝ դուստրերի միջև, որով պահպանվում էր տոհմային կալվածքի ամբողջականությունը: Կայսրը արգելեց հին հայկական ավանդույթը և, առանձին օրենքով, տոհմային կալվածքներից բաժին ստանալու իրավունք տվեց նաև կանանց: «Վայել չէ ո՛չ հռոմեացիներին, ո՛չ էլ մեր պետության արդարության ոգուն, որ ծնողներին ժառանգելու իրավունք ունեն միայն տղամարդիկ, բայց ոչ երբեք կանայք»,- կեղծավորաբար հայտարարում էր կայսրը: Մեկ այլ օրենքով կայսրը հարկադրեց, որ աղջիկներին ամուսնացնելիս ծնողները պետք է նրանց պարտադրաբար օժիտ հատկացնեն: Այդ օրենքն առաջին հայացքից անիմաստ էր, քանի որ հայկական միջավայրում օժիտ տալու սովորույթը մինչ այդ էլ տարածված էր: Սակայն Հուստինիանոսի «հոգատարությունը» հայ օրիորդների նկատմամբ ուներ հեռահար նպատակ: Նա ցանկանում էր, որ ամուսնանալիս նրանք, որպես օժիտ, ստանան նաև հայրական կալվածքների որոշակի բաժին: Այդպիսով՝ հայ նախարարների տոհմային տիրույթները ժամանակի ընթացքում կփոշիանային, որով բյուզանդացիներին ցույց տրվող դիմադրությունը կթուլանար:

Հուստինիանոս կայսեր վերափոխումներն Արևմտյան Հայաստանի ներքին ինքնուրույնության վերջնական վերացման պայմաններ էին ստեղծում:

Հակաբյուզանդական ելույթներն Արևմտյան Հայաստանում: Բյուզանդական քաղաքականությունը զայրույթ էր առաջացնում Արևմտյան Հայաստանում: Հուստինիանոսի օրոք հայերը բազմիցս զենքի դիմեցին բյուզանդական ատելի վարչակարգի դեմ: Ամենախոշոր ելույթը տեղի ունեցավ 539թ. Առաջին Հայքում: Այդ զանգվածային ընդվզումը գլխավորեց Հովհաննես Արշակունին: Հայերը չհանդուրժեցին հարկերի անօրինակ ծանրացումը և սպանեցին բյուզանդական կառավարչին:

Մայրաքաղաքից շուտով պատժիչ զորքեր ուղարկվեցին հայկական ծագում ունեցող Սիտտաս զորավարի գլխավորությամբ: Նա սկզբում կեղծ խոստումներ տվեց ապստամբներին, ապա փորձեց կաշառել և իր կողմը գրավել ղեկավարներին: Երկու դեպքում էլ Սիտտասը հաջողության չհասավ և զենքի դիմելու հրաման արձակեց: Բայց ապստամբ հայերը ջախջախեցին ու հալա-

ծեցին պատժիչներին: Սպանվեց նաև բյուզանդական հրամանատարը: Բյուզանդացիները նոր զորաբանակ ուղարկեցին և դարձյալ փորձեցին ստոր միջոցներով ճնշել ապստամբությունը: Բյուզանդական զորավարը բանակցությունների հրավիրեց ապստամբության ղեկավարներին և խնջույքի պահին սպանել տվեց Հովհաննես Արշակունուն: Կորցնելով ղեկավարին՝ ապստամբները շուտով դադարեցրին դիմադրությունը:

Հայերը ձգտում էին վրեժխնդիր լինել Հուստինիանոսից նաև հետագայում: 548թ. նրան սպանելու նպատակով դավադրություն կազմակերպեցին Արշակ Արշակունին և սպանված Հովհաննես Արշակունու որդի Արտավանը: Դավադրությունը ձախողվեց, և կազմակերպիչները բանտարկվեցին: Բայց կայսրը ստիպված էր հաշվի առնել ազդեցիկ հայ ազնվականության տրամադրությունները, և որոշ ժամանակ անց դավադրության մասնակիցներն ազատ արձակվեցին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ որոշում ընդունեց Դվինի 506թ. եկեղեցական ժողովը:
2. Ինչ քաղաքականություն էր վարում Բյուզանդիան Արևմտյան Հայաստանում:
3. Ինչ վարչական վերափոխություններ կատարեց Հուստինիանոս I կայսրը Բյուզանդական Հայաստանում: Ինչ նպատակներ էին դրանք հետապնդում:
4. Ինչ նպատակով էր Հուստինիանոսը հայկական զինուժը դուրս բերում հայկական երկրամասերից:
5. Հուստինիանոսն ինչպե՞ս թուլացրեց հայ նախարարների տնտեսական և քաղաքական կարողությունը:
6. Արդյոք հայերն անմռունչ ընդունեցին Հուստինիանոսի ձեռնարկումները:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

«Վայել չէ ո՛չ հռոմեացիներին, ո՛չ էլ մեր պետության արդարության ոգուն, որ ծնողներին ժառանգելու իրավունք ունեն միայն տղամարդիկ, բայց ոչ երբեք կանայք»: Ինչո՞վ եք բացատրում հայ կանանց նկատմամբ Հուստինիանոս կայսեր այդօրինակ «հոգատարությունը»:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Քաղկեդոնի ժողով • երկաբնակներ (քաղկեդոնականներ) • միաբնակներ • Սատրապական Հայաստան • Ներքին Հայք • Արևելքի ռազմական կուսակալություն • Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք • Հուստինիանոս I կայսր • Հովհաննես Արշակունի • Սիտտաս զորավար • Արտավան Արշակունի

2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ

Իրադրությունն Արևելյան Հայաստանում VI դարում: Նվարսակի հաշտության պայմանագրի կնքումից հետո Արևելյան Հայաստանը խաղաղ զարգացման հնարավորություն ստացավ: Մայրաքաղաք Դվինում և Հայաստանի այլ քաղաքներում բարգավաճեցին արհեստներն ու առևտուրը:

VI դարի սկզբին պարսից արքայի հատուկ հրովարտակով Հայոց եկեղեցին պաշտոնապես անկախ ու ինքնուրույն ճանաչվեց:

Բյուզանդիան և Պարսկաստանը Հայաստանում իրենց դիրքն ամրապնդելու նպատակով Հայոց եկեղեցուն կարևոր նշանակություն էին տալիս: Բյուզանդական կայսրերը հայերին պարտադրում էին ընդունել բյուզանդական եկեղեցու դավանանքը: Ուստի Հայոց եկեղեցին եռանդուն պայքար էր ծավալել իր ինքնուրույնությունն ու իրավունքները պաշտպանելու համար: Սասանյան Պարսկաստանը, ելնելով իր պետական շահերից, օգտվում էր քրիստոնեական եկեղեցու պառակտված վիճակից և ձգտում էր իր կողմը գրավել բյուզանդական եկեղեցու կողմից հալածանքների ենթարկվող հայ հոգևորականությանը:

Դվինի 554թ.՝ երկրորդ եկեղեցական ժողովը հավատարիմ մնաց հայ հոգևորականության հետևողական դիրքորոշմանը: Ժողովը պաշտոնապես ընդունեց ***հայկական տոմարը*** (օրացույցը) և իր որոշումներով ամրապնդեց Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը: Այսպիսով՝ նոր և կարևոր քայլ կատարվեց Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի դարձնելու ճանապարհին:

Ժողովը հակաբյուզանդական ուղղվածություն ուներ, ուստի պարսիկները շտապեցին խրախուսել հայ հոգևորականությանը: Հոգևորականներին սիրաշահելու նպատակով պարսից արքունիքը հայ ազնվականներից վերցրեց հարկեր գանձելու ժառանգական իրավունքը և շնորհեց հոգևորականներին:

Սասանյան Պարսկաստանի համեմատաբար հանդուրժողական քաղաքականությունը բացատրվում էր պարսից տերության ներքին ծանր ճգնաժամով: Լայն ծավալ էին ընդունել ժողովրդական հուզումները, ապստամբել էին հպատակ ժողովուրդները, իսկ պարսկական զորքերը դժվարին պաշտպանական մարտեր էին մղում երկրի սահմաններում:

Խոսրով I Անուշիրվան (531-578թթ.) թագավորի երկարատև կառավարման ժամանակաշրջանում Սասանյան Պարսկաստանը խոշոր հաջողությունների հասավ ներքին և արտաքին ասպարեզներում: Կրկին հզորացած Պարսկաստանը վերադարձավ հայերին ձուլելու և Հայաստանի կիսանկախ վիճակը վերացնելու երբեմնի քաղաքականությանը: Այդ նպատակին էին ծառայում վարչական փոփոխությունները, հարկային քաղաքականությունը և զրադաշտականությունը տարածելու ծրագիրը:

Խոսրով թագավորի օրոք Պարսկաստանը վերջնականապես բաժանվեց չորս քուստակների՝ կողմերի, որոնք իրենց հերթին բաղկացած էին մարզ-

պանություններից ու առանձին աշխարհներից: Արևելյան Հայաստանը, Վրաստանի ու Աղվանքի հետ, մտնում էր Հյուսիսային քուստակի կազմի մեջ և ենթարկվում նրա կառավարիչ փոխարքային: Եթե առաջներում Հայաստանի մարզպանն անմիջականորեն պատասխանատու էր պարսից արքունիքին, ապա այսուհետև զրկվում էր արտոնյալ դիրքից: Հայաստանը ոչ միայն վերածվում էր երկրորդական մարզի, այլև զրկվում էր ներքին ինքնուրույնությունից:

Հայաստանի համար խիստ անբարենպաստ էր պարսիկների հարկային նոր քաղաքականությունը: Անցկացված աշխարհագրով փոխվեց հարկերի գանձման կարգը: Նախկինում հարկերը գանձվում էին բնամթերքով, այսինքն՝ գյուղացիները հարկահավաքին էին հանձնում ստացված բերքի մի մասը: Այժմ շինականները պարտավոր էին հարկերի մի մասը վճարել նաև դրամով, որը ճարելը չափազանց դժվար էր:

Այս ամենի հետ մեկտեղ պարսիկները չէին հրաժարվել նաև զրադաշտականության բռնի տարածման և կրոնական հալածանքների քաղաքականությունից:

Պարսից արքունիքը Վահան Մամիկոնյանին փոխարինած եղբոր՝ Վարդի մահից հետո մարզպանի պաշտոնը կրկին հանձնում է պարսիկներին: Միայն առանձին դեպքերում էր այդ պաշտոնը վստահվում հայ նախարարներին: Իսկ պարսիկ պաշտոնյաները հաճախ էին բռնություններ գործադրում և ապօրինությունների դիմում:

Պարսկական իշխանությունների կամայականություններն անտանելի դարձան հատկապես այն ժամանակ, երբ Հայաստանի մարզպան նշանակվեց պարսիկ Սուրենը: Արքունիքը նրան ընդարձակ իրավունքներ էր տվել և նրա հետ Հայաստան էր ուղարկել ընտիր այրուձի: Նոր մարզպանը, զգալով Հայաստանում դժգոհության տարածումը, որոշեց սկզբից ևեթ ահաբեկել հայերին: Նրա կարգադրությամբ սպանվեց երկրի ամենաազդեցիկ իշխաններից մեկը՝ Մանվել Մամիկոնյանը, սաստկացան նաև ճնշումներն ու հարստահարությունը: Քրիստոնյաները նորից բացահայտ հալածանքների էին ենթարկվում:

Խոսրով I թագավորի քաղաքականությունը, ինչպես նաև պարսկական իշխանությունների չարաշահումները, լցրել էին հայերի համբերության բաժակը: Երկիրը կանգնած էր ապստամբության եզրին և վճռական գործողությունների դիմելու ազդանշանի էր սպասում:

571-572թթ. ապստամբությունը: Ապստամբության անմիջական առիթ հանդիսացավ Դվինում կրակապաշտության համար ատրուշան կառուցելը: Ապստամբության գլուխ կանգնեց ***Վարդան Մամիկոնյանը*** (Վարդան Կրտսեր): Շարժման ոգեշնչողներից էր ժամանակի Հայոց կաթողիկոս Հովհաննես Բ-ն: Նրանց հաջողվեց հավաքել 10-հազարանոց բանակ, ձեռք բերել

դաշնակիցներ: Այս անգամ ևս հայերին միացան Պարսկաստանի քաղաքականությունից դժգոհ վրացիներն ու աղվանները: Հուսադրող էր նաև Պարսկաստանի դարավոր հակառակորդ Բյուզանդական կայսրության դիրքորոշումը:

Հայկական պատվիրակությունն այս անգամ Կոստանդնուպոլսում ջերմ ընդունելություն գտավ:

Բյուզանդացիների հետ կնքած դաշինքով հայերը խոստացան ընդունել Բյուզանդիայի գերիշխանությունը: Իրենց հերթին՝ բյուզանդացիները պարտավորվեցին ապստամբության ճախողման դեպքում ապաստան տալ Բյուզանդիա փախած հայերին: Բյուզանդացիների խոստումները Հայաստանում առաջ բերեցին համընդհանուր ոգևորություն:

Դեպքերի զարգացումից խիստ անհանգստացած Սուրեն մարզպանը 571թ. շտապ մեկնեց Տիզբոն՝ անձամբ զեկուցելու պարսից արքային: Խոսրով թագավորը 15-հազարանոց զորք տրամադրեց մարզպանին և հրամայեց վերադառնալ Հայաստան: Սուրենին հրահանգ տրվեց անողոք դատաստան տեսնել ապստամբների հետ: Բայց պարսկական իշխանությունների ուժերից վեր էր կանխել ապտամբության ծավալումը: Հայոց զորքերի թիվն արդեն հասել էր 20 հազարի, ուստի ապստամբները նշանակալի ուժ էին ներկայացնում: Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ նրանք 572թ. ջախջախեցին պարսկական բանակը, գրավեցին Դվինը և սպանեցին Սուրենին:

Հայերի զինված ելույթից հետո Բյուզանդիան զորքեր ուղարկեց Հայաստան: Բյուզանդացիների օգնությամբ հայերը պարտության մատնեցին պարսիկ նոր զորավար Միհրանին: Պարսկական տիրապետության դեմ ուղղված ապստամբությունը հետզհետե վերաճեց պարսկա-բյուզանդական երկարատև պատերազմի:

Պարսկա-բյուզանդական պատերազմը և Հայաստանը: Երկու տերությունների միջև սկսված պատերազմը կատարյալ արհավիրք էր Հայաստանի համար: Ռազմական գործողությունները մղվում էին Հայաստանում՝ ավերածության ենթարկելով երկիրը:

Պատերազմը փոփոխակի հաջողություններով շարունակվեց 20 տարի: Ի վերջո, Բյուզանդիան և Պարսկաստանը 591թ. համաձայնության եկան ու հաշտություն կնքեցին: Այդ հաշտությամբ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց նրանց միջև: Բյուզանդիան զգալիորեն ընդլայնեց իր սահմանները: Նրան անցան Տուրուբերանը, Տայքը և Այրարատի մեծ մասը:

Բյուզանդիան չգնահատեց այն մեծ աջակցությունը, որ ցույց էին տվել հայերը: Բյուզանդական կայսրերը շարունակեցին վարել Հայաստանի զինական ուժերը ոչնչացնելու քաղաքականություն: Մորիկ կայսեր հրամանով հայոց նախարարական գնդերը տեղափոխվում էին երկրի հեռավոր սահմաններ՝

մարտնչելու կայսրության թշնամիների դեմ: Այս կերպ Բյուզանդիան կանխում էր հայերի ազատագրական շարժումները:

Բյուզանդական բանակի հայ զինվորներ

Հայ զորականները, սակայն, հաճախ չէին ենթարկվում կայսերական հրամաններին, գերադասում էին մնալ Հայաստանում: Օրինակ՝ Սմբատ Բագրատունին չհնազանդվեց բյուզանդացիներին և ձերբակալվեց: Սակայն նա խիզախություն դրսևորեց՝ կրկեսում սպանելով իր վրա արձակված արջին, ցուլին և առյուծին: Հիացած հանդիսականների պահանջով բյուզանդական կայսրը նրան ներում շնորհեց:

Բյուզանդական արքունիքի եկեղեցական քաղաքականության հաջողությունը եղավ 607թ., Հայոց կաթողիկոս Աբրահամ Աղբաթանեցու օրոք, վրաց եկեղեցու անջատումը Հայոց եկեղեցուց: Այսպիսով՝ հայերի և վրացիների դավանական միասնությունը խախտվեց, որը բացասական հետևանքներ ունեցավ հետագայում: Պարսկա-բյուզանդական բազմամյա պատերազմները շարունակվեցին նաև VII դ. առաջին կեսին ու չափազանց թուլացրին երկու կողմերին էլ: Պատմական ասպարեզում հայտնված արաբները կարողացան արագորեն հաղթանակի հասնել թե՛ Բյուզանդիայի և թե՛ Պարսկաստանի դեմ պայքարում:

Աբրահամ Աղբաթանեցի

ՍԵԲԵՈՍԸ՝ 571-572ԹԹ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Խոսրովի թագավորության 41-րդ տարում Վարդանը ապստամբեց և ամենայն հայոց միաբանությամբ դուրս եկավ պարսից թագավորությունից: Դվին քաղաքում՝ հանկարծակիորեն սպանելով Սուրեն մարզպանին, մեծ ավար առան և գնացին հույներին ծառայության:

...Իսկ հունաց թագավորը երդվեց հայերին և վերահաստատեց նույն ուխտը, որ կար երկու թագավորների՝ երանելի Տրդատի և Կոստանդինոսի միջև, և տվեց նրանց կայսերական զորքերը օգնության: Եվ նրանք, առնելով զորքը, դիմեցին Դվին քաղաքի վրա, պաշարելով կործանեցին վերից վար և հալածեցին պարսից զորքին, որ գտնվում էր այնտեղ:

...Ապա 20-հազարանոց զորքով և բազում փղերով նրանց վրա եկավ Միհրան Միհրևանդակը: Եվ մեծ պատերազմ եղավ Խաղամախի դաշտում, և պարսից զորքին սաստիկ հարվածներով ջարդ տալով՝ սրի քաշեցին, բոլոր փղերը խլեցին: Իսկ Միհրանը, քչերի հետ փրկվելով, գնաց իրենց երկիրը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ նշանակություն ունեցավ Դվինի 554թ. եկեղեցական ժողովը:
2. Ինչ նպատակ էին հետապնդում Խոսրով I-ի վարչական վերափոխումները:
3. Որո՞նք էին 571-572թթ. հակապարսկական ապստամբության պատճառները:
4. Ե՞րբ տեղի ունեցավ Հայաստանի երկրորդ բաժանումը Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև, և ինչ տարածքներ անցան կայսրությանը:
5. Փորձե՛ք բնութագրել Մորիկ կայսեր հայահալած քաղաքականության գլխավոր նպատակը:
6. Ինչ հետևանքներ ունեցան պարսկա-բյուզանդական երկարատև պատերազմները Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի համար:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• պարսից արքա Խոսրով I • մարզպան Վարդ Մամիկոնյան • Սուրեն՝ Հայաստանի պարսիկ մարզպան • Վարդան Մամիկոնյան (Վարդան Կրտսեր) • Հովհաննես Բ Հայոց կաթողիկոս • պարսիկ զորավար Միհրան • Հայաստանի երկրորդ բաժանում • Սմբատ Բագրատունի • Մորիկ կայսր

3. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Արաբական արշավանքները և Հայաստանը: Արաբական ցեղերը հնագույն ժամանակներից ի վեր բնակվում էին Արաբական թերակղզում: Արաբները հիմնականում զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ, մասամբ էլ երկրագործությամբ: Նրանք ապրում էին մեկուսացած կյանքով և հաճախ պատերազմում միմյանց դեմ:

630թ. Մուհամմեդին հաջողվեց արաբական ցեղերին միավորել մեկ միասնական պետության՝ խալիֆայության մեջ: Դրանում մեծ դեր խաղաց արաբների նոր կրոնը՝ մահմեդականությունը (իսլամ): Այն քարոզում էր հնազանդություն պետության ղեկավարին՝ խալիֆին, և հանուն հավատի

պատերազմ (ջիհադ) ընդդեմ այլահավատների, այսինքն՝ ոչ մահմեդականների:

Մահմեդականության դրոշի ներքո արաբական ռազմատենչ ցեղերի միավորմանն ու Արաբական խալիֆայության ստեղծմանը հաջորդեցին արտաքին նվաճումները: Դրանց նպաստեց այն, որ Բյուզանդական կայսրությունն ու Սասանյան Պարսկաստանը միմյանց դեմ մղած երկարամյա պատերազմների հետևանքով զգալիորեն թուլացել էին:

Արաբ զինվոր

Արաբները 636թ. Բյուզանդիայից խլեցին Ասորիքն ու Միջագետքը, իսկ հաջորդ տարի վերջ տվեցին Սասանյան Պարսկաստանի գոյությանը: Դրանից հետո հայոց սպարապետ ***Թեոդորոս Ռշտունին*** Բյուզանդիայի կողմից նշանակվեց ամբողջ Հայաստանի իշխան և սպարապետ: Նրա նստավայրն Աղթամար կղզին էր:

Արաբները դեպի Հայաստան կազմակերպեցին մի քանի արշավանքներ: Դրանք հետախուզական ու ավարառուական նպատակներ էին հետապնդում: Առաջին անգամ նրանք 640թ. աշնանը մտան Տարոն և հայոց փոքրաթիվ ուժերի դիմադրությունը ճնշելով հասան Կոգովիտ: Դրանից հետո արաբական զորքերը, անցնելով Հայկական Պար լեռնաշղթան, մտան Արարատյան դաշտ: Մեկօրյա կռվից հետո նրանք գրավեցին գրեթե անպաշտպան Դվինը: Թեոդորոս Ռշտունին այդ ժամանակ զորքով գտնվում էր Նախճավանում և չհասցրեց օգնության հասնել քաղաքին: Արաբները Դվինը կողոպտեցին ու ավերեցին: Նրանք սպանեցին 12 հազար հոգու և հարուստ ավարով ու 35 հազար գերիներով հետ դարձան: Թեոդորոս Ռշտունին իր փոքրաթիվ ուժերով Կոգովիտում փորձեց արաբներին հակահարված տալ, բայց հաջողության չհասավ:

Արաբները մեծ ուժերով կրկին ներխուժեցին Հայաստան 643թ.: Նրանք, առանձին զորախմբերի բաժանվելով, սկսեցին ասպատակել Գողթն ու Նախճավան գավառները: Երբ արաբական մի զորամաս մտավ Արտազ գավառ, Թեոդորոս Ռշտունին բյուզանդական զորքերի հրամանատար Պրոկոպիոսին առաջարկեց թշնամու դեմ համատեղ գործել: Սակայն վերջինս հայոց սպարապետին մերժեց և արաբներին ճակատամարտ տվեց միայն իր զորքով, բայց պարտվեց: Արաբներն այս անգամ էլ անկորուստ հետ դարձան: Արդարանալու համար Պրոկոպիոսն իր պարտության մեղքը գցեց Թեոդորոս Ռշտունու վրա: Հայոց զորավարը ձերբակալվեց և ուղարկվեց Կոստանդնուպոլիս: Սակայն որոշ ժամանակ անց նա ոչ միայն արդարացվեց, այլև հաստատվեց իր իրավունքներում և ուղարկվեց Հայաստան:

Արաբական զորքերը երրորդ անգամ Հայաստան ներխուժեցին 650թ.: Նրանք, երեք զորախմբի բաժանվելով, ասպատակեցին ոչ միայն Հայաստանը, այլև Աղվանքը: Քանի որ բյուզանդական զորքերը հեռացել էին, հայերն արաբների դեմ պետք է գործեին մեն-մենակ: Ահեղ թշնամու դեմ անհավասար պայքարը դարձյալ գլխավորում էր Թեոդորոս Ռշտունին: Արաբները մի քանի բերդեր անհաջող պաշարելուց հետո հարձակվում են Արծափ բերդի վրա ու գրավում: Նրանք մտադիր էին կոտորել գերված բազմաթիվ հայերին: Սակայն Թեոդորոս Ռշտունին կանխեց նրանց: Նա իր զորամասով հանկարծակի հարձակմամբ ոչնչացրեց թշնամու 3 հազար զինվորների, այդ թվում՝ երկու զորապետի: Այդուհանդերձ՝ Այրարատ, Տայք ու Վասպուրական արշաված արաբական զորախմբերը մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով հետ դարձան:

Հայ-արաբական պայմանագիրը: Չնայած արաբների՝ այս անգամ ևս Հայաստանից հեռանալուն՝ պարզ էր, որ նրանց բուն նպատակն առաջիկայում Հայաստանի նվաճումն էր: Այդ հանգամանքը հայ աշխարհիկ ու հոգևոր վերնախավին ստիպում էր ստեղծված ծանր վիճակից դուրս գալու ելք գտնել: Հայոց վերնախավի մի մասը, բյուզանդամետ Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի գլխավորությամբ, սին հույսեր էր կապում Բյուզանդիայի օգնության հետ: Սակայն Բյուզանդիան ոչ միայն ի վիճակի չէր ապահովելու Հայաստանի անվտանգությունը, այլև համառորեն փորձում էր հայերին քաղկեդոնականություն պարտադրելով ձուլել: Այդ ամենը լավ էր հասկանում հայոց վերնախավի մյուս մասը, որը գլխավորում էր Թեոդորոս Ռշտունին: Նա, քաջ գիտակցելով արաբական վտանգի լրջությունը, դիմեց համարձակ, բայց ճիշտ հաշվարկած քայլի:



Ներսես Գ Տայեցի

Թեոդորոս Ռշտունին 652թ. հարուստ ընծաներով գնաց Դամասկոս: Նա այնտեղ բանակցեց Ասորիքի ու Հյուսիսային Միջագետքի արաբ կառավարիչ, իսկ շատ չանցած՝ խալիֆ դարձած Մուավիայի հետ: Կնքվեց հայ-արաբական պայմանագիր, և Հայաստանը որոշակի պայմաններով ընդունեց արաբական գերիշխանությունը: Հայաստանը երեք տարի հարկ չէր մուծելու, իսկ դրանից հետո հարկի չափը հայերն էին որոշելու: Հայաստանն իրավունք էր ստանում խալիֆայությանը տրվելիք հարկի հաշվին պահելու 15-հազարանոց այրուձի: Այն պաշտպանելու էր Հայաստանի ու Այսրկովկասի սահմանները, իսկ հարկ եղած դեպքում՝ կռվելու հոգուտ արաբների: Խալիֆայությունը պահպանելու էր Հայաստանի ներքին ինքնավարությունը: Հայաստան արաբական պաշ-

տոնյաներ ու զինվորականներ չէին մտցվելու: Արտաքին հարձակումների դեպքում արաբները պաշտպանելու էին երկիրը:

Հայ-արաբական պայմանագիրը, չնայած երբեմն խախտվելուն, մեծ դեր խաղաց: Դրա շնորհիվ, ձևականորեն ընդունելով արաբական գերիշխանությունը, Հայաստանը մինչև VIII դարի սկիզբը պահպանեց իր փաստական անկախությունը:

Հայաստանն Արաբական խալիֆայության կազմում: Հայաստանին ու Այսրկովկասին տիրելու համար արաբա-բյուզանդական մրցակցությունն ավարտվեց Արաբական խալիֆայության օգտին: Արաբական մեծաթիվ բանակը խալիֆի եղբայր Մուհամմեդի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան և, անհամար չարիքներ պատճառելով, 701թ. վերջնականապես գրավեց երկիրը: Արաբները նվաճեցին նաև Վրաստանն ու Աղվանքը՝ մինչև Դերբենդ: Այս տարածքներից կազմվեց վարչական մի միավոր, որը կոչվեց ***Արմինիա***: Նման անվանման պատճառն այն էր, որ նրա տարածքի մեծ մասը Հայաստանն էր: Սկզբում Արմինիայի կենտրոնը Դվինն էր, ապա՝ Պարտավը:

Արմինիան գլխավորում էր խալիֆի նշանակած կուսակալը, որին հայերն անվանում էին ***ուպրիկան***: Նա պարտավոր էր երկիրը հնազանդ պահել, պաշտպանել արտաքին հարձակումներից և ապահովել հարկերի լիակատար ու ժամանակին հավաքումը: Հայաստանի կյանքում ազդեցիկ դեր էր խաղում նաև Հայոց իշխանը: Նա պարտավոր էր ապահովել հայ նախարարների հնազանդությունը և հարկերի կանոնավոր հավաքումը: Հայոց իշխանի բացակայության դեպքում նրան փոխարինում էր սպարապետը: Սպարապետի դերը կարևորվում էր նաև նրանով, որ հայոց այրուձին մասնակցում էր արաբների ռազմական գործողություններին: Հայոց իշխանի և սպարապետի պաշտոնների առկայությունը փաստում էր, որ Հայաստանը որոշ ինքնավարություն ուներ: Այդ պաշտոնները ժառանգական չէին, բայց գլխավորապես տնօրինվում էին Բագրատունիների կողմից: Նրանք նույնիսկ հաճախ համատեղում էին այդ երկու կարևոր պաշտոնները: Շարունակում էր կարևոր դեր խաղալ նաև Հայոց կաթողիկոսը: Նա ոչ միայն տնօրինում էր դատական գործը, այլև կատարում էր դիվանագիտական հանձնարարություններ: Թե՛ սպարապետը և թե՛ կաթողիկոսը պաշտոնավարում էին Հայոց իշխանի համաձայնությամբ:

Արաբները Հայաստանին տիրելուց հետո երկրի ամբողջ ունեցվածքը հայտարարեցին խալիֆայության սեփականություն: Դրան հետևեց հարկերի աստիճանական ծանրացումը: Սկզբում հարկը գանձվում էր ըստ ծխերի, այսինքն՝ գերդաստանների: Հարկերն ավելացնելու նպատակով 725թ. Հայաստան ուղարկվեց Հերթ անունով մի արաբ պաշտոնյա: Նա անցկացրեց մարդահամար (աշխարհագիր), որին հետևեցին հարկաչափերի ավելացումը և նորերի սահմանումը: Դրանով չբավարարվելով՝ Հերթը ծխահարկը փոխարինեց գլխահարկով: Այն պարտավոր էին վճարել 15-60 տարեկան բոլոր

տղամարդիկ: Հարկերը սկսեցին գանձվել նաև դրամով, որի պակասը բնակչության վիճակն ավելի վատացրեց: Հարկերը վճարածներին, զանազանելու համար, ստիպում էին կապարե հատուկ կնիքներ կրել: Հարկերը վճարել չկարողացողները կամ ստիպված իրենց էին վաճառում, կամ էլ փախստական դառնում: Արաբները վարում էին կրոնական անհանդուրժողականության քաղաքականություն: Հոգևորականությունը ևս սկսեց հարկեր վճարել: Վանքերն ու եկեղեցիները կամ ունեզրկվում էին, կամ էլ հաճախակի կողոպտվում:

Արաբները Հայաստանի առավել բարեբեր շրջանները, սեփականացնելով, բնակեցնում էին արաբական տարբեր ցեղերով: Այդ ցեղերը շատ շուտով ստեղծեցին ինքնուրույն իշխանություններ՝ ***ամիրայություններ***: Դրանք, ինչպես նաև Հայաստանի քաղաքների արաբական կայազորները, հաճախ էին ոտնձգություններ կատարում բնակչության նկատմամբ: Ուստի բնակչությունը հարկադրված էր հեռանալ պաշտպանության համար բարենպաստ, բայց տնտեսական գործունեության համար անբարենպաստ լեռնային վայրեր: Հայության մի մասն էլ տարագրվում էր՝ առավելապես Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններ: Ընդ որում, հայրենիքից հեռանում էին ոչ միայն ազնվականները, այլև հասարակ բնակիչները:

Արաբական նվաճողներն ամեն կերպ փորձում էին քայքայել հայոց նախարարական համակարգը: Նախարարը պարտավոր էր արաբական իշխանություններին հպատակություն հայտնել, կնքել համապատասխան պայմանագիր և հողահարկ վճարել: Դրանով չբավարարվելով՝ արաբական իշխանությունները հաճախ խլում էին նրանց տիրույթները և հանձնում արաբ վերաբնակիչներին: Արաբները հատկապես անբարյացակամ էին Մամիկոնյան և Կամսարական նախարարական տների նկատմամբ: Պատճառն այն էր, որ դրանք հաճախ էին ըմբոստանում արաբների դեմ: Սակայն հայոց նախարարական համակարգը գոյատևեց: Բագրատունիները, Մամիկոնյանները, Սյունիները, Արծրունիներն ու Արցախի նախարարները հնարավորինս պահպանեցին իրենց տնտեսական ու ռազմական հզորությունը: Դա նրանց թույլ տվեց գլխավորել արաբական նվաճողների դեմ ազատասեր հայ ժողովրդի անզիջում պայքարը:

Հակաարաբական ապստամբությունները: Հայաստանի առաջին ոստիկան Աբդուլլահը ոչ միայն ծանր հարկեր էր սահմանել ու կրոնական հալածանքներ սկսել, այլև մտադիր էր ոչնչացնել հայ նախարարներին: Տեղեկանալով արաբ ոստիկանի նենգ մտադրության մասին՝ Հայոց իշխան Սմբատ Բագրատունին ելք գտնելու նպատակով 703թ. հայ նախարարների գաղտնի ժողով է հրավիրում: Ժողովականների թվում էր նաև Թեոդորոս Ռշտունու որդի Վարդը: Տեսնելով, որ այլ ելք չկա, նախարարները որոշում են իրենց 2000-անոց այրուձիով հեռանալ բյուզանդական սահմաններ: Նրանք մտադիր

էին այնտեղ ուժերը համալրել կամ էլ Բյուզանդիայի կայսրից օգնական ուժեր ստանալ:

Երբ նախարարներն իրենց այրուձիով հասնում են Մասիսի լանջին գտնվող Ակոռի ավան, նրանց սկսում է հետապնդել արաբական 5000-անոց զորքը: Հայկական այրուձին շարժվում է առաջ և ամրանում Երասխի ափին գտնվող Վարդանակերտ ավանում: Շուտով այնտեղ է հասնում նաև արաբական զորքը: Հայ նախարարներն արաբներին առաջարկում են չխոչընդոտել երկրից իրենց հեռանալուն: Արաբները մերժում են: Հայկական այրուձին հաջորդ առավոտ հանկարծակի հարձակվում է թշնամու վրա: Ցրտաշունչ ձմեռային գիշերն անօթևան անցկացնելու պատճառով մարտունակությունը կորցրած և հանկարծակիի եկած արաբները ջախջախվում են: Կենդանի մնացածները փորձում են սառցակալած Երասխի վրայով փախչել, սակայն սառույցը ջարդվում է, և շատերը խեղդվում են: Արաբներից կենդանի են մնում միայն 300-ը, այն էլ Շուշան իշխանուհու գթասրտության շնորհիվ: Սակայն արաբները հետագայում դա չգնահատեցին: Այս հաղթանակից հետո Սմբատ Բագրատունին զինակից նախարարների հետ հաստատվում է Տայքում:

Վարդանակերտի ճակատամարտից հետո ոգևորված հայերը, Արծրունիների ու Կամսարականների գլխավորությամբ, արաբների դեմ փայլուն հաղթանակներ տարան նաև Ռշտունիքում և Վանանդում: Ապստամբները սպանեցին արաբ ոստիկանին: Դրանից հետո խալիֆայությունը հայերի դեմ ուղարկում է մեծաթիվ բանակ, և ապստամբությունը ճնշվում է: Հայերի դիմադրական ներուժը թուլացնելու նպատակով արաբական իշխանությունները 705թ. դիմում են ոճրագործության: Նախճավանի արաբ կառավարիչ Կասիմը հայոց այրուձին հաշվառելու և ռոճիկ վճարելու պատրվակով նախարարներին հրավիրում է իր մոտ: Սակայն նրանց փակում են Նախճավանի ու Խրամ ավանի եկեղեցիներում և ողջակիզում: Հայ նախարարական դասը սոսկալի հարված ստացավ, շատ ընտանիքներ ամբողջությամբ ոչնչացան:

Այդուհանդերձ՝ 703թ. ապստամբությունն անհետևանք չանցավ: Այն ամրապնդեց հայ ժողովրդի մարտական ոգին: Խալիֆայությունն իր հերթին առժամանակ մեղմ քաղաքականություն որդեգրեց: Նորանշանակ ոստիկանն էլ երկրից հեռացած նախարարներին կոչ արեց վերադառնալ և ճանաչեց նրանց ժառանգական իրավունքները:

Արաբական խալիֆայությունում 740-ական թվականներին սկսվում են գահակալական կռիվներ: Ստեղծվում է խառնակ վիճակ, որից օգտվելով՝ հայերը 748թ. ապստամբում են: Ապստամբության գլուխ են անցնում Գրիգոր և Դավիթ Մամիկոնյան եղբայրները: Սակայն շուտով խալիֆի հրամանով Դավիթը ձերբակալվում ու սպանվում է: Գրիգորի շուրջը համախմբվում են մի շարք նախարարներ: Նրանց ճնշման ներքո ապստամբությանը հարում է նաև Հայոց իշխան ու սպարապետ Աշոտ Բագրատունին: Ապստամբները, միմյանց

հավատարմության երդում տալով, ընտանիքներով տեղափոխվում են Տայք: Նրանք հույս ունեին Պոնտոսում գտնվող բյուզանդական զորքերից աջակցություն ստանալ: Այս նպատակով Գրիգոր Մամիկոնյանը կապ հաստատեց բյուզանդական կայսեր հետ: Շուտով պարզվեց, որ ապստամբության մասնակից նախարարները միաբան չեն: Գրիգոր Մամիկոնյանը գտնում էր, որ պետք է Բյուզանդիայի օգնությամբ տապալել արաբական տիրապետությունը: Աշոտ Բագրատունին, որն իբրև Հայոց իշխան ու սպարապետ պատասխանատու էր երկրի համար, այլ կերպ էր մտածում: Նա գտնում էր, որ պետք է ոչ թե ապստամբել, այլ արաբներից զիջումներ կորզելով՝ երկրում հնարավորինս տանելի դրություն ապահովել: Թե՛ Գրիգորը և թե՛ Աշոտն ունեին իրենց կողմնակիցները:

Այդ տարակարծություններն Աշոտ Բագրատունուն դրդեցին իր համակիր նախարարների հետ հեռանալ Բագրևանդ ու գործակցել արաբների հետ: Սակայն Գրիգոր Մամիկոնյանն իբրև ուխտազանցի Աշոտին գերեց և կուրացնել տվեց: Աշոտ Բագրատունին ստիպված թողնում է քաղաքական ասպարեզը: Գրիգոր Մամիկոնյանը 749թ. մահանում է, որից հետո արաբները ճնշում են ապստամբությունը:

774-775թթ. Հայաստանում տեղի ունեցավ նոր, նախորդներից ավելի հզոր ապստամբություն: Դրդապատճառները հարկերի խիստ ավելացումն ու ժողովրդի վիճակի առավել ծանրացումն էին: Ուստի պատահական չէ, որ ապստամբությանը հարեցին նախարարական շատ տներ: Ապստամբության ազդանշանը տվեց Արտավազդ Մամիկոնյանը: Նա, ջոկատ հավաքելով, գնում է Դվին և խալիֆայության թշնամիների դեմ պայքարելու պատրվակով զինում իր ռազմիկներին: Արտավազդն այնուհետև շարժվում է Կումայրի և այնտեղ գտնվող արաբ հարկահաններից խլելով հավաքած հարկերը՝ իր ջոկատով հեռանում է հյուսիս: Նրան հետապնդող արաբներին հաջողվում է հետ վերցնել հարկերի մի մասը, և նա հարկադրված անցնում է Եգերք, այնուհետև՝ Բյուզանդիա:

Դրանից հետո ապստամբությունը մեծ թափ է ստանում: Համաժողովրդական այդ ընդվզման գլուխ է անցնում Մուշեղ Մամիկոնյանը: Նա Տարոնում կոտորում է շահատակություններով զբաղվող արաբ պաշտոնյաներին: Այնուհետև Մուշեղն ամրանում է անառիկ Արտագերս ամրոցում: Շուտով նրա հռչակը տարածվում է երկրով մեկ: Մուշեղն իր զորաջոկատով ոչնչացնում է արաբ հարկահաններին, ապա Խարս և Բագավան գյուղերի մոտ հաղթում ու հալածում արաբական զորքերին: Բագավանի ճակատամարտից հետո Դվինի արաբական կայազորը վախենում էր դուրս գալ քաղաքից: Ապստամբների շարքերը գնալով ստվարանում են: Ապստամբությանը հարում են նոր նախարարներ, այդ թվում՝ հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին: Ապստամբական ուժերի թիվը հասնում է 5 հազարի: Շատերը կարծում էին, թե

արաբական տիրապետության վախճանը մոտ է: Սակայն ոչ բոլոր նախարարներն էին մասնակցում ապստամբությանը, իսկ խալիֆայությունը պատրաստվում էր համապատասխան քայլերի՝ ճնշելու այն:

Ապստամբները դիմեցին վճռական գործողությունների: Նրանք որոշեցին գրավել բյուզանդական սահմանագլխին ընկած Կարինը: Ռազմավարական առումով շատ կարևոր այդ քաղաքը լավ ամրացված էր: Այն պաշտպանվում էր արաբական կայազորի կողմից: Հաջողության դեպքում խալիֆայությունը մեծ հարված կստանար, իսկ ապստամբներն իրենց թիկունքում կունենային արաբներին թշնամի Բյուզանդիան: Ապստամբները 774-775թթ. ձմռանը Կարինը պաշարելով՝ քարանետ մեքենաներով արաբական կայազորին մեծ վնասներ պատճառեցին, բայց քաղաքը գրավել չկարողացան: Դվինի արաբական կայազորն այդ ընթացքում չէր հանդգնում օգնության հասնել Կարինում պաշարվածներին, սպասում էր գարնանը խալիֆի ուղարկելիք զորքին:

Խալիֆը 775թ. գարնանն Ամիր զորավարի գլխավորությամբ 30-հազարանոց լավ սպառազինված ու մարտունակ զորք ուղարկեց Հայաստան՝ ճնշելու ապստամբությունը: Այն հասավ Խլաթ և այնտեղ բանակեց: Ապստամբներն անհեռատես քայլ կատարեցին, երբ փորձեցին գրավել Արճեշ բերդաքաղաքը և հաստատվել այնտեղ: Երբ նրանք շարժվեցին Արճեշ, բերդաքաղաքի մերձակայքում դարանակալ հարձակման ենթարկվեցին իրենց երթուղուն քաջատեղյակ արաբների կողմից: Մեծաքանակ ու լավ զինված արաբների և վատ զինված ու անվարժ ապստամբների բախումն ավարտվեց արաբների հաղթանակով: Ապստամբները ծանր պարտություն կրեցին՝ տալով 1500 զոհ: Նրանց մի մասը խեղդվեց Վանա լճում:

Արճեշի ճակատամարտից հետո արաբական զորքը շարժվեց Կարինը պաշարածների դեմ: Այն բանակեց Բագրևանդ գավառի Արձնի գյուղի մոտ: Չնայած ապստամբները մոտ էին Կարինի գրավմանը, բայց լսելով Արճեշի աղետի լուրը՝ դադարեցրին պաշարումը: Նրանք կարող էին անվտանգ անցնել Բյուզանդիա կամ էլ շարունակել անհավասար պայքարը: Ըստ Ղևոնդի՝ նրանք գերադասեցին «իրենց անձերի մահը, քան մեր երկրի կորուստը» և Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ շարժվեցին դեպի Արձնի՝ թշնամուն ընդառաջ: Ճակատամարտը տեղի ունեցավ 775թ. ապրիլի 24-ին Արձնի գյուղի մոտ: Թշնամին քանակապես ու սպառազինությամբ անհամեմատ գերազանցում էր ապստամբներին: Սակայն հայերը չերկնչեցին և վաղ առավոտյան հարձակման անցան: Սկզբում հաջողությունը հայերի կողմն էր, բայց թշնամու վեցակի քանակական գերակշռությունն աստիճանաբար զգացվեց: Արաբները մեծ կորուստներով հետ մղեցին հայերի գրոհը և հակահարձակմամբ հաղթանակի հասան: Ջոհվեցին 3 հազար հայեր, այդ թվում՝ բազմաթիվ նախարարներ: Նրանց թվում էին ապստամբության ղեկավար Մուշեղ Մամիկոնյանը և հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին:

Չնայած պարտությանը՝ 774-775թթ. համաժողովրդական ապստամբությունը ցնցեց խալիֆայության հիմքերը և հայ ժողովրդի մեջ հավատ ներշնչեց վերջնական հաղթանակի նկատմամբ: Սակայն նախարարական շատ տներ թուլացան, իսկ Մամիկոնյաններն ու Կամսարականները երկրի քաղաքական կյանքից գրեթե դուրս մղվեցին: Բագրատունիներն ու Արծրունիները գնալով հզորացան և խոհեմորեն գլխավորեցին ազատասեր հայ ժողովրդի համառ պայքարը հանուն անկախության:

Հայաստանի ինքնավարության վերականգնումը: 850-855թթ. ապստամբությունը: Արաբական խալիֆայությունը գնալով թուլանում էր: Դրանից օգտվելով՝ IX դ. սկզբներից հայ իշխանական (նախարարական) տները հզորանում էին: Հատկապես ուժեղացան Բագրատունիները, որոնք բաժանվել էին երկու ճյուղի՝ Շիրակի ու Տարոնի: Նրանք իրենց տիրույթներն ընդլայնեցին գլխավորապես ի հաշիվ Մամիկոնյանների ու Կամսարականների կալվածքների: Բագրատունիների հաջողությունները պայմանավորված էին նաև Հայաստանում հաստատված արաբական ամիրայությունների դեմ անզիջում պայքարով:

Բագրատունիների վերելքը կապված է նշանավոր իշխան ***Աշոտ Բագրատունու*** անվան հետ: Նա կրում էր ***Մսակեր*** մականունը: Արաբական իշխանությունները 804թ. Աշոտ Մսակերին նշանակեցին Հայոց իշխան: Նա էլ իր եղբայր Շապուհին կարգեց հայոց սպարապետ: Աշոտ Մսակերի նստավայրը Բագարանն էր: Այդ ժամանակ հզորանում էին նաև Արծրունիների, Սյունիների և Արցախի իշխանական տները: Դրանք Բագրատունիների հետ տիրում էին երկրի մեծ մասին: Կրճատվել էր նաև խալիֆայությանը տրվող հարկերի չափը: Ընդ որում, հարկը կանոնավոր չէր վճարվում:

Աշոտ Մսակերին 826թ. հաջորդեց ավագ որդին՝ Տարոնի տեր Բագարատը: Նա ստացել էր Հայոց իշխանից ավելի բարձր իրավունքներ ունեցող ***Հայոց իշխանաց իշխանի*** պաշտոնը: Աշոտն անգամ փորձում էր դառնալ ոստիկան: Բագարատի եղբայրը՝ Շիրակի տեր Սմբատը, դարձել էր հայոց սպարապետ: Բագարատ Բագրատունու օրոք Հայաստանը դարձել էր ինքնավար երկիր:

Արաբական խալիֆայությունը չէր հաշտվում Հայաստանի ինքնավարության հետ: Այն վերացնելու և հարկերը ծանրացնելու նպատակով խալիֆը 849թ. Հայաստան ուղարկեց նոր ոստիկանի՝ Աբուսեթին: Համաձայն ընդունված կարգի՝ Բագարատ Բագրատունին պարտավոր էր անձամբ դիմավորել նորանշանակ ոստիկանին: Սակայն նա բավարարվեց թանկարժեք ընծաների հետ հարկերը նրան ուղարկելով: Աբուսեթը, տեսնելով, որ ուժի դիմելը վտանգավոր է, հետ դարձավ: Մինչ այդ նա երկու զորավարների հրամայել էր ասպատակել Տարոնն ու Վասպուրականը և բռնի գանձել հարկերը: Սակայն Աբուսեթը թերագնահատել էր հայոց ուժերը: Բագարատ Բագրատունին և Վասպուրականի տեր Աշոտ Արծրունին միացյալ զորքով ջախջախեցին ու

վռնդեցին արաբներին: Այդ քայլով նրանք բռնեցին բացահայտ պայքարի ուղին:

Հայաստանից հեռանալով՝ Աբուսեթն իր հետ տարավ տեղի մահմեդական վերաբնակիչների բողոքագրերը հայ իշխանների դեմ: Զայրացած խալիֆը 850թ. Աբուսեթին կրկին մեծ զորքով ուղարկում է Հայաստան՝ հրամայելով հնազանդեցնել երկիրը: Սակայն Աբուսեթը ճանապարհին մահանում է: Նրան փոխարինում է որդին՝ Յուսուֆը: Նա ասպատակում է Վասպուրականը և փորձում ծուղակը գցել Աշոտ Արծրունուն, բայց չի կարողանում: Ապա իր մոտ՝ Խլաթ է կանչում Բագարատ Բագրատունուն՝ խոստանալով Արմինիայի ոստիկանի պաշտոնը: Երբ Բագարատը գնում է Յուսուֆի մոտ, ձերբակալվում է և շղթայակապ ուղարկվում խալիֆայության մայրաքաղաք՝ Բաղդադ: Դրանից հետո Յուսուֆը ավերում է Տարոնը, իսկ բնակչությանը՝ կողոպտում կամ գերեվարում:

Երբ Յուսուֆն իր հրոսակներով ճմեռում էր Մուշ քաղաքում, Խութ և Սասուն գավառների քաջարի լեռնականները ոտքի են ելնում: Նրանք Խութեցի Հովնանի և Բագարատի երկու որդիների գլխավորությամբ հարձակվում են արաբների վրա և ջախջախում: Յուսուֆը թաքնվում է Մուշի եկեղեցում, սակայն սպանվում է: Սասունցիների այս ընդվզումն ընկած է «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսի հիմքում: Ապստամբությունը գնալով ծավալվում է: Այն ընդգրկում է նաև Արմինիայի մյուս երկրները:

Խալիֆն ապստամբությունը ճնշելու հրամանով 852թ. գարնանը հսկայական բանակով Հայաստան է ուղարկում նենգ ու դաժան թուրք զորապետ Բուղային: Նրան հրամայվել էր հայոց իշխաններին շղթայակապ Բաղդադ բերել և տիրանալ նրանց կալվածքներին: Բուղան մտնում է Տարոն, դաժան հաշվեհարդար տեսնում Բաղեշի, Խութի և Սասունի բնակչության հետ և ձերբակալում ապստամբության ղեկավարներին: Դրանից հետո Բուղան շարժվում է դեպի Վասպուրական: Սակայն վասպուրականցիները նախ՝ Աշոտ Արծրունու, ապա՝ նրա եղբայր Գուրգենի գլխավորությամբ համառորեն դիմադրում են: Վասպուրականցիները 852թ. Արյան լճի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթում են Բուղայի զորքին, որն ունեցավ 1800 զոհ: Արաբական բանակը փախչում է Վասպուրականից:

Բուղան 853թ. գարնանն արշավում և ավերում է Սյունիքը: Նա այնտեղից շարժվում է դեպի Արևելյան Վրաստան, սակայն պարտվում է տեղի լեռնականներից: Բուղային հերոսաբար դիմադրում են նաև Արցախի հայերը: Մասնավորապես՝ Քթիշ ամրոցի պաշտպանները Եսայի իշխանի գլխավորությամբ մեկ տարի շարունակ դիմակայում են Բուղայի զորքին: Վասպուրականցիներն իրենց հերթին Գուրգեն Արծրունու գլխավորությամբ ջախջախում ու վռնդում են արաբական զորաջոկատները: Բուղան հարկադրված ճանաչում է Արծրունիների իշխանությունը Վասպուրականում: Նա, այդպես էլ իր նպատակին չհասնելով, 855թ. Հայաստանից հետ է կանչվում:

850-855թթ. ապստամբությունը Հայաստանում հակաարաբական ամենահզոր ու երկարատև ելույթն էր: Այն լրջորեն խարխլեց արաբական տիրապետության հիմքերը: Հայաստանն ամրապնդեց իր ներքին ինքնուրույնությունը: Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Բագրատունիների գլխավորությամբ պետականության վերականգնման համար:

ՂԵՎՈՆԴ ՊԱՏՄԻՉԸ՝ ՇՈՒՇԱՆ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ԳԹԱՍՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«(Արաբների) մի փոքր մասը՝ մոտավորապես 300 մարդ, փախուստի դիմելով՝ ապավինեց տիկին Շուշանին: Սրանց իր զորքով հետապնդեց Սմբատ (Բագրատունին), կամենալով փախստականներին սրի անցկացնել: Նրան ընդառաջ ելավ տիկին Շուշանը և բազում աղերսանքով ու խնդրանքով փրկեց նրանց՝ մերկ, բոկոտն, հետիոտն և վիրավոր վիճակում, որոնց վերցնելով իր մոտ, վերքերը կապեց, առողջացրեց և հանդերձներ հագցրեց: Տվեց նաև գրասպ և առաքեց արաբների իշխանի մոտ»:

ՂԵՎՈՆԴ ՊԱՏՄԻՉԸ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այս ժամանակներում հույժ ծանրացավ հարկապահանջության լուծը մեր Հայոց աշխարհի վրա: Հայոց համայն երկիրը դրվեց անհանդուրժելի թշվառության մեջ: Երկրում վերջացավ արծաթի արդյունահանումը, և ամեն ոք, պակով ունեցած ամբողջ ինչքը, իր անձի փրկության գինը չէր գտնում: Չարաչար կտրտանքով, գեղարաններով, կախաղաններով ու դառն տանջանքով մարդկանց կեղեքում էին: Պահանջում էին հարկը վճարել արծաթով, այն էլ՝ ըստ ամեն մի գլխի, որի հետևանքով մարդիկ զրկվում էին ամենայն ունեցվածքից»:

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻՆ՝ ՅՈՒՍՈՒՖԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բայց ինքը՝ կարծեցյալ մարգպանը, փախավ ընկավ մեծ եկեղեցին... Եվ այն ժամանակ նա սարսափից դողահար՝ թաքնվեց գմբեթում: Մեկնազենները շրջապատեցին եկեղեցին, նրանցից ոմանք բարձրացան մինչև գմբեթի փորվածքը, և ինչ-որ մեկը աշտեղով հարվածեց (Հովսեփի) թիկունքի մեջտեղը և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով: Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ դեր խաղաց մահմեդական կրոնն արաբական ցեղերի միավորման գործում:
2. Ինչպես էր կոչվում արաբական պետությունը:
3. Արաբները երբ վերջնականապես նվաճեցին Հայաստանը:

4. Ինչո՞վ պատասխանեց հայ ժողովուրդն արաբական տիրապետության հաստատմանը:
5. Արաբական տիրապետության օրոք հայկական ո՞ր նախարարական տներն ուժեղացան:
6. Ինչո՞ւ Մամիկոնյանները հեռացան պատմական ասպարեզից, իսկ Բագրատունիները հզորացան:
7. Ո՞րն է VIII-IX դդ. հակաարաբական ապստամբությունների պատմական նշանակությունը:
8. Աղյուսակի տեսքով ներկայացրեք հակաարաբական ապստամբությունների կարևոր իրադարձությունները, տարեթվերը և ղեկավարներին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Փորձեք վերլուծել 652թ. հայ-արաբական պայմանագիրը և դրան նախորդած իրադարձությունները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Մահմեդականություն (իսլամ) • Արաբական խալիֆայություն • Թեոդորոս Ռշտունի • Ներսես Գ Տայեցի • Մուավիա • Պրոկոպիոս • Արծափ • Դերբենդ • Սմբատ Բագրատունի • Վարդանակերտի ճակատամարտ • Շուշան իշխանուհի • ոստիկան • Գրիգոր Մամիկոնյան • Աշոտ Բագրատունի • Արտավազդ Մամիկոնյան • Կումայրի • Մուշեղ Մամիկոնյան • Բագավան • Ամիր • Արճեշ • Արձնի • Աշոտ Մսակեր • Շապուհ Բագրատունի • Բագարատ Բագրատունի • Աբուսեթ • Յուսուֆ • Աշոտ Արծրունի • Մուշ • Խութ • Սասուն • Խութեցի Հովնան • Բուղա • Բաղեշ • Գուրգեն Արծրունի • Արյան լիճ • Եսայի իշխան • Քթիշ ամրոց

4-րդ թեմայի ամփոփում

1. Մեծ Հայքի թագավորության անկումից հետո նրա արևմտյան ինքնավար մասը, Փոքր Հայքի հետ միասին, գտնվում էր բյուզանդական տիրապետության ներքո, իսկ արևելյան մասը վերածվեց Սասանյան Պարսկաստանի կազմում լայն ինքնավարություն ունեցող մարզպանության:
2. Հայկական տարրը քաղաքականապես և տնտեսապես թուլացնելու համար բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ը կայսրությանը պատկանող հայկական հողերը ենթարկեց նոր վարչական բաժանման՝ ամենուրեք մտցնելով բյուզանդական կարգեր: Կամենալով փոշիացնել հայկական նախարարական տիրույթները՝ կայսրը տղամարդկանց հետ հավասար

ժառանգելու իրավունքներ տվեց նաև կանանց: Նպատակային ձևով երկրից դուրս էին բերվում հայկական զինված ուժերը՝ հայերին զրկելով կայսերական քաղաքականությանը դիմագրավելու հնարավորությունից: Դրան ի պատասխան՝ հայերը բազմիցս ապստամբեցին բյուզանդական տիրապետության դեմ:

3. Պարսից Խոսրով I թագավորի նույնանման քաղաքականության հետևանքով Արևելյան Հայաստանը ևս ենթարկվեց վարչական վերածևումների: Սաստկացավ հարկային ճնշումը: Պարսկական տիրապետության ծանրացումն ուժեղացրեց հայերի դժգոհությունը, որոնք սպարապետ Վարդան Մամիկոնյանի (Կրտսեր Վարդան) գլխավորությամբ ապստամբեցին պարսիկների դեմ: Նրանք փորձեցին Բյուզանդիայի օգնությամբ ազատագրվել պարսկական տիրապետությունից: Պարսկա-բյուզանդական հակամարտության ուժեղացումը վերաճեց մի նոր արյունալի պատերազմի, որն ավարտվեց 591թ. Հայաստանի բաժանումով:
4. Դեռևս VII դարի առաջին տասնամյակներին վերսկսված պարսկա-բյուզանդական երկարատև պատերազմները խիստ թուլացրին թե՛ Բյուզանդիան և թե՛ Պարսկաստանը: Երկու տերություններն էլ արյունաքամ եղան և, ի վերջո, ի վիճակի չեղան դիմադրելու քաղաքական ասպարեզ դուրս եկած նոր հզոր ուժին՝ Արաբական խալիֆայությանը:
5. VII դ. սկզբներին արաբական ցեղերը, մահմեդականության դրոշի ներքո միավորվելով, ստեղծեցին հզոր պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը շուտով ձեռնամուխ եղավ նվաճողական պատերազմների: Սասանյան Պարսկաստանն ու Բյուզանդական կայսրությունը չկարողացան դիմադրել խալիֆայությանը: Նրանցից առաջինն իբրև պետություն դադարեց գոյություն ունենալուց, իսկ երկրորդը բազմաթիվ տարածքներ կորցրեց: 640թ. արաբներն առաջին անգամ ներխուժեցին Հայաստան: Հայերը ստիպված էին արաբների հետ 652թ. Թեոդորոս Ռշտունու կնքած պայմանագրով ճանաչել նրանց գերիշխանությունը:
6. Չնայած արաբները խոստացել էին Հայաստան արաբական զորք չմտցնել, բայց 701թ. գրավեցին երկիրը: Խալիֆայությունը հենց սկզբից վարեց հայ նախարարական տների վերացման, կրոնական անհանդուրժողականության և երկիրը տնտեսապես կեղեքելու քաղաքականություն: Դրան ազատասեր հայ ժողովուրդը պատասխանեց հզոր ապստամբություններով: Հատկապես հուժկու էին 774-775թթ. և 850-855թթ. ապստամբությունները: Դրանք սասանեցին Հայաստանում արաբական տիրապետության հիմքերը և հայոց պետականության վերականգնման ուղի հարթեցին:

ԹԵՄԱ 5

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ V–IX ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ԴՊՐՈՑԸ



Սբ Մեսրոպ Մաշտոց

Կորցնելով պետական անկախությունը՝ հայ ժողովուրդը զրկվեց այն կարևոր լծակից, որով պաշտպանվում էր ռազմատենչ հարևաններից: Մեր ժողովրդի համար այդ օրհասական պահին հայ մտավոր գործիչները հուժկու շարժում սկսեցին՝ ապահովելու հայության մշակութային անկախությունը: Ստեղծվեց ազգապահպանության մի նոր ու հզոր զենք՝ ի դեմս հայոց գրերի: Դրանք հետագա փորձություններով լի դարերի ընթացքում հայ ժողովրդին հարատևություն ու կենսունակություն պարգևեցին: Հայ ժողովրդի հանճարեղ զավակ ***Մեսրոպ Մաշտոցի*** ձեռքով ստեղծվեցին հայոց գրերը, որոնցով մենք մինչև օրս գրում ու կարդում ենք:

Մինչև Մեսրոպ Մաշտոցը հայերն ստեղծել էին հարուստ ու ճոխ բանահյուսություն, բայց արքունի պաշտոնական գրագրության մեջ օգտագործել են հունարենը, արամեերենը և պարսկերենը: Անշուշտ, գոյություն են ունեցել նաև նախամեսրոպյան գիր և գրականություն, ինչի ապացույցն է հեթանոսական աստվածների պանթեոնում գրի ու գրականության հովանավոր աստծո՝ ***Տիրի*** գոյությունը: Սակայն դրանք, կենտրոնացած լինելով մեհյաններում և սահմանափակ կիրառվելով, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու շրջանում հեթանոսական մյուս արժեքների հետ ոչնչացվեցին:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 361թ. Տարոն գավառի ***Հացեկաց*** գյուղում: Նա երիտասարդ հասակում ստանում է հունական փայլուն կրթություն և, գալով Վաղարշապատ, ծառայության անցնում հայոց արքունիքի դիվանատանը: Նախկին զինվորականը դառնում է ժամանակի ամենաուսյալ մարդկանցից մեկը՝ ինքնակրթությամբ հարստացնելով իր գիտելիքները: Որոշ ժամանակ անց նա հոգևորական է ձեռնադրվում և իր աշակերտների հետ գնում քարոզելու Գողթն գավառում (Նախճավան գավառի հարևանությամբ): Շուտով նա համոզվում է, որ, չնայած շուրջ 100-ամյա պաշտոնական կրոն լինելուն, քրիստոնեությունն անհասկանալի է ժողովրդական զանգվածներին: Ավելին՝ նրանց շրջանում շարունակում էր ուժեղ դիրքեր պահպանել հեթանոսու-

թյունը: Բանավոր խոսքը բավարար չէր: Անհրաժեշտ էր հայերեն թարգմանել Աստվածաշունչը և քրիստոնեական գրականությունը՝ դրանով իսկ քրիստոնեությունը հասու դարձնելով ամբողջ ժողովրդին: Իսկ դա հնարավոր էր միայն հայոց գրերի արարման դեպքում: Այբուբենի ստեղծումը նաև անհրաժեշտ էր հայոց բազմադարյան բանահյուսության գոհարները և այլ ստեղծագործություններ գրի առնելու համար:

Քաջ գիտակցելով, որ գրերի ստեղծման համար անհրաժեշտ է Հայոց կաթողիկոսի և թագավորի աջակցությունը, Մաշտոցը վերադառնում է Վաղարշապատ: Պարզվում է, որ կաթողիկոս ***Սահակ Պարթևը*** նույնպես մտածում է հայոց գրեր ստեղծելու մասին: Վռամշապուհ արքայի օգնությամբ նրանք բերել են տալիս այսպես կոչված դանիելյան հայկական գրերը և շուտով համոզվում, որ դրանք ամբողջությամբ չեն համապատասխանում հայերենի հնչյունական համակարգին: Հայոց գրերը ստեղծելու նպատակով Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ ճանապարհ է ընկնում դեպի Ասորիքի ***Ամիդ, Եդեսիա*** և ***Սամոսատ*** քաղաքներ: Նա ուսումնասիրում է օտարալեզու մատյաններ, խորհրդակցում ասորի ու հույն գիտունների հետ և 405թ. Եդեսիա քաղաքում ստեղծում հայոց գրերը: Այբուբենի 36 տառերը լիովին արտահայտում էին հայերենի հնչյունական համակարգը: Այբուբենն այնքան կատարյալ էր ստեղծված, որ գործնականում առանց փոփոխության օգտագործվում է մինչև այսօր: Դեռևս Ասորիքում Մաշտոցն ու նրա աշակերտները սկսում են թարգմանել Աստվածաշնչի որոշ հատվածներ, ապա վերադառնում են հայրենիք:

Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը Օշականի եկեղեցում

Վաղարշապատում Մեսրոպ Մաշտոցին և նրա աշակերտներին ցույց տրվեց փայլուն ընդունելություն: Հայոց մեծ լուսավորչին ընդառաջ գնաց Վռամշապուհ թագավորը՝ հայոց ավագանու և ժողովրդի բազմության ուղեկցությամբ: Հանդիպումը տեղի ունեցավ Ռահ (Երասխ) գետի ափին:

Բացվեցին առաջին դպրոցները: Մանուկներին սկսեցին սովորեցնել նորաստեղծ այբուբենով: Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը հիմք դրեցին



Հայոց ոսկեձույլ գրերը

հայոց ազգային դպրոցին: Հայագիր առաջին դպրոցներից մեկը բացվեց նաև Հայոց Արևելից կողմերում՝ Ամարասի վանքում:

Մեսրոպ Մաշտոցը մեծ գործունեություն ծավալեց նաև վրաց և աղվանից գրերը ստեղծելու ասպարեզում: Ուղևորվելով Վիրք և Աղվանք՝ նա, տեղի գիտունների հետ համագործակցելով, ստեղծեց վրաց ու աղվանից գրերը:

Մեսրոպ Մաշտոցը ճշմարիտ հայրենասեր էր, իսկ նրա կյանքը՝ իսկական սխրագործություն: Երկարատև ու բեղուն գործունեությունից հետո նա մահացավ 440թ. փետրվարի 17-ին և թաղվեց Ամատունիների տոհմական կալվածք Օշական գյուղում: Նրա գերեզմանի վրա սկզբում մատուռ, այնուհետև եկեղեցի կառուցվեցին, որոնք դարձան ժողովրդի ուխտատեղիներ: Դրանից մի փոքր առաջ՝ 439թ., իր մահկանացուն էր կնքել Մաշտոցի հովանավոր Սահակ Պարթևը:

Սբ Մեսրոպ Մաշտոց

Հայոց եկեղեցին Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին այդ հիրավի դարակազմիկ մեծագործության համար դասեց իր սրբերի շարքը:

Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումը մեծապես խթանեց հայոց մշակույթի զարգացումը: Ամենուրեք բացվեցին դպրոցներ՝ մանուկներին հայագիր այբուբենով ուսուցանելու համար: Նախկին դպրոցներում, որտեղ երեխաներին ուսուցանում էին ասորերենով կամ հունարենով, ուսուցումն սկսեց տարվել հայերենով և նոր գրերով: Ի տարբերություն հեթանոսության շրջանի, երբ մեհենագրերի կիրառությունը կենտրոնացած էր միայն սրբատեղիներում, քրիստոնեությունը ժողովրդական լայն զանգվածներին մատչելի դարձրեց կրթությունը: Մաշտոցը շրջում էր գավառներում ու դպրոցներ բացում: Սահակ Պարթև կաթողիկոսը մնում էր Վաղարշապատի արքունիքում՝ նախարարներին և նրանց զավակներին ուսուցանելու հայերեն գրերը: Մեսրոպ Մաշտոցը դպրոցներ բացեց ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև բյուզանդական տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում: Մաշտոցի հիմնած դպրոցները կրթեցին մեծ թվով մանուկների՝ առաջ բերելով մշակութային հզոր շարժում:



Գրասեղան և գրենական պիտույքներ

Հայ դպրոցը հետագայում ևս զարգացում ապրեց: Դեռևս Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի օրոք մեծ թվով հայ երիտասարդներ ուղարկվում էին սովորելու հունական և ասորական կրթական կենտրոններում: Վերադառնալուց հետո նրանք

զբաղվում էին ուսուցչությամբ: Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև VI–VII դարերում: Հունական փայլուն կրթություն ստացած հայ գործիչների շնորհիվ մեծապես հղկվեց հայերենը, ստեղծվեց հունաբան դպրոցը: Էլ ավելի ընդլայնվեց դպրոցական ցանցը: Դպրոցներ բացվեցին գործնականում բոլոր գավառներում:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց գրերի ստեղծումը զարկ տվեց թարգմանական գրականության հանդես գալուն: Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևն իրենց աշակերտների հետ ձեռնամուխ եղան Աստվածաշնչի հիրավի փայլուն թարգմանությանը: Պատահական չէ, որ ուսումնասիրողներն այն անվանում են «Թագուհի թարգմանութեանց»: Այնուհետև նրանք սկսեցին հայերեն թարգմանել Հին աշխարհի նշանավոր շատ հեղինակների գործեր:

Հին հայերենը՝ ***գրաբարը***, որն արդեն մեծապես մշակվել էր հեթանոսական մեհյաններում, հենց սկզբից դրսևորեց գրական լեզվի ճկունությունն ու գեղեցկությունը: Գրաբարը, որ խոսակցական լեզու էր, էլ ավելի մշակվեց, հղկվեց և հետագայում իրավամբ վաստակեց ***ոսկեդարյան լեզու*** անունը: Թարգմանական գրականության ըստ ամենայնի զարգացումը զարկ տվեց նաև հայոց լեզվով ազգային պատմագրության ու գրականության զարգացմանը: Անկախ պետականությունը կորցնելուց հետո այն դարձավ հայությանը միավորող հզոր միջոց: V դարը դարձավ հայ մշակույթի զարգացման ***Ոսկեդարը:***

Մեծ զարգացում է ապրում վարքագրությունը: Դրա թեման քրիստոնեական սրբերի սխրագործություններն են, կրած տանջանքները, հալածանքները և նահատակությունները: Սրբերի կենսագրությունները հայտնի են ***վարք*** անունով: Այդպիսի մի գեղեցիկ պատմություն է Վարդան Մամիկոնյանի դուստր ***Շուշանիկի վարքը***: Շուշանիկը Գուգարաց բդեշխ Վազգենի կինն էր: Զրադաշտականություն ընդունած նրա ամուսինը կնոջից պահանջում էր հետևել իրեն և ընդունել այդ կրոնը: Շուշանիկին չեն ընկճում ո՛չ երկաթե կապանքներն ու բանտը, ո՛չ տանջանքները, և նա, չուրանալով քրիստոնեությունը, սպանվում է ամուսնու կողմից: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո լայն տարածվում են հոգևոր երգերը՝ ***շարականները***:

Միջնադարյան գրիչ

VII դ. պատմիչ ***Սեբեոսը*** գեղարվեստական մեծ վարպետությամբ է ներկայացնում կրկեսում ***Սմբատ Բագրատունու*** մասնակցությունը գազանամարտին, երբ նա իրար հետևից հաղթում է արջին, ցուլին ու առյուծին և հանդիսատեսների պահանջով փրկվում մահապատժից:

VII դարը հայտնի է երկու նշանավոր բանաստեղծներով: Նրանցից մեկը Կոմիտաս կաթողիկոսն է: Նա գրել է Սուրբ Հռիփսիմեին նվիրված մի օրհներգ (հիմն): Մյուսը, որ հայտնի է ***Դավթակ Քերթող*** անունով (քերթող՝ նշանակում է բանաստեղծ), երկար տարիներ ապրել է ***Հայոց Արևելից*** կողմերի իշխան ***Ջվանշիրի*** արքունիքում և նրա ողբերգական մահվան առիթով գրել մի ամբողջ պոեմ:

V դ. սկզբնավորվում և ծաղկում է ապրում հայ պատմագրությունը: Հայոց լեզվով գրած V դ. առաջին մատենագիրը թերևս Կորյունն է, որը տալիս է ***Մեսրոպ Մաշտոցի*** վարքը և հայոց գրերի ստեղծման պատմությունը: V դ. մեկ այլ հեղինակ՝ ***Եղիշեն***, նկարագրել է պարսկական տիրապետության դեմ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ բռնկված հուժկու ժողովրդական ապստամբությունը: Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը և Ղազար Փարպեցին, մեկը մյուսին շարունակելով, մեզ են հասցրել III-V դդ. հայոց պատմության մանրամասները:

Ագաթանգեղոսն իր պատմությունը նվիրել է ***հայոց դարձին***, այսինքն՝ Հայաստանում քրիստոնեության տարածմանն ու հաստատմանը: Նա պատմական տեղեկություններին զուգահեռ ներկայացնում է քրիստոնյա սրբերի կյանքը: Նրա պատմությունը հարուստ նյութ է պարունակում հայոց հեթանոսական կրոնի վերաբերյալ: Ագաթանգեղոսի պատմությունը շարունակել է ***Փավստոս Բուզանդը***՝ գրի առնելով IV դ. 30-ական թվականներից մինչև 387թ. ընկած պատմությունը: Հեղինակը փառաբանել է հայ ժողովրդի ազատասիրական ոգին, նկարագրել նրա կռիվները պարսկական զորքերի դեմ, Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջամտությունները Հայոց թագավորության ներքին գործերին: Նա իր պատմությունն ավարտում է Հայոց թագավորության՝ Հռոմի և Պարսկաստանի միջև 387թ. բաժանմամբ: Խոսելով այդ մասին՝ պատմիչը սրտի մորմոքով արձանագրում է. ***«Այն ժամանակ և այնուհետև Հայոց թագավորությունը բաժանվեց, ցրվեց, նվազեց, իր նախկին մեծությունից ընկավ»:***

Մովսես Խորենացի

Ղազար Փարպեցին մեզ է ներկայացնում IV դ. վերջի և V դ. պատմությունը: Լինելով ճշմարտապատում հեղինակ՝ նա առաջնորդվել է այն սկզբունքով, որ ***«պետք է ստույգը գրել, չեղածը չավելացնել, եղածները չպակասեցնել»:*** Պատմիչն արժեքավոր և արժանահավատ տեղեկություններ է պահպանել Վարդանանց և Վահանանց ապստամբությունների մասին:

Մովսես Խորենացին առանձնանում է V դ. հայ պատմագիրների շարքում: Սահակ Բագրատունու մեկենասությամբ գրված նրա «Պատմություն Հայոց»-ը մի զարմանահրաշ երկասիրություն է: Այն

ընդգրկում է հայոց պատմությունը՝ սկսած մեր ժողովրդի ծագումից մինչև V դ. կեսերը: Պատմահայրն ի մի է բերել և սերունդներին թողել հայ ժողովրդի առաջին ամբողջական պատմությունը, որը նա բաժանել է երեք գրքի: Առաջին գրքում պատմվում է Հայկ Նահապետի և նրան հաջորդած սերունդների կատարած գործերի մասին: Երկրորդ գրքում հանդես են գալիս հայոց մեծ բարեփոխիչներ Վաղարշակ և Արտաշես թագավորները, տրվում է մի շարք այլ թագավորների գործունեությունը: Երրորդ գիրքը, որ նվիրված է Հայաստանի IV–V դդ. պատմությանը, ավարտվում է ***«Ողբ»***-ով: Այնտեղ հեղինակը սգում է Հայոց թագավորության անկումը և քննադատում հայ հասարակության բացասական կողմերը: Մովսես Խորենացին ճշգրիտ ժամանակագրության կողմնակից է և այդ կապակցությամբ գրում է. ***«Չկա հավատի պատմություն՝ առանց ժամանակագրության»:***

Պատմահայրն օգտվել է ոչ միայն նախորդ հայ հեղինակների գործերից, այլև օտար հեղինակների երկասիրություններից, ինչպես նաև Աստվածաշնչից: Նրա երկը մեզ է հասցրել ժողովրդական բանահյուսության շատ նմուշներ՝ Հայկի և Բելի պատմությունը, Արայի և Շամիրամի ավանդազրույցը, Վահագնի ծննդյան երգը, Արտաշես արքային ձոնված երգերը և այլն: Ի տարբերություն իրեն նախորդած կամ հաջորդած շատ հեղինակների՝ Խորենացին աշխատել է իր օգտագործած նյութերի պատմական մասերը զատել առասպելականից:

Պատմահայրը հայ ժողովրդի պատմությունը շարադրել է հարևան ժողովուրդների պատմության ընդհանուր հենքի վրա, և այդ պատճառով նրա երկը հարուստ նյութ է պարունակում նաև Վիրքի, Աղվանքի, Պարսկաստանի, Ասորիքի և անգամ առավել հեռավոր աշխարհների մասին՝ Իռլանդիայից մինչև Չինաստան: Դա հատկապես արտացոլվել է նրա հեղինակած «Աշխարհացոյց»-ում:

Մովսես Խորենացին հակիրճ և հստակ բնութագրել է հայ ժողովրդին. ***«Թեպետ մենք փոքր ածու*** (փոքրաքանակ ժողովուրդ) ***ենք և թվով քիչ, և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...»***: Ուշագրավ է նաև Պատմահոր՝ հայ ժողովրդին տված գնահատականը, երբ դիմում է Սահակ Բագրատունուն. ***«...դու պատկանում ես նախնական և քաջ ազգի, արդյունավոր՝ ոչ միայն խոսքի և պիտանի՝ խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով...»:***

Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ը ամբողջ միջնադարում ծառայել է որպես դասագիրք, որով հայրենասիրական ոգով դաստիարակվել են տասնյակ սերունդներ: Նա անվանվել է Պատմահայր, Քերթողահայր: Պատմահոր անունը հայտնի է ամբողջ աշխարհին, իսկ նրա գործը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով:

VI–VII դդ. իրադարձությունների մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում VII դ. հեղինակ ***Սեբեոսի*** «Պատմություն»-ը: Հատկապես կա-

ռևոր են Սեբեոսի հաղորդած տեղեկությունները շրջակա երկրներում կատարված իրադարձությունների և արաբական նվաճումների սկզբնական փուլի մասին:

Հայոց Արևելից կողմերի՝ Արցախ և Ուտիք աշխարհների, ինչպես նաև Աղվանքի պատմության տարբեր հարցեր մանրամասն շարադրել է VII դ. պատմիչ ***Մովսես Կաղանկատվացին*** իր «Աղվանից աշխարհի պատմություն» աշխատության մեջ:

VIII դ. հայ նշանավոր պատմիչ է ***Ղևոնդը***: Նրա երկը, որը կրում է «Պատմություն» խորագիրը, նվիրված է արաբական տիրապետության դեմ VIII դ. հայ ժողովրդի մղած հերոսական պայքարին:

3. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

V դ. սկսած մեծ հաջողությունների է հասնում հայ փիլիսոփայական միտքը: V դ. հեղինակ ***Եզնիկ Կողբացին***, որ Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից էր, նշանավոր իմաստասեր էր: Սկզբում նա իր ուսուցչի հետ զբաղվել է թարգմանական գործունեությամբ: Ավելի ուշ նա գրել է «Եղծ աղանդոց» («Աղանդների հերքումը») աշխատությունը, որտեղ հիմնավոր հերքում է հեթանոսությունը, պարսից զրադաշտական կրոնը և պաշտպանում քրիստոնեական վարդապետությունը: Զրադաշտական կրոնի հերքումն ուղղված էր պարսից արքունիքի՝ հայերին ձուլելու փորձերի դեմ: Բարձրացնելով և մեծարելով քրիստոնեությունը՝ Եզնիկ Կողբացին անուղղակիորեն պաշտպանում էր հայ ժողովրդի ազգային-մշակութային ինքնությունը:

Դավիթ Անհաղթ

Վաղ միջնադարի ամենանշանավոր փիլիսոփան ***Դավիթ Անհաղթն*** է, որն իր ուսումն ստացել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Նա ուսումնասիրել է հույն իմաստասերներ ***Պլատոնի*** ու ***Արիստոտելի*** գործերը և իր ***«Սահմանք իմաստասիրութեան»*** («Իմաստասիրության սահմանումը») նշանավոր երկում մեկնել ու զարգացրել է հույն խոշոր իմաստասերների գաղափարները՝ Հայաստանում տարածելով նրանց ուսմունքը: Բանավեճերի մեջ եղել է անհաղթելի, որի համար էլ ստացել է ***Անհաղթ*** մականունը: Նա մեծ հռչակ էր վայելում ոչ միայն հայ, այլև հույն և հռոմեացի իմաստասերների շրջանում:

Բժշկությունը: Վաղ միջնադարի հայ մատենագիրների երկերում բժշկության և բժիշկների մասին պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ: Դրանցում խոսվում է զարկերակի միջոցով հիվանդությունները ախտորոշելու

մասին, տեղեկություններ կան մարդու զգայարանների և ներքին օրգանների կառուցվածքի ու դերի մասին: Հետևելով *Հիպոկրատին*՝ Եղիշեն գրում էր, թե բժիշկը հարուստի և աղքատի չպիտի տարբերի. ***«Բժշկի համար կարևոր չէ,***– գրել է նա,– ***թե հիվանդի անկողինը ոսկեղեն է, թե հնամաշ, նա զննում է հիվանդի ամբողջ մարմինը, թե արդյոք տաքություն չունի՞, կամ թե սիրտը հանդարտ է տրոփում, կամ լյարդը կակո՞ւղ է արդյոք, կամ երակների զարկերը հարմա՞ր են: Եվ ըստ այնմ դեղեր է տալիս՝ հիվանդներին առողջություն պարգևելով»:***

Հայ բժշկագիտությունը մեծապես հարստացավ հույն և հռոմեացի, ինչպես նաև այլ հեղինակների բժշկագիտական գործերի թարգմանությամբ, որի շնորհիվ անտիկ բժշկության գիտելիքները տարածվեցին Հայաստանում:

Աշխարհագրությունը և տիեզերագիտությունը: V դ. վերջերին Պատմահոր կողմից ստեղծվեց ***«Աշխարհացոյց»***-ը, որ գրված է անտիկ աշխարհագրության ավանդույթներով, ***Պտղոմեոսի*** և ***Պապոս Ալեքսանդրացու*** աշխատությունների օգտագործումով և մեծաքանակ ինքնուրույն նյութի մատուցմամբ: «Աշխարհացոյց»-ում նկարագրված են Ատլանտյան և Հնդկական օվկիանոսները, Միջերկրական, Սև և Կասպից ծովերը, Եվրոպայի, Ասիայի և Լիբիայի (Հյուսիսային Աֆրիկայի) երկրները: Հատկապես արժեքավոր են Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Պարսկաստանի և Ասիական Սարմատիայի նկարագրությունները:

Բնական գիտությունների ասպարեզում հայ ամենանշանավոր դեմքն ***Անանիա Շիրակացին*** է, որը ծնվել է VII դ. սկզբներին Շիրակ գավառում: Նախնական կրթությունն ստանալով տեղում՝ նա ութ տարի ուսանել է ***Տրապիզոնում***՝ հույն նշանավոր գիտնական ***Տյուքիկոսի*** մոտ: Մեծ տիեզերագետ և մաթեմատիկոս Անանիա Շիրակացին, հետևելով անտիկ հեղինակներին, գրել է, որ ***Երկիրը ձվի նման է, ինչպես ձվի կլոր դեղնուցը մեջտեղում է, սպիտակուցը՝ նրա շուրջը, իսկ կեղևը շրջապատում է չորս կողմից:*** Անանիա Շիրակացին գիտեր, որ Արեգակի խավարման պատճառը նրան պատնեշող Լուսինն է: Հայ տիեզերագետի կարծիքով՝ Ծիր Կաթինը ***«կուտակված թույլ և ուժեղ աստղերի բազմություն է»:*** Անանիա Շիրակացին նաև լրացրել ու խմբագրել է «Աշխարհացոյց»-ը:



Անանիա Շիրակացի (նկ. Հր. Ռուխկյանի)

Տիեզերագիտության և մաթեմատիկայի բնագավառներում Անանիա Շիրակացին հետևել է անտիկ գիտության ավանդույթներին: Այդ դարաշրջանում, երբ Եվրոպայում ամենուրեք մոռացվում էր անտիկ գիտական ժառանգությունը, Անանիա Շիրակացին կարևոր դեր խաղաց այն պահպանելու և գալիք սերունդներին հաղորդելու գործում:

4. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Վաղմիջնադարյան Հայաստանում բարձր զարգացման է հասել շինարարական արվեստը: Կառուցվել են ամրակուռ ***ամրոցներ, ապարանքներ, եկեղեցիներ, քարավանատներ, հյուրանոցներ, կամուրջներ, բնակելի տներ*** և այլն: Որպես շինանյութ հիմնականում օգտագործվել է բազմագույն ***տուֆ*** քարը, որով մեծապես հարուստ է մեր հայրենիքը: Աշխարհիկ շինությունները, որպես կանոն, զոհ են գնացել օտարների արշավանքներին: Ուստի վաղ միջնադարի մեծաքանակ շինություններից մեզ են հասել մեծ մասամբ եկեղեցիները, որոնք հատուկ խնամքով էին կառուցվում: Բացի դրանից՝ օտարները, վախենալով ***«հայերի ապրծու»*** վրեժխնդրությունից, դրանք չէին ավերում:



Հռիփսիմեի տաճարը Էջմիածնում (618թ.)

Հայ ճարտարապետության գլուխգործոցներից է ***Հռիփսիմեի*** տաճարը ***Վաղարշապատում*** (Էջմիածնում), որը 618թ. կառուցել է ***Կոմիտաս*** կաթողիկոսը: Տաճարը լավ պահպանվել է մինչև մեր օրերը և դիտողին զարմացնում է իր գեղեցկությամբ ու ներդաշնակությամբ, իսկ մասնագետներին՝ ճարտարապետական լուծումներով:

VII դ. կեսերին կառուցվում է ***Զվարթնոց*** հրաշագեղ տաճարը Երևանից Էջմիածին տանող մայրուղուց ոչ շատ հեռու: Այն կառուցել է ***Ներսես Շինարար*** կաթողիկոսը: Ունեցել է 50 մ բարձրություն և կանգուն է մնացել շուրջ երեք դար: Կործանվել է երկրաշարժից:

Աշխարհիկ կառույցներից պահպանվել են իշխանական դղյակների, ամրոցների, դրանց պարիսպների մնացորդներ: Այդ շրջանում հայոց ճարտարապետությանը հատուկ էին պարզությունը և վեհությունը:

Քանդակագործությունը և նկարչությունը: Վաղ միջնադարում զարգացավ նաև քանդակագործությունը՝ պայմանավորված ճարտարապետության և շինարարության բուռն վերելքով: Այդ շրջանից հայտնի են մի շարք բարձրաքանդակներ և զարդերի փորագրություններ, որոնցով պատում էին եկեղեցի-

ների, դամբարանների և պալատների պատերը: Իր զարդաքանդակներով հատկապես աչքի է ընկնում Զվարթնոց տաճարը, որի պատերին նռներ և խաղողի ողկույզներ են պատկերված: Զվարթնոցի սյուներին քանդակված են թևատարած հզոր արծիվներ: Պահպանվել են նաև շինարարների մի քանի պատկերներ՝ աշխատանքային գործիքները ձեռքներին: Զվարթնոցի պատին Ներսես կաթողիկոսը թողել է հունարեն արձանագրություն՝ ***«Ներսեսն է կառուցել, հիշեցեք»***:

Վաղ միջնադարում եկեղեցիների պատերը ներսից երբեմն զարդարում էին որմնանկարներով: Դրանցում հաճախ պատկերում էին Քրիստոսի կերպարանքը՝ եզերված նռների, խաղողի ողկույզների և այլ զարդերի պատկերներով:

Նկարչության մի տարատեսակ է ***խճանկարը (մոզաիկան)***, որով սովորաբար զարդարում էին եկեղեցիների, պալատների և բաղնիքների հատակը: Խճանկարները ստեղծվում էին բազմագույն և բազմերանգ քարերից: Հայկական լավագույն խճանկարները պահպանվել են Երուսաղեմի հայկական եկեղեցիներում: Դրանցից մեկն ունի շուրջ 30 քառ. մ մակերես և եզերված է թռչունների, ձկների ու խաղողի ողկույզների զարդանախշերով:



Խճանկար հայերեն արձանագրությամբ (Երուսաղեմ, V-VI դդ.)

Մանրանկարչությունը: Հայ գրերի գյուտից հետո արդեն ծնունդ է առնում մագաղաթյա ձեռագրերը մանրանկարներով զարդարելու արվեստը: Ցավոք, այդ շրջանից մեզ է հասել ընդամենը չորս մանրանկար, որոնք բոլորն էլ կրոնական բովանդակություն ունեն: Հայ մանրանկարչությունը բուռն ծաղկեց զարգացած միջնադարում:

Թատրոնը և երաժշտությունը: Հայ միջնադարյան թատրոնը ժառանգեց Հայաստանի հելլենիստական թատրոնի ավանդույթները: Վաղ միջնադարում թատերական ներկայացումները տրվել են հայերենով և վայելել են մեծ ժողովրդականություն: Թատերական ներկայացումները տեղի են ունեցել քաղաքային հրապարակներում կամ գյուղական բնակավայրերի կենտրոններում՝ շրջիկ թատերախմբերի կողմից: Դրանք սովորաբար կազմված էին լինում պարուհիներից ու լարախաղացներից: Նրանց հաճախ հրավիրում էին իշխանական խնջույքներին՝ զվարճացնելու նախարարին, նրա ընտանիքի անդամներին և հյուրերին: Դերասանները ***փանդիռների*** (հայկական լարային նվագարան) նվագակցությամբ երգում ու պարում էին հարսանիքներին, իշխանական խնջույքներին և երգում հուղարկավորության ժամանակ: Բուռն

տարածում ունեին ժողովրդական գուսանական երգերը: Մեծ զարգացում ապրեց հոգևոր երաժշտությունը: Երգում էին Մեսրոպ Մաշտոցի, Կոմիտաս կաթողիկոսի և ուրիշների հեղինակած շարականները:

Միջնադարյան երաժիշտ

Վաղ միջնադարի հայ մշակույթն ամփոփեց հայոց հին մշակույթի զարգացումը և հայ մշակույթի մեջ ներմուծեց իսկական ազգային, ժողովրդական ոգի: Հայ մշակույթի բազմաթիվ երևելի հուշարձաններ ձեռք են բերել համաշխարհային նշանակություն:

ԿՈՐՅՈՒՆԸ՝ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՄԱՍԻՆ

«Մաշտոց էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու: Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին: Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, (ապա) եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ումն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ: Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին: Եվ այնտեղ հենց ջանալով՝ ուշադրությամբ հետևում էր ասպվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ ասպվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում: ...Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան (այդ) բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և աքանչելի ծնունդներ – հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով-կապերով...»:

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ ԽՐԱՏՆԵՐԻՑ

«Ով այուն է դարձել և ամբողջ շինությունն իր վրա է հենել, եթե խորտակվի, ամբողջը կկործանի, ցած կթափի: Այսպես էլ առաջնորդը, եթե Աստծու կամքով չշարժվի, ամբողջ միաբանությունը սատանային կմատնի և առաջնորդելու փոխարեն կորստի պատճառ կլինի: Այդպիսի առաջնորդությունը մեծ մոլորություն է ու անբուժելի չարիք, որովհետև մարդիկ ավելի շատ օրինակին են հետևում, քան ճշմարտությանը»:

«Մարմինդ նեղիր գիտությամբ ու Գրքի վկայությամբ»:

«Այս կյանքը պատերազմ է»:

«Մեղրը քաղցր է, բայց հիվանդոտ մարմնին վնաս է տալիս. խրատն ու կշտամբանքն օգտակար են, բայց անօգուտ են նրա համար, ով դեմքը դեպի հակառակ կողմն է ուղղել»:

«Մերն ու երկյուղը քեզ բնավորություն դարձրու, որ խաբեությամբ չտանջվես»:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ՝ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

«Եթե որևէ մեկը կամենա Երկրի դիրքը պատկերացնելու համար... ակնառու օրինակ ստանալ, ինձ թվում է՝ հարմարավոր օրինակը ձուն է. ինչպես որ նրա դեղնուցը գնդաձև գտնվում է մեջտեղում, սպիտակուցը նրա շուրջն է, իսկ կճեպը շրջապատում է չորս կողմից, ճիշտ այդպես էլ Երկիրը գտնվում է մեջտեղում, օդը՝ նրա շուրջը, իսկ երկինքը շրջապատում է չորս կողմից»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայոց գրերը:
2. Հայոց գրերի գյուտն ինչ նշանակություն ունեցավ հայ մշակույթի հետագա զարգացման համար:
3. Ինչո՞ւ է Աստվածաշունչը կոչվում «Թագուհի թարգմանութեանց»:
4. Ինչի՞ շնորհիվ Հայաստանում մշակույթը բուռն զարգացում ապրեց գրերի գյուտից հետո:
5. Ինչո՞ւ է V դարը համարվում Ոսկեդար:
6. Ինչպե՞ս է կոչվել հայոց գրական լեզուն:
7. Թվարկե՛ք V դ. հայ պատմիչներին:
8. Ինչպե՞ս էր կոչվում Մովսես Խորենացու աշխատությունը, և ինչո՞ւ է նա ստացել *Մեծն Քերթող և Քերթողահայր* պատվանունները:
9. Ինչ ուղղություններով զարգացավ գրականությունը վաղ միջնադարում:
10. Ինչ հայ նշանավոր փիլիսոփաների գիտեք:
11. Ովքե՞ր են եղել VII դարի հայ նշանավոր բանաստեղծները:
12. Ինչ գիտեք հայ միջնադարյան բժշկագիտության մասին:
13. Ո՞վ է եղել «Աշխարհացոյց»-ի հեղինակը, և ինչ աշխարհագրական նկարագրություններ է այն պահպանել:
14. Ինչ ներդրում ունի Անանիա Շիրակացին տիեզերագիտության մեջ:
15. Ճարտարապետական ինչ կոթողներ գիտեք վաղմիջնադարյան Հայաստանում:
16. Վաղմիջնադարյան քանդակագործության ինչ նմուշներ են հասել մեզ:
17. Ինչ գիտեք խճանկարային արվեստի և մանրանկարչության մասին:
18. Թատերական արվեստն ինչ նոր գծեր ձեռք բերեց վաղ միջնադարում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչ պատմական դեր ունեցավ հայոց գրերի գյուտը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Մեսրոպ Մաշտոց • Հացեկաց գյուղ • Գողթն գավառ • Սահակ Պարթև կաթողիկոս • դանիելյան գրեր • Ամիդ, Եդեսիա, Սամոսատ քաղաքներ • Ռահ (Երասխ) գետ • Ամարասի վանք • Հայոց Արևելից կողմեր • հայ մշակույթի Ոսկեդար • «Թագուհի թարգմանութեանց» (Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը) • գրաբար (հին հայերեն գրական լեզուն) • վարք (սրբերի կենսագրություն) • Շուշանիկի վարքը • Կորյուն, «Վարք Մաշտոցի» • Ագաթանգեղոս պատմիչ • Փավստոս Բուզանդ պատմիչ • Ղազար Փարպեցի պատմիչ • Պատմահայր Մովսես Խորենացի • Սեբեոս պատմիչ • Մովսես Կաղանկատվացի պատմիչ • Ղևոնդ պատմիչ • Եզնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց» • Դավիթ Անհաղթ, «Սահմանք իմաստասիրութեան» • Դավթակ Քերթող • Հիպոկրատ • Պտղոմեոս • «Աշխարհացոյց» • Անանիա Շիրակացի • Կոմիտաս կաթողիկոս, Հռիփսիմեի տաճար • Զվարթնոց տաճար • Ներսես Շինարար կաթողիկոս • խաչանկար (մոզաիկա) • Երուսաղեմ • փանդիռ (հայկական լարային նվագարան)

5-րդ թեմայի ամփոփում

1. Հայ գործիչները լավ էին հասկանում, թե թագավորության վերացումով ինչ վտանգ է սպառնում հայ ժողովրդին: Ուստի դեռևս Վռամշապուհ թագավորի օրոք՝ 405թ. Մեսրոպ Մաշտոցը ստեղծում է հայոց գրերը: Դրանով հայ ժողովուրդը մի հուժկու զենք ստացավ, որը նրան հնարավորություն տվեց անցնելու մաքառումների մի երկար ճանապարհ, հասնելու XXI դար:
2. Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի գյուտից հետո բուռն զարգացան դպրոցական կյանքը, պատմագրությունը, գեղարվեստական գրականությունը, փիլիսոփայությունը և բնական գիտությունները: Հատկապես մեծարժեք է Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկասիրությունը, որը հայ ժողովրդի ընդհանուր պատմությունը գրելու առաջին փորձն էր: V դարը, պայմանավորված հայ մշակույթի աննախընթաց զարգացմամբ, անվանվում է Ոսկեդար:
3. Բնական գիտությունների զարգացման գործում մեծ ավանդ ունեցավ Անանիա Շիրակացին:
4. V–VII դդ. մեծ զարգացում ապրեցին ճարտարապետությունը, քանդակագործությունը և նկարչությունը: Դրանց կենդանի վկայությունն են մինչև մեր օրերը պահպանված ճարտարապետական կոթողները, ամրոցները, եկեղեցական համալիրները և այլ շինություններ:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1–2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Բագրատունյաց թագավորության հաստատումը. Աշոտ I: Խալիֆայությանը ենթակա երկրներում, այդ թվում և Հայաստանում, արաբական տիրապետությունը թոթափելու ձգտումն ավելի ու ավելի էր ուժեղանում: Արտաքին քաղաքական իրադրությունը բարենպաստ էր դրա համար: Արաբական խալիֆայությունն անկում էր ապրում: Ժողովրդական ապստամբությունները և գահակալական կռիվները խարխլում էին խալիֆայության հիմքերը:

Ինչպես գիտենք, VIII-IX դդ. ժողովրդական-ազատագրական ապստամբություններ բռնկվեցին նաև Հայաստանում: Ճիշտ է, արաբական իշխանություններին հաջողվում էր ճնշել այդ ելույթները, սակայն դրանով չէին կարողանում կանխել ազատագրական պայքարի հետագա ընթացքը:

Մյուս կողմից՝ խալիֆայության դժվարին դրությունից օգտվում էր նրա մշտական հակառակորդ Բյուզանդական կայսրությունը: Վերջինս ամեն կերպ աջակցում էր հակաարաբական կենտրոնախույս ուժերին: Այդ պատճառով արաբա-բյուզանդական հարաբերությունները խիստ սրվել էին: Օրավուր թուլացող խալիֆայությունը հարկադրված էր դիմել զիջումների քաղաքականության:

Հայաստանի անկախության վերականգնման համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Արաբական պետության թուլացման և տրոհման ժամանակաշրջանում երկրի տնտեսական կյանքում տեղի էին ունենում խոշոր փոփոխություններ: Ամրապնդվում, ընդարձակվում և ժառանգական էին դառնում հայ իշխանների տիրույթները: Զարգանում էր տնտեսությունը, վերելք էին ապրում գյուղատնտեսությունը և արհեստագործությունը: Տնտեսապես և ռազմականապես զորեղացող հայ իշխաններն անկախության էին ձգտում: Նրանք հնարավորություն ունեին և գլխավորեցին հայկական պետականությունը վերականգնելու համաժողովրդական շարժումը: Հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին, և բոլորն էլ երազում էին անկախությունը վերականգնելու մասին:

Խալիֆայության թուլացումից Հայաստանում ամենից հմտորեն օգտվում էին Բագրատունիները: Նրանք ձգտում էին իրենց իշխանությունն ու ազդեցությունը տարածել ամբողջ Հայաստանում:

Խալիֆայությունը, համոզվելով, որ բռնությամբ հնարավոր չէ հնազանդ պահել դեպի Բյուզանդիա հակվող հայ իշխաններին, ստիպված էր զիջումների դիմել: 855թ. երկրի ***սպարապետ*** հաստատվեց Աշոտ Բագրատունին: Նա 862թ. նշանակվեց նաև ***Հայոց իշխանաց իշխան***: Այդ նշանակումով խալիֆայությունը փաստորեն երկրի կառավարումը հանձնեց հայերին: Դրանով Բագրատունիներն աստիճանաբար գերիշխանություն ձեռք բերեցին մյուս իշխանների նկատմամբ: Աշոտին հանձնվեց նաև հարկահանության իրավունքը, իսկ հարկերն էլ կրճատվեցին մոտ երեք անգամ: Աշոտ Բագրատունին խոհեմ ու հեռատես քաղաքական գործիչ էր և հմտորեն գլխավորում էր երկրի անկախության վերականգնման գործընթացը: Նա կարողացավ իր գերիշխանությունը տարածել Արծրունի, Սյունի, արցախյան և այլ նշանավոր իշխանական տների վրա: Նրա գերիշխանությունն ընդունեցին նաև վրաց և աղվանից իշխանները: Աշոտը վերականգնեց հայոց զինված ուժերը՝ բանակի թիվը հասցնելով 40 հազարի: Նա իր եղբայր ***Աբասին*** նշանակեց բանակի հրամանատար՝ սպարապետ: Աշոտը հմտորեն օգտագործեց տարածաշրջանի արաբ ամիրաների ներքին հակասությունները և նրանց թույլ չտվեց միջամտել Հայաստանի ներքին գործերին: Հայաստանի տարածքում գտնվող արաբական ամիրայություններն ընդունեցին նրա գերիշխանությունը: Այսպիսով՝ Բագրատունիների ձեռքն անցավ երկրի վարչական, տնտեսական և ռազմական իշխանությունը: Երկիրն առաջ էր գնում անկախության ուղիով: Արաբական իշխանությունը Հայաստանում փաստորեն դարձավ անվանական:

Հայաստանի անկախության վերականգնման մեջ մեծապես շահագրգռված հայոց վերնախավն ըստ ամենայնի աջակցում էր Բագրատունիներին: Աշխարհիկ և հոգևոր վերնախավի նախաձեռնությամբ 869թ. հայ իշխանների հատուկ ժողով հրավիրվեց, որը միահամուռ որոշեց Աշոտ Բագրատունուն հռչակել Հայոց թագավոր: Աշոտ Բագրատունու թագավորական իշխանությունը պաշտոնապես ճանաչելու համար ժողովը դիմեց խալիֆին: Սակայն խալիֆայությունը երկար ժամանակ ձգձգում էր Հայոց թագավորության ճանաչումը:

Բյուզանդիան իր հակառակորդ Արաբական խալիֆայությունը թուլացնելու նպատակով խրախուսում էր Հայաստանի անկախանալը և շտապեց դաշինք կնքել նրա հետ: Բյուզանդական կայսր հայազգի Վասիլ Ի-ը 876թ. հատուկ պատգամավորություն է ուղարկում Աշոտ Բագրատունու մոտ: Կայսրը հայտնում է, որ ինքը ծագում է հայ Արշակունիներից, և քանի որ Բագրատունիները թագադիր ասպետներ են եղել, նրանից թագ է խնդրում: Ի նշան փոխադարձ բարեկամության՝ Աշոտը թագ է ուղարկում Վասիլ Ի-ին:

Խալիֆայությունը ոչ մի կերպ չէր հաշտվում Հայաստանի փաստական անկախության վերականգնման հետ: Խալիֆի հատուկ հանձնարարությամբ

Հայաստան ուղարկված նոր ոստիկան Ահմադը Հայաստանի արաբ ամիրաների հետ դավադրություն է կազմակերպում Աշոտի դեմ: Նրանք որոշում են անկախության ձգտող հայ իշխաններին բարեկամություն հաստատելու պատրվակով հրավիրել Դվին և ոչնչացնել: Սակայն Աշոտ Բագրատունին ուշի-ուշով հետևում էր արաբների գործողություններին: Նրա մարդիկ ձերբակալում են ոստիկանի սուրհանդակներին, որոնց մոտ հայտնաբերվում է ոստիկան Ահմադի նամակը՝ ուղղված արաբ ամիրաներին: Ահմադը նրանցից պահանջում էր հարձակվել Դվինի վրա՝ իբր թե կռվում են նոր նշանակված ոստիկանի դեմ: Նպատակն այն էր, որ ոստիկանը ոչինչ չկասկածող հայ իշխաններին ձերբակալեր ու ոչնչացներ:

Տեղեկանալով ոստիկանի ծրագրերին՝ Աշոտը սպարապետ Աբասին հանձնարարում է զորքով շարժվել Դվին: Դավադրության նշանակված օրը հայ իշխանների փոխարեն Դվին է մտնում հայկական զորքը: Սարսափած ոստիկանին ձերբակալում են, արաբական զորամասերը զինաթափում և երկրից դուրս քշում: Ոստիկանին նժույգի փոխարեն նստեցնում են ջորու վրա, տանում մինչև Հայաստանի հարավային սահման և ուղարկում ***«այնտեղ, որտեղից եկել էր»***: Այսպիսի անփառունակ վախճան ունեցավ արաբական վերջին ոստիկանի իշխանությունը Հայաստանում:


ՀԱՅԱՍՏԱՆԸ 908-1020 թթ.
Պետությունների սահմանները 922 թ.
Բյուզանդական կայսր. արևելյան սահմաններ 966 թ.
Հայ Բագրատունիների թագ. սահմանները 989-1020 թթ.
Գագիկ Ա-ի իշխ. քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող թագավորությունների և իշխ-ների սահմանները
Անիի թագ. վասալ թագավորությունների սահմանները
Տայքի Բագրատունիների կլուբապաղ. սահմանները
Տայքի Բագր. ավատատիրույթների սահմանները
Արխազական թագավորության սահմանները
Բյուզանդական կայսր. բանակաթեմերի սահմանները
Գագիկ Ա-ի թագավորությանը միացված տարածքներ
Վասպուրականի թագ-թյանը միացված տարածքներ
Անիի թագավորության տարածքը 11-րդ դարի սկզբին
Արծրունիների թագ. ազդեցության ոլորտում գտնվող Սասունի իշխանության տարածքը
ԱԲԽԱԶԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՎՐԱՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳ.
ԼՈՌԻ ԹԱԳ.
ԱՆԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՍԻԿՆԵՐԻ ԱՌԻՐԱՅՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍՈՒՆ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՎԱԴՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱԼԱՐՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՋՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԴԱՐԲԱՆԴ
ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
Սևանա լիճ
Դարբանդ (Բաբ-ուլ-Արվաբ)
Թբիլիսի
Գանձակ
Դվին
Անի
Կարս
Բագարան
Մանազկերտ
Խլաթ
Վան
Բաղեշ
Մարդին
Ջեզիրե (Բզաբդե)
Մծբին
Տիգրանակերտ (Մոգաբարին)
Ամիդ (Դիարբեքիր)
Հիսն-Քիֆ
Տիգրիս
Եդեսիա (Ուռհա)
Խառան
Սամոսատ (Սամոսատ)
Մարաղա
Թավրիզ
Արդաբիլ
Սալմաստ
Հաղբակերտ
Ուրմիա
Կամբրլու ծով
Գեղարքունիք ծով
Սևանա լիճ
Արաքսի
Ճապաղջուր
Տարոնի բագրատունիներ
Մուշ
Խարբերդ
Մալատիա (Մելիտենե)
Արարատ
Ալաշկերտ
Բասեն
Ամուրգ
Ջրոյժ
Գողթն
Մակու
Նախիջևան
Դարոյնք
Կապան
Սիսական
Գեղարքունիք
Գանձակ
Ծարավ
Ծիրանավանք
Գարդման
Ամրակ
Բեռկրի
Դուման
Ղարաբաղ
Ուտիք
Գարդման
Ոստան
Ոստանիկ
Ոստանիկ
Ոստանիկ

Հանդիպելով հայ ժողովրդի միահամուռ դիմադրությանը և համոզվելով, որ Հայաստանն ի վերջո կվերականգնի իր անկախությունը, նոր խալիֆը 885թ. արքայական թագ և թանկարժեք հանդերձներ ուղարկեց ***Աշոտ Բագրատունուն***՝ նրան ճանաչելով Հայոց թագավոր: Իր հերթին Վասիլ I կայսրը շտապեց բարեկամական դաշինք կնքել նրա հետ:

Վասիլ I կայսր

Հայաստանի իշխանների և հարևան երկրներից եկած հյուրերի ներկայությամբ ***885թ. օգոստոսի 26-ին Շիրակավանում*** մեծ հանդիսավորությամբ ***Գևորգ Գառնեցի*** կաթողիկոսի կողմից ***Աշոտ Բագրատունին*** օծվեց Հայոց թագավոր: Այսպիսով՝ Հայաստանի տարիներ առաջ հաստատված փաստական անկախությունը ճանաչվեց միջազգայնորեն: Հիմնվեց Հայաստանի ***Բագրատունյաց թագավորությունը (885-1045թթ.)***, և վերականգնվեց ավելի քան 450 տարի առաջ վերացած հայկական պետությունը: Դա պատմական շրջադարձային նշանակություն ունեցող երևույթ էր, որը մեծապես նպաստեց Հայաստանի հետագա վերելքին:

Երկրի անկախության ամրապնդումը: Հայոց տերության ստեղծումը: Աշոտ I-ը, որպես փորձված պետական գործիչ և զորավար, մեծ ուշադրություն էր դարձնում առաջին հերթին երկրի պաշտպանությանը: Նա քայլեր ձեռնարկեց առանձին իշխանների և արաբական ամիրայությունների ձեռքին գտնվող հայկական տարածքներն իր իշխանության ներքո միավորելու ուղղությամբ: Սակայն այդ հարցում թագավորը հանդիպում էր ուժեղ դիմադրության: Նա ճնշեց Վանանդի իշխանների ելույթը և Վանանդ գավառը Կարս բերդաքաղաքով միացրեց իր տիրույթներին: Կարսը վերակառուցվեց և դարձավ հայոց սպարապետների աթոռանիստը: Ավելի բարդ էր երկու իշխանական տների՝ Վասպուրականի Արծրունի և Սյունիքի Սյունի նախարարական տների խնդիրը: Դրանք իրենց կարողությամբ և ռազմական ուժով քիչ էին զիջում Բագրատունիներին: Սակայն Աշոտ I-ին հաջողվեց խաղաղ ճանապարհով, խնամական կապեր հաստատելով, ավատատիրական այս հզոր տները ևս ենթարկել իրեն:

Հայոց թագավորն իր իշխանությանը ենթարկեց ոչ միայն ***Վասպուրականի, Գուգարքի, Սյունիքի, Արցախի*** և մյուս հայկական իշխանությունները, այլև Հայաստանի հարավի արաբական ամիրայությունները: Դրանով ևս որոշակի հաջողությունների հասավ հայկական հողերը մեկ միասնական պետության մեջ միավորելու իր ծրագրերում:

Հաջող արշավանքներով Աշոտ I-ը հուժկու հարվածներ հասցրեց ***կովկասյան լեռնականներին***, որոնք ասպատակում էին ***Վիրքը*** և ***Աղվանքը***: Մինչ

այդ նրա ազդեցության տակ հայտնված այդ երկրներն ընդունեցին Աշոտի գերիշխանությունը: Հայոց թագավորությունն ընդարձակվեց՝ տարածվելով մինչև Կովկասյան լեռնաշղթա: Փաստորեն հիմք դրվեց ***Բագրատունիների տերությանը:***

Պայքար անկախության պահպանման համար: Սմբատ I: Աշոտին հաջորդեց նրա որդի ***Սմբատ I-ը*** (890–914թթ.), որը շարունակեց հոր քաղաքականությունը՝ բարեկամական հարաբերություններ պահպանելով Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության հետ: Նրա օրոք հայկական տերության սահմաններն ավելի ընդարձակվեցին: Սմբատն իրեն ենթարկեց Աբխազաց (Արևմտավրացական) թագավորությունը և հյուսիսկովկասյան մի շարք ցեղերի՝ կայազորներ հաստատելով թե՛ այդ երկրներում և թե՛ Ալանաց դռներում: Նա թագավորական թագ տվեց վրաց ***Ատրներսեհ*** իշխանին և Հայոց Արևելից կողմերի ***Համամ*** իշխանին, իսկ իրեն հռչակեց ***«Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց»***: Նրա օրոք երկիրը տնտեսապես բարգավաճում էր, ամենուրեք ծավալվում էր խաղաղ շինարարություն:

Պետության կենտրոնացման և հզորացման այս քաղաքականությունը հանդիպում էր ոչ միայն առանձին հայ խոշոր ավատատերերի, այլև խալիֆայության համառ դիմադրությանը:

Իր դիրքերն ամրապնդելու նպատակով Սմբատ I-ը 893թ. բարեկամության և առևտրական նոր պայմանագիր կնքեց Բյուզանդիայի հետ: Խալիֆայությունը և Ատրպատականում ձևավորված ***Սաջյան ամիրայությունը*** թշնամաբար էին վերաբերվում հայկական պետության հզորացմանը: Ավելին, Բյուզանդիայի հետ կնքած պայմանագիրն առիթ դարձնելով՝ Սաջյան ամիրայի զորքերը ներխուժեցին Հայաստան: ***Արագածոտն*** գավառի ***Դողս*** գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում արաբները ծանր պարտություն կրեցին:

Գագիկ Արծրունու պատկերաքանդակը (Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի)

Չկարողանալով զենքով հաջողության հասնել՝ Սաջյան ամիրաները փոխեցին իրենց քաղաքականությունը: Նրանք Հայոց տերությունը թուլացնելու համար դիմեցին հայ իշխանների միջև երկպառակություն սերմանելուն: Շուտով հարմար առիթը ներկայացավ՝ միջամտելու հայ իշխանների ներքին տարաձայնություններին: ***Վասպուրականի*** և ***Սյունիքի*** իշխանները սկսեցին վիճել ***Նախճավան*** քաղաքի համար: Սմբատն այդ վեճը լուծեց հօգուտ Սյունյաց իշխանների: Թագավորի այդ քայլից դժգոհ ***Գագիկ Արծրունին*** բանակցություն-

ներ սկսեց Ատրպատականի ամիրա ***Յուսուֆի*** հետ: Վերջինս անմիջապես միջնորդեց խալիֆի առաջ՝ Սմբատի փոխարեն Հայոց թագավոր ճանաչելու Գագիկ Արծրունուն: Խալիֆն առանց հապաղելու թագ ուղարկեց, և 908թ. Յուսուֆը Գագիկ Արծրունուն թագադրեց որպես Հայոց թագավորի: Նրան վերապահվեց նաև Հայաստանից հարկեր հավաքելու իրավունքը: ***«Բաժանի՛ր և տիրի՛ր»*** քաղաքականությամբ արաբները ձգտում էին ավելի խորացնել հայ ազդեցիկ իշխանների տարաձայնությունները և արգելակել Հայոց տերության հետագա վերելքը:

Յուսուֆը Բագրատունիների թագավորությանն ընդմիշտ վերջ տալու նպատակով Գագիկ Արծրունու հետ՝ համատեղ ուժերով հարձակվեց Սմբատի զորքերի վրա: Դժբախտաբար, Գագիկ Արծրունուց բացի, Յուսուֆի կողմն անցան նաև մի շարք այլ հայ իշխաններ: Հայոց թագավորության համար ստեղծվեց ծանր կացություն: Բյուզանդական կայսրը Սմբատին օգնելու նպատակով մեծ զորքով շարժվեց դեպի Հայաստան, սակայն ճանապարհին մահացավ, իսկ զորքը հետ դարձավ: Հայոց թագավորը մնաց առանց դաշնակիցների՝ արաբական վտանգին դեմ հանդիման: Սմբատ Ի-ն ստիպված եղավ մի փոքր զորագնդով ամրանալ Կապույտ բերդում: Սակայն մեկ տարվա համառ դիմադրությունից հետո, փորձելով կանխել երկրի հետագա ավերումը, նա անձնատուր եղավ: Յուսուֆը, հակառակ իր խոստումներին, Հայոց թագավորին կալանավորեց և ուղարկեց Դվինի բանտ: Նախճավանի ***Երնջակ բերդն*** այդ ժամանակ հերոսաբար դիմադրում էր արաբներին: Յուսուֆը Սմբատին տարավ այնտեղ, որպեսզի նա բերդի պաշտպաններին զենքը վայր դնելու հրաման արձակի: Սակայն թագավորը բերդապահներին դիմադրությունը շարունակելու կոչ արեց, ինչը նրան մահապատժի ենթարկելու առիթ ծառայեց (914թ.): Արաբները ժողովրդի վրա ահ ու սարսափ տարածելու նպատակով Դվինում թագավորի մարմինը գամեցին խաչի վրա:

Արաբների ավերիչ արշավանքի և կողոպտիչ քաղաքականության հետևանքով խախտվեց երկրի բնականոն կյանքը: Երկրում սով սկսվեց, որը տևեց մի քանի տարի: Նոր ստեղծված հայկական տերությունը կանգնեց անկախությունը կորցնելու լուրջ վտանգի առաջ:

Երկրի անկախության ամրապնդումը: Յուսուֆը հույս ուներ, որ Սմբատի մահապատժից հետո հայերը ծնկի կգան: Սակայն տեղի ունեցավ հակառակը: Հայ ժողովուրդը ոտքի ելավ թշնամու դեմ՝ իր անկախությունը և պետականությունը պաշտպանելու համար: Այդ պայքարը գլխավորեց Սմբատ Ի-ի ավագ որդի ***Աշոտ II-ը*** (914–928թթ.), որին խիզախության և տոկունության համար ժողովուրդը ***Երկաթ*** մականունը տվեց: Աշոտ Երկաթը, հոր վրեժն առնելու և երկիրն ազատագրելու համար, հավատարիմ մնացած զորագնդերի գլուխ անցած, ոչնչացրեց կամ դուրս վռնդեց երկրի կարևոր բերդերում ամրացած արաբական զորագնդերը: Յուսուֆն էլ իր հերթին բռնությունների էր

ենթարկում անգամ իր կողմն անցած հայ իշխաններին: Նրանք, հասկանալով, թե ինչ ճակատագրական սխալ են թույլ տվել, աստիճանաբար համախմբվեցին Աշոտ II-ի շուրջը:

Սևանա վանքը (IX դ.)

921թ. Աշոտ II-ն իր փոքրաթիվ զորաջոկատով ամրացավ ***Սևանա կղզում:*** Արաբական զորքերի հրամանատար Բեշիրը փորձեց գրավել կղզին, սակայն Աշոտ II-ը մառախլապատ մի օր նավակներում տեղավորեց իր լավագույն ռազմիկներին, որոնք, դեռ ափ չհասած, հանկարծակի սկսեցին ուժգնորեն նետահարել արաբներին: Հայոց թագավորի այդ անակնկալ համարձակ գործողությունը խուճապի մատնեց արաբներին: Գլխակորույս նահանջող թշնամու վրա հարձակվեց ***Գևորգ իշխանի*** ջոկատը և մի նոր ջարդ տվեց նրան:

Սևանի փայլուն հաղթանակից հետո հայկական զորաբանակները Աշոտ II-ի և նրա եղբայր Աբասի գլխավորությամբ արաբներից ազատագրեցին Կենտրոնական Հայաստանի մեծ մասը: Այնուհետև նրանք հաղթեցին նաև Թիֆլիսի արաբական ամիրայությանը: Այս հաջողությունները զգալի չափով նպաստեցին հայ և վրաց Բագրատունիների քաղաքական դաշինքին:

Բյուզանդիան փորձում էր Հայաստանի և Վրաստանի ուժերն ուղղել արաբների դեմ: Ուստի, երբ Աշոտ II-ը մեկնեց Կոստանդնուպոլիս, բյուզանդացիներն անմիջապես դաշինք կնքեցին նրա հետ:

Արաբները, համոզվելով, որ Հայաստանը զենքի ուժով չեն կարող իրենց ենթարկել, ստիպված զիջեցին, որպեսզի չանցնի Բյուզանդիայի կողմը: 922թ. խալիֆը Աշոտ II-ին թագ ուղարկեց և ճանաչեց ***Հայաստանի շահնշահ***, այսինքն՝ ***արքայից արքա:*** Դրանով արաբները ճանաչեցին Աշոտ Երկաթի գերակայությունը տեղական բոլոր արքայիկների նկատմամբ: Արքայական այս բարձր տիտղոսն Անիի Բագրատունիները կրեցին մինչև թագավորության անկումը:

Ամրապնդելով իր իշխանությունը՝ Աշոտ II-ը կարճ ժամանակամիջոցում վերջնականապես հնազանդեցրեց կենտրոնախույս իշխաններին: Գագիկ Արծրունին, որը մինչ այդ հասկացել էր իր արարքի կորստաբեր լինելը և հեռացել արաբներից, հաշտվեց նոր իրադրության հետ՝ բավարարվելով «Վասպուրականի թագավոր» տիտղոսով:

Աշոտ Երկաթի խաչադրոշը

Այսպիսով՝ Հայաստանի անկախության և Հայոց փերության պահպանման համար մղվող

պայքարն ավարտվեց հայերի վերջնական հաղթանակով: Հայաստանի անկախությունը նվաճված էր, իսկ Բագրատունյաց տերությունը՝ վերականգնված:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՆ՝ ԱՇՈՏ Ի-Ի ՄԱՍԻՆ

«Իսկ երբ իր հոր՝ Սմբատի փոխարեն [Աշոտն] է տիրում հայոց սպարապետությանը, իրենից առաջ եղողներից գրեթե ամենաբարձրը ինքն է ճանաչվում, քանի որ ընդունելով մեծարանքներ՝ արհամարհում էր անարգանքը և միշտ իրեն վարժեցնում էր բարի կրթության ու ուսման մեջ: ...Այդպես է վարում նաև սպարապետությունը, և նրա բարի համբավը հասնում է մինչև արքունիք: Ապա Հայաստան ուղարկված Ալի-Արմանի անունով մի ոստիկան՝ ամիրապետի հրամանով նրան [Աշոտին] կարգում է Հայոց իշխանաց իշխան՝ զարդարելով բազում զգեստներով և արքունական պատվով, նրան վստահելով հայոց հարկերն ու արքունի ամբողջ տուրքը:

...Բայց ինձ համար այստեղ մեկ այլ բան ավելի սիրելի չէ, քան զբաղվել այն գովեստով, որ վերաբերում է իշխանաց իշխան Աշոտին: Քանի որ նա միջին տարիքի հասնելով՝ բարձրահասակ էր, մարմնեղ, թիկնավետ, զվարթադեմ, մրահոն: ...Հայոց նախարարներն ու իշխանները, այսպիսի քաջատրոհմիկ պերճություն տեսնելով, բոլորը միաբան խորհուրդ են անում՝ նրան թագավոր նշանակել իրենց վրա և Շեխի որդի ոստիկան Հիսեի միջոցով զեկուցում են ամիրապետին: Եվ սիրով ընդունելով հավանության արժանի խնդիրը՝ [ամիրապետը] Աշոտին է առաքում թագավորական թագը: Ոստիկան Հիսեն այն և նրա հետ նաև թագավորական այլ զգեստներ, պարգևներ, ընծաներ ու հրեղեն երիվարներ է զարդերով ու զենքերով մատուցում նրան: Այնուհետև այնտեղ հրավիրվեց նաև Գևորգ մեծ հայրապետը և սրվակի յուղով օծելու փոխարեն կատարելով աստվածային հոգևոր օրհնությունը՝ նրան թագավոր են կարգում Ասքանազյան ազգի վրա»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՆ՝ ՍՄԲԱՏ Ի-Ի ՕՐՈՔ ՀԱՅՈՑ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Եվ այսպես ձգտելով [Սմբատը] ընդլայնում էր իր տերության սահմանները հյուսիս-արևմուտքից մինչև Կարին քաղաքը, իսկ այնտեղից էլ Կղարջքով այն կողմ անցնելով ու հասնելով մինչև մեծ ծովի ափը, եգերացիների սահմանները, Կովկասյան մեծ լեռան սրտորոտները՝ գրավելով գուգարացիներին ու Ծանարքը, [հասնելով] մինչև Ալանաց դուռը և գրավելով նաև նրանց երկաթյա դռնով ամրոցը: Իսկ այնտեղից էլ [հասնելով] մինչև հարավային կողմը, [այն էլ՝ Կուր գետով մինչև Տփխիս քաղաքը, ինչպես նաև Ուտի գավառը մինչև Հունարակերտ քաղաքը և Տուս ու Շամքոր: Եվ այսպես ընդարձակելով իր տերության սահմանները և դնելով արքունի հարկերի, տուրքերի ու մաքսերի լծի տակ՝ քաջամարտության զենքը տնկում է որպես հաղթության նշան»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Փորձեք վերլուծել Աշոտ I-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը:
2. Ինչպես ձևավորվեց Հայոց տերությունը: Մինչև ո՞ւր էին տարածվում նրա սահմանները:
3. Ինչո՞վ է բացատրվում Սմբատ I-ի «Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը:
4. Ի՞նչն էր պատճառը, որ արաբները Սմբատ I-ի իշխանության վերջին տարիներին ժամանակավոր հաջողությունների հասան Հայաստանում:
5. Փորձեք գնահատել Աշոտ Երկաթի գործունեությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Աշոտ Բագրատունի՝ իշխանաց իշխան և Հայոց թագավոր • Աբաս սպարապետ • Վասիլ I՝ Բյուզանդիայի կայսր • Հայաստանի Բագրատունյաց թագավորություն • Վանանդ գավառ • Կարս բերդաքաղաք • Վասպուրականի Արծրունի և Սյունիքի Սյունի իշխաններ • Գուգարքի, Արցախի իշխանություններ • Սմբատ I՝ Բագրատունյաց արքա, «Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց» • Դողսի ճակատամարտ • Ատրներսեհ իշխան, վրաց թագավոր • Համամ իշխան, թագավոր • Սաջյան ամիրայություն • Գագիկ Արծրունի՝ Վասպուրականի իշխան և թագավոր • Կապույտ բերդ • Նախճավանի Երնջակ բերդ • Աշոտ II Երկաթ՝ Բագրատունյաց արքա, Հայաստանի շահնշահ • Գևորգ իշխան

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ X ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ XI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԸ

Հայաստանն Աբասի և Աշոտ III-ի թագավորության շրջանում: Արաբների նկատմամբ տարած հաղթանակով Հայաստանի անկախությունը վերջնականապես ամրապնդվեց: Գրեթե վերացավ արտաքին հարձակումների վտանգը, և երկիրը թևակոխեց խաղաղության ու բարգավաճման երկարատև ժամանակաշրջան: Աշոտ II-ի թագավորության վերջին տարիները խաղաղ անցան: Անժառանգ Աշոտից հետո գահ բարձրացավ նրա կրտսեր եղբայր, Կարսի կառավարիչ ***Աբասը*** (928–953թթ.): Նա Բագրատունիների արքունիքը տեղափոխեց Կարս և այն դարձրեց իր թագավորության նոր մայրաքաղաքը: Կարսը կարճ ժամանակամիջոցում աճեց, կառուցապատվեց և դարձավ Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկը: Երկարատև և ավերիչ պատերազմից հետո բնակչությունը ձեռնամուխ եղավ երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելուն:

Կենտրոնական իշխանության հզորացման ջատագով էր նաև Հայոց եկեղեցին: Նկատի առնելով այդ հանգամանքը՝ Աբաս թագավորը 948թ. ***Աղթամար***

կղզուց կաթողիկոսական աթոռը տեղափոխեց պետության մայրաքաղաք: Անանիա Մոկացի կաթողիկոսը հաստատվեց ***Կարսում***: Հետագայում կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց սկզբում Շիրակի ***Արգինայի վանք***, իսկ այնուհետև՝ ***Անի***:

Աբասին հաջորդեց նրա որդի ***Աշոտ III-ը*** (953–977թթ.): Վերջինս պետության ամրապնդման ու կենտրոնացման համար վճռական քայլերի դիմեց: Նա ավելի մեծացրեց երկրի անկախությունը պահպանող մշտական բանակը: Հայոց բանակը պարտության մատնեց կովկասյան լեռնականներին՝ վերջ դնելով նրանց ասպատակություններին:

Սանահինի վանքը

Ծավալվում էր շինարարությունը: Երկրի գլխավոր կենտրոններում հիմնվեցին վանքեր, դպրոցներ ու հիվանդանոցներ: ***Խոսրովանույշ*** թագուհին ***Զորագեղի*** բարձրադիր ափին հիմնեց ***Սանահինի*** և ***Հաղպատի*** նշանավոր վանքերը: Դրանք դարձան միջնադարյան Հայաստանի մշակույթի խոշորագույն կենտրոններ: Աշոտ III-ը հոգատար էր աղքատների, կույրերի, անդամալույծների նկատմամբ: Նրանց համար բացվում են հիվանդանոցներ և այլ բարեգործական հաստատություններ: Դրա համար էլ նա ստացավ ***Ողորմած*** մականունը: Սակայն, դրա հետ մեկտեղ, Աշոտ Ողորմածը հարկ եղած պահին մարտի դաշտում էր: Այսպես, 974թ. հայոց բանակը նրա գլխավորությամբ դուրս եկավ ***Հովհաննես Չմշկիկի*** բյուզանդական բանակի դեմ՝ թույլ չտալով նրա առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքեր:

Անին՝ մայրաքաղաք: Հայոց թագավորությունը երկար ժամանակ չունեցավ մշտական մայրաքաղաք: Դվինը շարունակում էր մնալ արաբական ամիրայության կենտրոն, իսկ արաբներից այն մաքրելու համար մղվող պայքարն առայժմ հաջողությամբ չէր պսակվում: Բացի դրանից՝ Դվինը դուրս էր Բագրատունիների հիմնական տնտեսական կենտրոն Շիրակից: Նրանք անգամ թագավորանիստ ***Կարսը*** տնտեսական առումով հարմար չգտան դարձնելու մշտական մայրաքաղաք: Երկրի տնտեսական զարգացումն ինքնաբերաբար ծնեց այդպիսի կենտրոն: Շիրակում՝ հնագույն ***Անի ամրոցի*** շուրջը ծնունդ

Անի մայրաքաղաքի պարիսպները

առավ մի նոր քաղաք: Այն 961թ. Բագրատունիները հռչակեցին մայրաքաղաք: Անին ուներ աշխարհագրական և ռազմավարական հարմար դիրք և գտնվում էր բանուկ առևտրական ճանապարհների խաչմերուկում: Անին պետք է լիներ մեծ և շքեղ, որովհետև դիտվում էր որպես ամբողջ Հայաստանի նոր մայրաքաղաք: Կարճ ժամանակում այն աճեց ու կառուցապատվեց շքեղ շինություններով և պարսպապատվեց:

Նոր մայրաքաղաքի հիմնումը խորհրդանշում էր Բագրատունյաց թագավորության հզորացումը: Անին մայրաքաղաք դարձնելու տոնակատարությունը միացվեց Աշոտ III-ին թագադրելու հանդիսությանը: Անի էին հրավիրված Հայաստանի և հարևան երկրների՝ Վիրքի, Աղվանքի նշանավոր դեմքերը:

Աշոտ III-ը և նրա հաջորդները միջոցներ չէին խնայում նոր մայրաքաղաքը բարեկարգելու, ամրացնելու համար: 963–964թթ. կառուցվեց քաղաքի՝ աշտարակներով ամրացված պարիսպների առաջին գիծը: Այն սրբատաշ էր և ուներ մոտ 2500 մ երկարություն, 8-10 մ բարձրություն, 1 մ հաստություն: Հետագայում Անին այնքան արագ ընդարձակվեց, որ Սմբատ II-ի օրոք՝ 989թ., անհրաժեշտ եղավ կառուցել քաղաքի պարիսպների երկրորդ գիծը:

Ճարտարապետական հոյակապ շինություններով մայրաքաղաքի կառուցապատումը շարունակվեց նաև հետագայում: Անին ուներ ընդարձակ շուկա, իջևանատներ: Այնտեղ կառուցվել էին տասնյակ եկեղեցիներ, տաճարներ, պալատներ, շքեղ հյուրանոցներ, աշխարհիկ բազմաթիվ այլ շենքեր: Անին միջնադարյան Հայաստանի ամենամեծ ու հռչակավոր քաղաքն էր: Ավանդույթի համաձայն՝ Անին ունեցել է հազար ու մի եկեղեցի:

Սմբատ II թագավորը: Երկրի բարգավաճումն ու կառուցապատումն ավելի մեծ թափով շարունակվեցին Աշոտ III-ի հաջորդ ***Սմբատ II-ի*** օրոք (977–990թթ.): Ամենուր կառուցվում էին եկեղեցիներ, տաճարներ, դպրոցներ, պալատներ, բերդեր, իջևանատներ, կամուրջներ ու ջրմուղներ:

Հայաստանում դեռևս շարունակում էին պահպանվել արաբական ամիրայությունները: Մասնավորապես՝ Դվինում գոյատևում էր արաբական մի ամիրայություն: Սմբատ II-ի թագավորության առաջին շրջանում Դվինի ամիրան հանդգնեց հանկարծակի հարձակվել Շիրակի վրա և անգամ նկատելի հաջողության հասավ: Սակայն Սմբատին հաջողվեց գլխովին ջախջախել թշնամուն: Նա Դվինի ամիրայությունը՝ արաբների այդ վերջին հենակետը, 987թ. միացրեց իր թագավորությանը:



Բագրատունյաց Հայաստանի զինանշանը (Անիի պարսպաշարք, 989թ.)

Բագրատունյաց թագավորության հզորացումը Գագիկ Ի-ի օրոք: Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը մեծ վերելք ապրեց Սմբատ II-ի եղբայր ***Գագիկ Ի-ի*** թագավորության շրջանում (990–1020թթ.): Հայոց թագավորը կրում էր ***«շահնշահ», «թագավոր Հայոց և Վրաց»*** տիտղոսները: Դա նշանակում էր, որ Հայաստանի տարբեր մասերում ու այսրկովկասյան երկրներում առաջացած մանր թագավորություններն անվերապահորեն ենթարկվում էին Անիի Բագրատունիներին: Առանց շահնշահի հավանության նրանք չէին կարող գահակալել և հարաբերությունների մեջ մտնել հարևան պետությունների հետ: Հայոց կաթողիկոսի ընտրությունը, ինչպես Արշակունիների օրոք, կատարվում էր Բագրատունյաց թագավորների հավանությամբ:

Գագիկ Ի-ի արձանը՝ Անիի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մանրակերտով

Այսպես, երբ ***Տաշիր-Զորագետի*** (Լոռու) թագավոր ***Դավիթ Անհողինը*** 1001թ. ապստամբեց Գագիկ Ի-ի դեմ և հրաժարվեց ճանաչել Անիի Բագրատունիների գերիշխանությունը, Գագիկը հարձակվեց նրա թագավորության վրա և ռազմակալեց նրա ամբողջ տարածքը: Դավիթը երկրից փախավ և իր հողերից զրկվելով՝ ստացավ ***Անհողին*** մականունը: Հետագայում Դավիթը զղջաց իր արարքի համար, և հարցն ավարտվեց խաղաղությամբ: Նա գնաց Գագիկ Ի-ի մոտ և ներում խնդրեց՝ ընդունելով նրա գերիշխանությունը: Դրանից հետո Դավիթը հետ ստացավ իր տիրույթների մեծ մասը:

Գագիկ Ի-ն ավելի մեծացրեց և ամրապնդեց բանակը: Այդ հզոր ուժի օգնությամբ թագավորը հետզհետե ընդարձակեց արքայական տիրույթները: Գագիկ Ի-ը վերացրեց ***Վայոց ձորի իշխանությունը*** և այն միացրեց իր տիրույթներին: Ապա միացրեց ***Արցախի մեծ մասը***, այդ թվում և ***Խաչեն*** գավառը: Վասպուրականի թագավորությունից գրավվեցին և Անիի Բագրատունիների տիրույթներին միացվեցին ***Կոգովիտ*** ու ***Ծաղկոտն*** գավառները:

Արաբ ամիրա ***Մամլանը*** 998թ. հարձակվեց Հայաստանի և Վրաստանի վրա: Նրա դեմ դուրս եկավ Վահրամ Պահլավունու գլխավորած հայ-վրացական միացյալ բանակը և ճակատամարտում ծանր պարտության մատնեց արաբներին: Դրանով վերջ տրվեց Հայաստանի և Վրաստանի նկատմամբ արաբ ամիրայությունների հետագա ոտնձգություններին:

Գագիկ Ի-ի թագավորության շրջանում Հայոց տերությունը նշանակալիորեն ուժեղացավ: Այդ տարիներին ավելի մեծ ծավալով շարունակվեցին

շինարարական աշխատանքները, երկիրը բռնեց հետագա բարգավաճման ճանապարհը: Ծաղկում էր Անին: Այնտեղ կառուցվում էին նորանոր՝ մեկը մյուսից գեղեցիկ շինություններ: Գագիկ Ի-ի կնոջ՝ ***Կատրամիդե*** թագուհու խնամակալությամբ 1001թ. ավարտվեց ***Անիի Կաթողիկե*** հոյակապ եկեղեցու շինարարությունը: Զվարթնոց նշանավոր տաճարը երկրաշարժից քանդվել, կործանվել էր: Թագավորը դրա նմանությամբ մի տաճար կառուցել տվեց Անիում: Նրա օրոք Անին շարունակեց կառուցապատվել աշխարհիկ և եկեղեցական բազմաթիվ գեղեցիկ շինություններով:

Գագիկ Ի-ի ժամանակ հզորացավ ***Պահլավունիների*** իշխանական գերդաստանը: Այդ տոհմի ներկայացուցիչները ժառանգաբար վարում էին սպարապետի պաշտոնը: Հատկապես նշանավոր էր սպարապետ ***Վահրամ Պահլավունին:*** Պահլավունիները ևս շինարարական լայնածավալ աշխատանքներ են կատարել: Նրանք են կառուցել ***Բջնիի*** նշանավոր ամրոցն ու եկեղեցին, ***Ամբերդը***, ***Մարմաշենը*** և այլն: Շինարարական աշխատանքներ ծավալվեցին նաև Վասպուրականում, Սյունիքում, Արցախում և այլուր:

Մարմաշենի վանքը

Գագիկ Ի-ի մահից հետո Անիի թագավորությունը քաղաքականապես թուլացավ և տրոհվեց, սակայն երկրի տնտեսության խաղաղ բարգավաճումը շարունակվեց:

ԱՍՈՂԻԿԸ՝ ՀԱՅՈՑ ՍՄԲԱՏ II ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԻԻ ՆՈՐ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Այդ ժամանակ էր, որ մահացավ Հայոց օրինյալ թագավոր Աշոտը չորս հարյուր քսանվեց թվականին (977թ.), և հենց նույն օրը թագավոր նստեց նրա որդի Սմբատը՝ տասներեք տարի: Սա խրամն ամբողջությամբ լցնել է տալիս և պարսպապատում է Անի քաղաքը, Ախուրյան գետից մինչև Ծաղկոցաց ձորը՝ կրով և որձաքար վեմերով շաղախված, մահարձաններով և բրգավոր աշտարակներով, առավել բարձրաբերձ պարիսպներով և ծավալուն, քան հին պարիսպը՝ ամբողջ քաղաքի ընդարձակությամբ, մայրի փայտից գերանե դռներով, երկաթագամ, հաստահեղույս և բևեռապինդ ամրացված: Ապա Տրդատ ճարտարապետի ձեռքով, որը Արգինայի կաթողիկոսարանի եկեղեցին կառուցեց, ձեռնարկում է Անիի մեծաշեն եկեղեցու հիմնադրումը»:

ԱՍՈՂԻԿԸ՝ ԳԱԳԻԿ Ի-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐՔՈՒՆԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐՆ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տիրեց նա [Գագիկ Ի-ը] բազմաթիվ ամրոցների և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններից, ...իր եղբորից առավել շատ. և չեղավ մեկը, որ սարսափ ազդեր ամբողջ Հայաստան աշխարհի վրա ...մինչև իմ այս հիշատակի խոսքերը շարադրելու ժամանակները: Որովհետև իմաստուն այր էր, պատերազմելու մեջ վարժ և հմուտ...»:

ԱՐԱԲ ՀԵՂԻՆԱԿ ԻԲՆ-ՀԱՈՒԿԱԼԸ՝ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«Թագավորներն ու իշխաններն այստեղ ապրում են մեծ առատության մեջ և ունեն գերազանց վարելադաշտեր, ամբարներ, ձիեր: Նրանց կալվածները կազմող խտաբնակ խոշոր գավառները հարուստ են: Այդ երկրներում, սարերում, քաղաքներում և ավաններում այնպիսի էժանություն, լիառատություն են, այնպիսի արոտներ, այնպիսի գույնզգույն մարմարիոն, հոտերի ու հացի այնպիսի շատություն, այնպիսի ծառեր, գետեր, պտուղներ, թարմ ու չորացած արմավներ, գերիների այնքան մեծ թիվ, որ եթե այս մասին պատմվեր մի մարդու, որ այդ բոլորը չի տեսել իր աչքով, այդպիսին կսկսեր ժխտել այդ բոլորի չափերը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞վ էին պայմանավորված Հայաստանի ավելի քան մեկ դար տևած խաղաղ զարգացումն ու բարգավաճումը:
2. Ինչ վանական համալիրներ կառուցվեցին Աշոտ III-ի օրոք:
3. Ինչո՞ւ Աշոտ III-ն Անին դարձրեց իր տերության մայրաքաղաք:
4. Ինչ մայրաքաղաքներ է ունեցել Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը մինչև Անին:
5. Բագրատունի ո՞ր գահակալը հաջորդեց Սմբատ II-ին:
6. Ինչ քայլեր ձեռնարկեց Գագիկ Ի-ը թագավորության միասնության և հզորության ամրապնդման ուղղությամբ:
7. Շինարարական ինչ գործունեություն ծավալեց Գագիկ Ի-ը:
8. Ինչ գիտեք Պահլավունիների տոհմի գործունեության մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Աբաս՝ Կարսի կառավարիչ և Բագրատունյաց թագավոր • Աշոտ III Ողորմած՝ Բագրատունյաց արքա • Անանիա Մոկացի կաթողիկոս • Արգինայի վանք • Խոսրովանույշ թագուհի • Սանահինի և Հաղպատի վանքեր • Անի մայրաքաղաք • Սմբատ II Բագրատունի • Դվինի ամիրայություն • Գագիկ I Բագրատունի՝ թագավոր Հայոց և Վրաց • Դավիթ Անհողին՝ Տաշիր-Ձորագետի (Լոռու) թագավոր • Վայոց ձորի իշխանություն • Խաչենի իշխանություն • Ասողիկ պատմիչ • Կատրամիդե թագուհի • Տրդատ ճարտարապետ • Անիի Կաթողիկե եկեղեցի • Վահրամ Պահլավունի • Բջնի, Ամբերդ, Մարմաշեն

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

287-330թթ.	Տրդատ III Մեծ:
298թ.	Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
301թ.	Քրիստոնեությունը հայտարարվում է Մեծ Հայքի թագավորության պետական կրոն:
330-338թթ.	Խոսրով III Կոտակ:
338-350թթ.	Տիրան Արշակունի:
350-368թթ.	Արշակ II:
370-374թթ.	Պապ Արշակունի:
371թ.	Ձիրավի ճակատամարտը:
374-378թթ.	Վարազդատ՝ Հայոց թագավոր:
387թ.	Մեծ Հայքի թագավորության բաժանումը Հռոմի և Պարսկաստանի միջև:
388-414թթ.	Վռամշապուհ՝ Հայոց թագավոր:
405թ.	Մեսրոպ Մաշտոցն ստեղծում է հայոց գրերը:
422-428թթ.	Արտաշես (Արտաշիր) Արշակունու գահակալությունը:
428թ.	Արշակունիների արքայատոհմի անկումը:
440թ. փետրվա-ի 17	Մեսրոպ Մաշտոցի մահը:
450-451թթ.	Վարդանանց պատերազմը:
451թ. մայիսի 26	Ավարայրի ճակատամարտը:
451թ.	Քաղկեդոնի տիեզերական ժողովը:
481-484թթ.	Վահանանց պատերազմը:
484թ.	Նվարսակի հաշտության պայմանագիրը:

506թ.	Դվինի առաջին եկեղեցական ժողովը:
554թ.	Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը:
571-572թթ.	Հակապարսկական ապստամբությունը Վարդան Կրտսեր Մամիկոնյանի գլխավորությամբ:
591թ.	Հայաստանի երկրորդ բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
618թ.	Ս. Հռիփսիմեի տաճարի կառուցումը:
640թ.	Արաբական առաջին արշավանքը Հայաստան:
643թ.	Արաբական երկրորդ արշավանքը:
VII դ. կեսեր	Ձվարթնոց տաճարի կառուցումը:
650թ.	Արաբական երրորդ արշավանքը:
652թ.	Հայ-արաբական պայմանագիրը:
703թ.	Հակաարաբական առաջին ապստամբությունը:
748-750թթ.	Հակաարաբական ապստամբությունը Գրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ:
774-775թթ.	Համաժողովրդական մեծ ապստամբությունն արաբական տիրապետության դեմ:
775թ. ապրիլի 24	Արձնիի ճակատամարտը:
850-855թթ.	Հակաարաբական ապստամբությունը:
885-1045թթ.	Բագրատունյաց թագավորությունը:
885-890թթ.	Աշոտ I Բագրատունի:
890-914թթ.	Սմբատ I Տիեզերակալ:
908-1021թթ.	Վասպուրականի թագավորությունը:
914-928թթ.	Աշոտ II Երկաթ:
921թ.	Սևանի ճակատամարտը:

928–953թթ.	Աբաս Բագրատունի:
948թ.	Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Աղթամար կղզուց Կարս:
953–977թթ.	Աշոտ III Ողորմած:
961թ.	Անին՝ Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք:
963-1065թթ.	Կարսի թագավորությունը:
977–990թթ.	Սմբատ II:
982-1113թթ.	Տաշիր-Զորագետի թագավորությունը:
987-1170թթ.	Սյունիքի թագավորությունը:
990–1020թթ.	Գագիկ I:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 3

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6

ԲԱԺԻՆ I

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԹԵՄԱ 1. ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 7

1. ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 7

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 10

3. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ 12

ԹԵՄԱ 2. ՊԱՅՔԱՐ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ 17

1. ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 17

2. ԱՐՇԱԿ II-Ի ԵՎ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ՋԱՆՔԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20

3. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ 27

ԹԵՄԱ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ V ԴԱՐՈՒՄ 34

1. ՊԱՐՍԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 34

2. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 36

3. ՎԱՀԱՆԱՆՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 43

ԹԵՄԱ 4. ՀԱՅԱՍՏԱՆԸ VI-IX ԴԱՐԵՐՈՒՄ 48

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ 48

2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ 53

3. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 57

ԹԵՄԱ 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ V-IX ԴԱՐԵՐՈՒՄ 70

1. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ԴՊՐՈՑԸ 70

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 73

3. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 76

4. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 78

ԲԱԺԻՆ II

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՋԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԹԵՄԱ 6. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 83

1–2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ

ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 83

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ X ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ XI ԴԱՐԻ

ՍԿԶԲՆԵՐԸ 91

**Բաբկեն Հարությունյան, Հայրապետ Մարգարյան,
Արտաշես Շահնազարյան, Վլադիմիր Բարխուդարյան,
Իգիթ Ղարիբյան, Պետրոս Հովհաննիսյան**

Հայոց պատմություն

Միջին դարեր

7-րդ դասարանի դասագիրք

Մաս 1

Շապիկի ձևավորումը՝ Միքայել Աբրահամյանի

Համակարգչային էջկապը՝ Միքայել Աբրահամյանի

Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Ղ. Փարպեցի 9, բն. 7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@manmar,am
www.manmar.am